


(47925)

4-62

Ի. Ն. Կենսայան

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
Պ Ա Յ Ք Ա Ր Ը
Դ Ա Կ Ի Թ Բ Ե Կ Ի
Գ Լ Խ Ա Կ Ո Ր Ո Ւ Թ Յ Ա Մ Բ



3(47.925)

4-62 Հ. Ա. ԿՆՅԱԶՅԱՆ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅԲԱՐԸ
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ
ԳԼԽԱԿՈՐՈՒԹՅԱՄԲ

9/16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 6 3

Մասնավան ընթերցողը Դավիթ Բեկի և Նրա գլխավորութ-
վամբ Սյունիքում ծավալված ժողովրդական-ազատագրական
պայքարի մասին հիմնականում գիտի գեղարվեստական գրա-
կանությունից:

Սույն զբրոյկում հանդամանորին տրված են այդ պայքարի
պատմությունը, նրա շարժի: ուժերը, պատմական ազդուրնե-
րի վերլուծությունը:

КНЯЗЯН АЙРАПЕТ АМБАКУМОВИЧ
ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА ПОД
ПРЕДВОДИТЕЛЬСТВОМ ДАВИ . БЕКА
(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат). Ереван, 1963

ԵՐԿՈՒ ԽՈՍԳ

Դավիթ Բեկի գլխավորությամբ XVIII դ. 20-ա-
կան րվականներին Սյունիքում ծավալված ժողո-
վրդական-ազատագրական պայքարը պարսկա-
կան և քուրճական բռնապետությունների դեմ՝ հայ
ժողովրդի հերոսական անցյալի փառավոր էջերից
մեկն է:

Տաղանդավոր զորավար, խաշոբ դիվանագետ ու
պետական գործիչ Դավիթ Բեկի գլխավորած այդ
հերոսամարտերում Սյունյաց լեռնցիները կարողա-
ցան ժամանակավորապես հասնել գրեթե անկախ
մի վիճակի: Դրան մեծ շափով նպաստեց այն, որ
XVIII դ. 20-ական րվականներին ազատագրական
պայքարի էին դուրս եկել ոչ միայն հայերը, այլև
Անդրկովկասի նրանց բախտակից ժողովուրդները՝
վրացիներն ու ադրբեջանցիները:

Շահական ու սուլթանական ռազմա-ֆեոդալա-
կան դեսպոտիզմի ծանր լծի տակ հեծող Անդրկով-

կասի ժողովուրդների ժողովրդական-ազատագրական պայքարի ծավալման գործին նպաստեց նաև Պետրոս Առաջինի Պարսկական արշավանքը:

Հայաստանում, ի հակակշիռ բուրժուականի և պարսկականի, ուժեղացավ ոռոսական օրինադրական, որը, հատկապես Իսրայել Օրիի անխնայ եռանդի ու հայրենանվեր գործունեության շնորհիվ, ամուր արմատներ էր գցել հայ իրականության մեջ, մասնավորապես այն ժամանակվա Հայաստանի հայաշատ վայրերում՝ Ղարաբաղում ու Սյունիքում:

Հրահրելով Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումները, Ռուսաստանը նախ և առաջ ցանկանում էր ընդարձակել իր ազդեցության սփյուռը և իր դիրքերն ամրապնդել Մերձավոր Արևելքում: Ստացվում էր այնպես, որ այդ ժողովուրդների բուն ազատագրության գործը, նրանց ձգտումները համընկնում էին Ռուսաստանի տրեստական ու ֆաղաֆական շահերի հետ Մերձավոր Արևելքում:

Անդրկովկասի ժողովուրդները, սակայն, այլ կերպ էին գնահատում ոռոսների ֆաղաֆականությունն իրենց նկատմամբ: Նրանք բուրժուա-պարսկական բռնապետություններից ազատագրվելու ուժով տեսնում էին Ռուսաստանից սպասվող օգուտության մեջ:

Մերձավոր Արևելքի նկատմամբ Ռուսաստանի շահագիտական ձգտումները հանդիպում էին եվրո-

պական պետությունների, առաջին հերթին Անգլիայի ու Ֆրանսիայի կատաղի դիմադրությանը, բրոնք ոչ մի պայմանով չէին ցանկանում Ռուսաստանի ուժեղացումը Մերձավոր Արևելքում: Եվ երբ Ռուսաստանին հարկադրեցին բավարարվել կասպիական ափերի նվաճումով ու դադարեցնել Պարսկական արշավանքը, Անդրկովկասի ժողովուրդները մնացին մեն-մենակ՝ տեղական խաների և օսմանյան անհրկու բանակի դեմ: Ռուսական ցարերը, սակայն, դեռ երկար տարիներ շարունակեցին զանազան հրովարտակների ու «մեմորիաների» միջոցով հուսադրել ու խոստումներ անել, իսկ Ղարաբաղի կամ Ղափանի միամիտ լեռնցիները հավատում էր արհայական այդ խոստումներին և մեծ «իմփրաքոռի» (իմպերատորի) անունը շուրթերին գոհվում օսմանյան սրից:

Անդրկովկասի ժողովուրդները պարսկական և բուրժուական սատրապների լծից իրենց ազատագրվելու հույսերը կապում էին նաև Արևմտյան Եվրոպայի հետ, սակայն այդ ակնկալությունների մեջ աստիճանաբար գերազանցում էր ոռոսական օրինադրական, որն իրեն արդարացրեց, բայց շուրջ մեկ դար հետո:

Անդրկովկասի երեք բախտակից ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ադրբեջանցիները պարսկա-օսմանյան զավթիչների դեմ մղած իրենց ազատագրական պայքարի ընթացքում հանդես եկ-

եկել բավականին սերտ կապի մեջ: Մեզ հասել են նրանց միջև եղած պայմանագրական պարտավորությունների մասին վավերագրեր: Սակայն ֆեոդալիզմին հատուկ մասնատվածությունը, ինչպես նաև ընդհանուր քչնամու ունեցած քվական չափազանց մեծ գերազանցությունը, արգելի էին հանդիսանում, որ նրանք հանախակի ռազմական օգնություն ցույց տան մեկմեկու:

Դավիթ Բեկի գլխավորած պայխարի մասին բավարար գաղափար կազմելու համար անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ նաև Ղարաբաղում տեղի ունեցած ազատագրական շարժումներին, քանի որ թե՛ Սյունիքում, և թե՛ Ղարաբաղում այդ շարժումները տեղի են ունեցել միաժամանակ և որոշ առումով կապված են միմյանց հետ: Տալով ռուսական կառավարության վարձագիծը Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումների նկատմամբ, նկարագրել ենք այն ընդհանուր ֆոնը, ներքին ու արտաքին սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, որոնք ծնեցին XVIII դ. 20-ական քվականների ազատագրական պայխարը, ապա հանգամանորեն շարադրել ենք Սյունիքում տեղի ունեցած բոլոր պատերազմական գործողությունները, հիմնականում պահպանելով այն հաջորդականությունը, որը տրված է Սանտիանոս Շահումյանի «Ընտիր պատմություն Դավիթ Բեկին և պատերազմաց հայոցն Խափանու, որք

եղե՛ն ընդդէմ Թուրքաց ի մերում Ժամանակի, այն է յամի Տեառն 1722, և Հայոց 1171» վերնագիրը կրող գրքում, որը XVIII դարի 20-ական քվականների սյունեցիների ազատագրական շարժման պատմության գրեթե միակ աղբյուրն է:

Սյունեցիների ազատագրական պայխարի առանձին հարցեր մի շարք մասնագետների կողմից բավականաչափ ուսումնասիրվել են, դավիթբեկագիտությունը շարունակում է իր պրպտումները ու հայտնաբերում նորանոր վավերագրեր, որոնք հրնարավորություն են տալիս լուսարանելու այդ շարժման բազմաթիվ մուր հարցեր:

Մեր մասսայական ընթերցողը Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայխարի մասին հիմնականում գաղափար է կազմել «Դավիթ Բեկ» և «Մխիթար սպարապետ» պատմական վեպերի միջոցով, վեպեր, որոնք չնայած պարունակում են պատմական շատ իրողություններ, բայց համեմված են բազմաթիվ ավանդություններով, ինչպես նաև պատմական անհշտություններով, և, հետևաբար, չեն տալիս այդ հզոր ժողովրդական պայխարի իրական ու ամբողջական պատկերը:

Այս գրքույկը մի փորձ է մեր ուժերը ներածին չափ, եղած գրականության և մինչև այժմ հայտնի վավերագրերի հիման վրա, տալ այդ շարժման քիչ թե շատ ամբողջական պատկերը, ընթերցող լայն նստաբեկությունը ծանոթացնել սյունեցիների ա-

գատագրական պայմարի իրական պատմության հետ:

Քանի որ ներկա գրույկը նկատի ունի ընթերցողների լայն շրջան, ուստի աշխատել ենք տեխնիկական բանաբաններով, և դրանք մեծ մասամբ տվել ենք աշխարհաբար քարգմանությամբ:

Սյունիք և Ղափան անունները գործածել ենք միևնույն նշանակությամբ, քանի որ այն ժամանակ Ղափան անվան տակ հասկացվում էր ոչ միայն Կապան գավառը, այլև ամբողջ Սյունիքը:

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ
20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Երկարատև ու արյունահեղ պատերազմներից հետո Իրանի Սեֆի շահը և Թուրքիայի սուլթան Մուրադ IV-ը 1639 թվականին կնքեցին Կասրի-Շիրինի հաշտությանը, որով Հյուսիս-արևելյան Հայաստանը ընկավ Իրանի, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Թուրքիայի տիրապետության տակ: Այս բաժանումը աննշան փոփոխություններով պահպանվեց մինչև XIX դարի 20-ական թվականների վերջը, մինչև Հայաստանի միացումը Ռուսաստանի հետ:

Չափազանց ծանր ու դժան էր ազգային ու կրոնական ճնշման, կեղեքումների, հարստահարությունների այն քաղաքականությունը, որ վարում էին հայ ժողովրդի նկատմամբ: Հատկապես անտանելի էր գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը: Բազմաթիվ հարկերն ու տուրքերը,

Թուրք ու պարսիկ սաարապների անլուր բռնություններն ու կամայականությունները գյուղացիութեան և ընդհանրապես ամբողջ ժողովրդի մեջ առաջացնում էին դասակարգային ու սոցիալական ընդվզումներ, որոնք ի վերջո հանդեպին ժողովրդական-ազատագրական պայքարի:

Քաղաքական իրավունքներից զուրկ հայ ժողովուրդը հավասարապես ճնշվում էր թե՛ թուրքական անգութ փաշաների և թե՛ պարսկական դաժան խաների, ինչպես նաև բեկերի ու ազալարների կողմից:

Համեմատաբար ծանր էր թուրքական սաղմաֆեոդալական բռնապետութեան ծանր դարձապարիտակ հեծող ժողովրդի վիճակը: Հայ աշխատավորական մասսաները կեղեքվում ու կողոպտվում էին անասելի շափերով: Օսմանյան սուլթանները կիրառում էին ազգային խտրականության, կրոնական հալածանքների, բռնի կրոնափոխությունների, կալվածական հափշտակությունների ամենադաժան, վայրենի ձևեր, զենքի ու ժով խլում էին գեղեցիկ աղջիկներին՝ հարեմների համար, իսկ զեղեցիկ ու առողջ պատանիներին՝ ենիչերական բունակը համալրելու համար:

Շատ պատկերավոր է նկարագրում Րաֆֆին հարեմի գերուն. Ասլամադ-Կուլի խանի հարեմի գեղեցիկուհիներից մեկը՝ ազատասեր Հեկադայի դուստր Զուբեիդան, խոսելով հարեմի կնոջ վի-

ճակի մասին, ասում է. «...Ինձ զարդարում են իմ իշխանի զվարճութեան համար: Ես զգացմունքից զուրկ մի առարկա եմ: Աշխարհի կործանման բուպեում անգամ, երբ իմ տերը ցանկանում է ինձանով ուրախանալ, ես պիտի խեղդեմ իմ սրտում իմ բոլոր զարհուրանքը և պիտի պատրաստվեմ նրան ուրախացնելու»¹: Այս վիճակում էին բռնակալների զազանային կրքերի հարեմական զոհերը:

Հրով ու սրով նվաճված բոլոր երկրներում օսմանյան թուրքերն ու պարսիկները հաստատում էին կառավարման զազանային սեփմ, բացարձակ կամայականություն, բռնություն, ստրկացում, դաժան ու անլուր ճնշումներ, կիրառում էին բռնի ասիմիլյացիայի, ջարդերի ու ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն:

Այս կարգի ճնշումներից ու կեղեքումներից բացի, որոնց մշտապես ենթակա էր իրավազուրկ գյուղացին, գանձվում էին նաև բազմաթիվ ուղղակի և անուղղակի հարկեր: Վճարվող հիմնական հարկերն էին՝ տասանորդ, զլխահարկ, հողային, մաքսային, զինվորական տուրքեր, հարկեր ճանապարհներից, ջրի, աղի, մետաքսի, ծխախոտի, դրոշմաթղթի, ուխարների և այլ կենդանիների, շենքերի, ամուսնություն համար, զանազան այլ տուրքեր արհեստավորներից, խանութպաններից,

¹ Րաֆֆի, Դավիթ Բեկ, Հայպետրատ, 1956, էջ 415:

կառավարողներից, որսորդներից, ճանապարհորդներից և այլն¹։

Միայն հարկն ու տուրքը չէր, որ թշվառացնում էր հային։ Թուրքական բարբարոսները ոչ միայն կոտորում ու զերի էին տանում նրան, այլև վաճառում էին որպես ստրուկ։ Չամչլանը 1723 թվականի թուրքական մի կոտորածի մասին գրում է, որ կոտորածից ու թալանից հետո թուրքերը բազմաթիվ զերիներ տարան, հատկապես հայեր, և Թուրքիայի բաղաքներում, մեծ մասամբ Կոստանդնուպոլսի շուկաներում վաճառեցին որպես ստրուկներ²։

Հայ գյուղացին իր զլխի, իր տան տերը չէր, պարսիկը կամ թուրքը արատավորում էր նրա պատիվը, անպատիժ կերպով խլում էր նրա ունեցվածքը, նրա անասունը, այն ամենը, ինչ լավ էր։ Հայ գյուղացու ծանր վիճակի մասին պերճախոս կերպով ասում է այն նամակը, որ նախալեւանի գյուղերից մի կին 1725 թվականի հունիսի 15-ին գրում է Մոսկվա՝ իր որդիներին.

¹ Տես, Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955, էջ 55։

² Տես, Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 18։ Հետագայում՝ Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ...։

«...Այ աստուծոյ բանտաք, այս ինչ է մեր քաշում շարչարանքն, ոչ մեռեալ ենք, ոչ կենդանի... ամա՛ն, աստծոյ խաթրին համար, եկիք, հասիք։ Աստուծոյ շարաթն մին անգամ թալքի են անում... Քրիստոսի շարչարանքն զմեզ տալիս էր ՚ն, այլ իրզը սուրաթ չի մնացել... Ամա՛ն, ամենայն բան գրելն մուսպաթ չի, միթիլ արիք, յիմացիք, այս ի՛նչ կրակ ա վիլիաթիս վրա։ Այլ զեզ աւանդանլուզ (շենք—Ա. Ա.) չի մնացել, ամէնն չէսիք։ յաղաման ին արալ (զերի են արիլ—Ա. Ա.), մնացել այ միայն մեր զեզն, աստված փրկի, տէրն ազատի, սարը քար ասկար կոխած է...։

Եզն չի կայ, էհտիբար չի կայ, փող չի կայ՝ թէ Լզն անինք, զեզումն տասը Եզն չի կայ, ամէնն տարած են, կորցրած։ Գեզին սոխախներն շորս թարաֆն, ամէն քուշաբանտ է (շրջապատված է—Ա. Ա.), ոչ գիշերն ունենք տատարք, ոչ ցերեկն, շիտակ որ ջիպ փուշացել էր ՚նք...»¹։

Պետական հարկերի դանձումը կենտրոնական իշխանությունը սովորաբար հանձնում էր տեղական կառավարիչներին՝ խաներին, բեկերին, փաշաներին, իսկ սրանք հարկահավաքների միջոցով հաճախ դիմելով սպառնալիքի ու զենքի ուժին, դանձում էին կրկնակի ու եռակի չափերով։

Հարկահանություն դաժան ուժովի ու հարկերի

¹ Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ... էջ 16։

մտահն մանրամասն խոսում է ժամանակակից պատմիչը՝ Նսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանը¹։

Սակայն հայ ժողովուրդը ստրուկի նման չէր տանում օտարի լուծը։ Երկար ժամանակ կորցրած լինելով իր պետականությունը նա հարմար առիթը բաց չէր թողնում ընդզվելու բնությունների դեմ։ Դարեր շարունակ ենթարկվելով անասելի ճնշումների ու կեղեքումների, իր վրա կրելով ասիմիլյացիայի ու ֆիզիկական բնաջնջման վտանգը և շահական ու սուլթանական բնապետություններից իր ազատագրության հույսերի ու տենչերի իրականացումը կապելով Ռուսաստանից սպասվող օգնության հետ, հայ ժողովուրդը վրաց ու ազդերնջանական ժողովուրդների հետ միասին ծավալեց ժողովրդական-ազատագրական լայն պայքար։ Անդրկովկասի բախտակից ժողովուրդներն զգում էին, որ միայն իրենց ուժերով չեն կարող պայքարել ու հաղթանակի հասնել երկու հզոր պետությունների՝ օսմանյան Թուրքիայի և Իրանի դեմ։ Ահա թե ինչու նրանք ընտրում են Ռուսաստանի հովանավորության ներքո ազատագրության հասնելու ուղին։

Ռուսական այս օրինատացիան նոր չէր։ Այն ձևավորվել է դարերի ընթացքում, աստիճանաբար։

¹ Տես, Նսայի կաթողիկոս, Պատմություն համառոտ Ազոտանից նրերի, Երուսաղեմ, 1868, էջ 15—16։

Ռուսական-կենտրոնացված պետությունը առաջադիմական մեծ դեր է խաղացել ՍՍՌՄ գրեթե բոլոր ժողովուրդների պատմական ճակատագրում, նա դեպի իրեն է ձգել հանուն անկախության պայքարող փոքր ժողովուրդներին։

Հայ-ռուսական քաղաքական կապերը միանգամից չեն ձևավորվել որպես ռուսական օրինատացիա, այդ կապերը սկսվում են դեռևս XVI դարից, իսկ որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի ռուսական օրինատացիա ձևավորվում են XVII դարի երկրորդ կեսից՝ որպես հետևանք սոցիալ-տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացման նոր պայմանների և Մերձավոր Արևելքում ստեղծված ուժերի նոր հարաբերակցության։

Սակայն ռուսական ցարիզմի հիմնական նպատակը, իհարկե, Թուրքիայի ու Իրանի լծի տակ հեծող Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրելը չէր, նա ինքը ծայրամասերի ժողովուրդներին ենթարկում էր ծանր շահագործման ու հարստահարությունների, չիշտ է, ոչ այնպես, ինչպես օսմանցին ու պարսիկը։ Ռուսաստանը պաշտպանում էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական շարժումները, քանի որ դրանք ուղղված էին ընդհանուր թշնամուձ Թուրքիայի և Իրանի դեմ։

XVIII դարի 20-ական թվականներին հայ ժողովրդական ազատագրական պայքարի հիմնական

օջախները Ղարաբաղը և Սյունիքն էին: Մեզ հասել են բազմաթիվ վավերագրեր, որոնք լիովին ապացուցում են, որ զարաբաղցիներն ունեցել են ռուսական օրիննտացիա, իսկ սյունեցիների ռուսական օրիննտացիայի մասին վավերագրեր քիչ կան: Այդ մասին մի քանի տեղեկություններ հաղորդում է Պետրոս 1-ի պատվիրակ Իվան Կարապետը, հայտնաբերված է նաև Մխիթար Բեկի (սպարապետի) խնդրագիրը ռուսական արքունիքին. իսկ շարժման ղեկավարի՝ Գավթի Բեկի կողմից շի եղել և ոչ մի գրավոր դիմում կամ խնդրանք ուղղված ռուսաց կայսրերին: Հետագա շարադրանքում այս մասին մանրամասն կխոսվի:

Որոշակի ռուսական օրիննտացիա են ունեցել Արևելյան Հայաստանի նաև այլ շրջաններ, այսպես. 1) երբ երևանցիները լսում են, որ ցարի պատվիրակը (Իվան Կարապետը) եկել է Գանձասար, փորձում են հարաբերությունների մեջ մըտնել նրա հետ, սակայն դա հնարավոր չի լինում, որովհետև վրա հասած թուրքական բանակը պաշարում է քաղաքը: 2) Գեղարքունիքի բնակիչները 1724 թվականի մարտի 16-ին ռուսական արքունիք են ուղարկել մի հավատարմագիր, որտեղ հայտնում են, որ իրենք պատրաստ են ընդունել ռուսական հպատակություն: Հավատարմագիրն ստորագրել են Մելիք Սարգիսջանը և 30 գյուղերի

ներկայացուցիչներ՝ բյոխվա Բեկնաղարը, բյոխվա Շահնավաղը, բյոխվա Յավրին, բյոխվա Շարին և այլն: 3) էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցու տեղապահ Հովասափ վարդապետը լսելով Իվան Կարապետի Ղարաբաղ գալու մասին, Ղարաբաղ՝ Ավան, Թարխան և Միրզա յուզբաշիներին հայտնում է էջմիածնի համերաշխությունը և խնդրում մանրամասն տեղեկություններ ուղարկել, թե Ռուսաստանը իրո՞ք պետք է օգնության գա բազմաշարքար հայ ժողովրդին¹:

Վրաստանը նույնպես ունեցել է շեշտված ռուսական օրիննտացիա: Ահա այդ մասին պահպանված բազմաթիվ վավերագրերից մեկը. 1724 թ. հունիսի 5-ին Գյուլիստանի նսայի յուզբաշին ռուսական արքունիքին ուղղված գրություն մեջ գրում է, որ «Վախթանգի, Շահնավաղի, Մուհամեդ-Ղուլի խանի և մեր հայոց խոսքը մեկ է—ձերդ ողորմածությունն հնր սպասում»²:

Աստիճանաբար հայ ժողովրդի մեջ արմատավորվում է այն հավատը, որ ազատագրական պայքարի հաղթանակի համար միայն Ռուսաստանից կարելի է ստանալ իրական օգնություն: Այդ հավատը հատկապես ուժեղանում է Պետրոս կայսեր վարած արևելյան քաղաքականության շնորհիվ:

1 Տես, Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 50:

2 Նույն տեղում, էջ 66:

կրք Ռուսաստանն սկսում է ակտիվորեն միջամտել Մերձավոր Արևելքի գործերին:

Անդրկովկասում ռուսական օրիննտացիայի, ինչպես նաև ազատագրական շարժումների ուժեղացմանը մեծապես նպաստում է Պետրոս Մեծի Կասպիական արշավանքը:

Ելնելով իր տնտեսական ու քաղաքական շահերից, Ռուսաստանը ձգտում էր ամրապնդել իր հարավային սահմանները: Այդ նպատակի իրականացման համար նա պայքարում էր Քուրքիայի և Իրանի դեմ, դրանով հենց օրջնկտիվորեն նպաստելով Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարին:

Անդրկովկասի նվաճումը Ռուսաստանի կողմից տեղի ժողովուրդների համար կարող էր ունենալ շատ մեծ դրական նշանակություն՝ Անդրկովկասի համար կընդարձակվեր ապրանքային շրջանառության ոլորտը, Անդրկովկասը կշփվեր ռուսական առաջավոր կուլտուրայի, իսկ նրա միջոցով նաև եվրոպական կուլտուրայի հետ, հասարակական կյանքն իր նահապետական ինքնամփոփվածության ձևերից ավելի շուտ կարող էր ազատագրվել, և, վերջապես, կրոնական խտրականություններին ու ասիականությանը հատուկ բնություններին վերջ կտրվեր, Անդրկովկասի ժողովուրդները կյանքի համեմատաբար ավելի ազատ ու ապահով պայմաններ կունենային, ապահով կլինեին պարսկա-

կան ու թուրքական ավերի: Հարձակումներից ու կոտորածներից:

XVIII դ. 20-ական թվականներին Ռուսաստանի նպատակների իրականացման համար քաղաքական տեսակետից ժամանակը նպաստավոր էր: Սկսվել էին մի շարք հակաիրանական շարժումներ: Շահնշահների պետությունը զնում էր դեպի անկում, խիստ ուռճացած էր կենտրոնական ապարատը, որի պահպանման համար պահանջվում էին մեծ միջոցներ, ծայրահեղ աստիճանի էր հասել կաշառակերությունը, բոլոր պաշտոնները դարձել էին վաճառովի, ով շատ էր վճարում՝ նա պաշտոն էր ստանում, իսկ խոշոր ֆեոդալները՝ խաները, անսնելով կենտրոնական իշխանության թուլությունը, ավելի շատ էին հանդես բերում կենտրոնախույս տրամադրություններ: Այլևս չկար երբեմնի աշխարհակալ Իրանի հզոր բանակը, այն թուլանում ու քայքայվում էր: Գնալով ուժեղանում են միջֆեոդալական բախումներն ու ասպատակությունները, անիշխանությունը: Իրանի հպատակ ժողովուրդները, օգտվելով սահղծված բարենպաստ իրադրությունից, ամենուրեք ոտքի են ելնում հանուն իրենց ազգային անկախության: Կենտրոնական իշխանության դեմ ապստամբում են ավզանները, բուրգ ցեղապետերը, հյուսիսից ուղբեկներն ու թուրքմենները իրենց ասպատակություններով ավերում են Խորասանը, հարավում ապստամբում

են Լորիստանի և Խուզիստանի թափառական ցեղերը: Մինչև ժամանակ Մասկադի իմամը հարձակվում է Պարսից ծոցի կղզիների վրա և գրավում, իսկ Կովկասի լեռնաբնակների կիսավայրենի հորդաները, հիմնականում լեզգիներ, Սուրխայի, Ծամխալի, Գուլիստանի և Թուրքիայի մյուս գրածո քնոզալների զլխավորությամբ հեղեղում են Անդրկովկասում պարսկական նահանգներն ու հասնում մինչև Սևանա լիճ: Սակայն իր հոգեվարքն ապրող Իրանի համար ամենից վտանգավորը ավղանական շարժումն էր:

Պարսկական պետության զլուխ կանգնած էր թուլամորթ ու անընդունակ շահ Սուլթան-Հյուսեյնը (1694—1722 թթ.): Շահի շատ դիպուկ բնութագիրը ավել է Իրանում Պետրոս կայսեր պատվիրակ Ա. Վոլինսկին: Նա ասում է, որ Իրանի ներկայիս շահը ոչ թե իր հպատակների վրա է իշխում, այլ իր հպատակների հպատակն է. այդպիսի հիմար դժվար է գտնել նույնիսկ հասարակ մարդկանց մեջ, իսկ թագակիրների մեջ՝ առավել ևս: Նա ամեն բանում լսում է իր տեղակալ Ահմադ Գելեթին, որն ամեն մի անասունից էլ բխամիտ է¹:

1722 թվականի սեպտեմբերի 22-ին Մինաս

Տե՛ս, Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. VI—VII, հետագայում՝ Эзов.

վարդապետը Պետերբուրգ ուղարկած մի ղեկուցագրում գրում է, որ Նորին կայսերական մեծությունը սրանից ավելի հարմար ժամանակ չի կարող գտնել Իրանի վրա արշավելու համար: Ապա հայտնում է նաև, որ հայերն այժմ պատրաստի ունեն 40.000 զինվոր և այդքան էլ կարող են հավաքել, հենց որ կայսրը ժամանի¹:

Շահ Սուլթան-Հյուսեյնի դահակալության վերջին տարիներին որպես ապստամբությունների բույն, ինչպես նշեցինք, առանձնապես նշանավոր էր Ավղանստանն իր Ղանդահար քաղաքով, մանավանդ այն ժամանակ, երբ ապստամբության զլուխ է անցնում Միր-Վեյսը:

Միր-Վեյսը 1709 թվականին Ղանդահարում կոտորում է պարսկական կայսրը, սպանում Ավղանստանի կառավարիչ Գուրգին Խանին (Գուրգին խանը Քարթալինայի Գեորգ XI թագավորն էր) և Ավղանստանն անկախ է հայտարարում Իրանից: 1711 թվականին Իրանի կենտրոնական իշխանությունը մի զորաբանակ է ուղարկում ավղանների դեմ, սակայն ավղանները զլխովին ջարդում են նրանց: Ավղանական շարժումը ավելի սպառնական բնույթ է ստանում, երբ այդ շարժման զլուխ անցնում է Միր-Վեյսի որդի Միր-Մահմուդը: Կարծես խոսքները մեկ արած՝ ամբողջ սուննի մահմեդա-

¹ Эзов, стр. 333.

կան աշխարհը (թուրքեր, լեզգիներ, ավղաններ) հարձակվում էր երբեմնի աշխարհակալ շիա Իրանի վրա:

Ահա այդ ժամանակ հայերի մեջ նույնպես սկսվում են որոշ խլրտումներ, որոնցից ցանկանում է օգտվել ռուսաց ցարը: 1716 թվականին Պետրոս Առաջինը Հայաստան է ուղարկում Մինաս վարդապետին և հրահանգում է նրան, որ հուսադրի հայերին, որպեսզի նրանք պատրաստվեն՝ Իրանի դեմ ռուսական արշավանքի ժամանակ ուսնելուն օգնելու: Փոխարենը նա խոստանում էր աջակցել հայերին նրանց ազատագրական պայքարում: Մինաս վարդապետը գալիս է Հայաստան և նախ լինում էջմիածնում, սակայն էջմիածինը չի ուզում Պետրոս Մեծի նամակով և չի ուզում մասնակցել հայերի ազատագրական շարժմանը: Ըստ էության, Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը վախենում էր պարսիկների վրեժխնդրությունից:

Այնուհետև Մինաս վարդապետը ուղևորվում է Ղարաբաղ՝ Գանձասար: Այստեղ արդեն Եսայի կաթողիկոսը գրկաբաց է ընդունում նրան և ուրախությունից Մինաս վարդապետին շնորհում արքեպիսկոպոսի աստիճան: Հյուսիսի հզոր կայսեր նամակը մեծ ոգևորություն է առաջացնում Գանձասարում. տեղի է ունենում մի խորհրդակցություն, որը ողջունում է Պետրոս Մեծի ձևանարկած

քայլերը: Խորհրդակցության անունից երևանի կաթողիկոսը մի ընդարձակ սյատասխան նամակ է ուղարկում ցարին, որտեղ գրում է, որ մենք հոժար կամքով ցանկանում ենք մտնել ռուսաց հովանավորության տակ, եթե այդ բանը հաճելի է ռուսաց տերության համար¹: Դա Գանձասարի կաթողիկոսի առաջին գրությունն էր ուղղված ռուսաց կայսրին: Հայրենասեր կաթողիկոսն այնուհետև մինչև իր մահը (1728 թ.) շարունակեց ապարդյուն աղերսագրեր ուղարկել ռուսաց արքունիքին:

Պետրոս Մեծի հուսադրական խոսքերն ուժեղացնում են հայերի ապստամբական տրամադրությունները: Հաստենանում է հայկական ընդհանուր զինվորություն կազմելու գաղափարը, որի իրականացման համար անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ: Այդպիսի միջոցներ շատ ուներ հարուստ ու վաճառաշահ Շամախի քաղաքը, որը, սակայն, Եսայի կաթողիկոսը զիջել էր էջմիածնին, նույնիսկ իր հպատակությունն էլ էր հայտնել, որպեսզի դրանով ակտիվացներ էջմիածնի դիրքը հոգուտ շարժման: Այժմ արդեն անհրաժեշտությունը նորից երևան է հանում Շամախու թեմի հարցը, և 1719 թվականին Եսային կրկին դնում է էջմիածին ու Աստվածատուր կաթողիկոսից մի կերպ հոտ է ստանում Շամախու թեմը: 1720 թվականին Աստ-

¹ Эзов, стр. 316.

վածատուր կաթողիկոսը հատուկ կոնդակով Գան-
ձասարին է հանձնում նաև Գանձակի, Նախիջևանի,
Ազուլխսի, Ղափանի և Թիֆլիսի թեմերը¹: Եսայի
կաթողիկոսի նյութական միջոցներն ապահովված
էին: Սակայն Գանձասարն ուներ նաև մի այլ ներ-
քին դժվարություն: Դա հեռակալն էր. XVII դարի
վերջերում Զրարերդ գավառի Մեծ-Շեն պուղի
Սարգիս քահանայի որդի Սիմնոն եպիսկոպոսը
Մուսվ լեռան անտառապատ մի վայրում կառու-
ցեց Երից-Մանկանց վանքը, հաստատվեց այնտեղ
և ապա ինքնագլուխ կաթողիկոս դառնալով սկիզբ
դրեց Գանձասարի դեմ ուղղված հակաթողությունը:
էջմիածնի միջամտությամբ Սիմնոնը պարտավոր-
վեց, որ իրենից հետո իր տոհմից այլևս ոչ ոք
չպետք է կաթողիկոս դառնա: Բայց 1705 թվակա-
նին, նրա մահից հետո, նրան հաջորդեց Ներսեսը,
որը խոջընդոտ դարձավ Եսայի կաթողիկոսի գոր-
ծունեությունը: Վերջիվերջո, հանուն հայկական
ընդհանուր գործի, Եսային հաշտվեց Ներսեսի հետ,
իսկ հետագայում Ներսեսը նույնպես դարձավ ա-
զատագրական պայքարի ակտիվ ղեկավարներից
մեկը. մեզ հասել են Ներսեսի ստորագրությամբ
բազմաթիվ դիմումներ ու նամակներ՝ ուղղված ու-
սաց արքունիքին:

¹ Տես, Մաղաբիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապա-
տում, մաս Բ, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 2818:

Այս պայմաններում շարունակվում էին լեզգի-
ների հարձակումները: 1719 թվականին լեզգինե-
րի գլխավորներից Սուրխայը անցնում է Թիֆլիսի
մոտից և իր հրոսակներով հնդեղում ամբողջ Կա-
խեթն ու Լոռին: Լեզգիներն անխնա կոտորում էին
խաղաղ բնակչությանը, բռնի մահամեղականացնում
նրանց, իսկ Մուհամեդի հավատը մերժողներին
լցնում էին ցորենի դատարկ հորերի մեջ ու հողով
ծածկում¹, կանանց, տղաներին ու աղջիկներին
գերի էին տանում:

1721 թվականին լեզգիները Գուռլի բեկի գլխա-
վորությամբ արշավեցին դեպի Քուռ գետի հովի-
տը, ապա Շամախի: Այս արշավների մասին Եսա-
յի կաթողիկոսը պատմում է, որ լեռնականները 12
օրվա կռիվներից հետո 1721 թվականի օգոստո-
սին դրավում են Շամախին և սպանում Հյուսեին
խանին: Լեռնականները կողոպտում են փարթամ
քաղաքի անբավ հարստությունները, կոտորում
հայ, աղբբեջանցի, պարսիկ բնակչությանը, վերց-
նում են մեծ թվով գերիներ ու վերագառնում²:
Միայն ռուս վաճառականները 500 հազար ռուբլու
վնաս կրեցին:

¹ Տես, Մաղաբիա արքեպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմու-
թիւն Աղուանից, հատ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 83—84:

² Տես, Եսայի կաթողիկոս, Պատմութիւն համառօտ Աղուա-
նից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 31—34:

Յրևանի և Գանձակի խաները 1721 թվականի աշնանը հավաքեցին իրենց զորքերը լեզգիների հակառակորդ տալու համար: Նրանք եկան բանակեցին Քարթառ գետի ափին՝ Բարդա գյուղի մոտ (դա գտնվում է Աղվանից աշխարհի հին մայրաքաղաք Պարտավի տեղում), ապա օգնություն խնդրեցին շահ Սուլթան-Հյուսեինից, սակայն վերջինս զբաղված էր իր երկրուն գահը ավանաններից պաշտպանելով, և չկարողացավ օգնություն ցույց տալ: Մի գիշեր անցնելով գետը, լեզգիները կոտորեցին պարսկական զորքը, վերցրին մեծ թվով գերիներ ու ետ վերադարձան:

Հայ ժողովուրդը չազատվեց լեզգիների խժոժություններից: 1722 թվականի գարնանը լեռնաբնակ հրոսակներն ավելի մեծ ուժերով ցած իջան լեռներից և եկան բանակեցին Մուղանի գաշտում: Իրանի Չարխանի խանը, որը բանակ էր դրել Ղարաբաղի սահմաններում և պետք է պաշտպաներ երկիրը արտաքին հարձակումներից, լսելով այդ մասին՝ փախչում է այնտեղից: Լեզգիները անարգել մտնում են Դիլակ գավառը, նրանց արշավանքը վերածվում է ավազակային առաքատակության: Դիլակում եղած պարսիկները միանում են հայերի հետ և համառ դիմադրություն ցույց տալիս լեզգիներին, սակայն արդյունքը փոքր էր, լեզգիները կատարում են իրենց սովորական կոտորածն ու կողոպուտը և շարժվում դեպի Վարանդաշի գա-

վառը: Սակայն Վարանդաշի մեկը Բաղրը ընծաներ տվեց նրանց և ազատեց իր ամբողջ երկիրն ու Դիլակից բերված գերիների կեսը: Ավելի վատ եղավ հաշն գավառի վիճակը, որտեղ և գտնվում էր Գանձասարի վանքը: Իսկ Ջրաբերգ գավառում հայ երիտասարդները զինվել ու բարձրացել էին լեռները. նրանք կարողացան ոչ միայն դիմադրել լեզգիներին, այլև գերիների մի մասին ազատեցին:

Լեռներում ապաստանած այդ զինված խմբերը միացան և կազմեցին հայկական զինվորությունը: Սա արդեն ամբողջական, կանոնավոր բանակի կերպարանք էր ընդունում, իսկ մինչ այդ ամեն մի մեկը ուներ իր փոքրիկ զինվորական ուժը: Ղարաբաղում այն ժամանակ կար 5 մեկիբություն՝ Ջրաբերգի, Վարանդաշի, Գյուլիստանի, հաշնի և Դիլակի: Այս մեկիբություններում էլ հենց կազմավորվում է հայ զինվորությունը: Այդ զինական ուժերի մասին Պետրոս Մեծին ուղարկած իրենց նամակում Ղարաբաղի 4 մեկիբներ՝ Նասիին, Շիրվանը, Սարգիսը և Հովսեփը պրում են¹, որ արդեն ունեն 10—12 հազար զորք, լեռներում սղնախ-

1 Անհրաժեշտ ենք համարում որոշ կրճատումներով բերել մեկիբների այդ նամակը՝ ամբողջական գաղափար կազմելու համար:

«Կայսերակապ նման մեծին Ապկարու և կոստանգիանոսսի, շքեղակապ զարգարեալ փառօր, տիեզերակալ թագաւորին հրահասցնու Տէր Պետրէի»:

ներ¹ են կազմել, մի շարք հազթանակներ են տարել լեզգիների ու թուրքերի դեմ, մեծ օգնություն են ստացել վրաց Վախթանգ թագավորից և սպասում են ցարի գալստյանը:

Մեկիքներին նամակում նշված հայ զինվորական ուժերը իրենցից չէին ներկայացնում Ղարաբաղի ամբողջ հայ զինվորությունը: Նրանց վկայությունը վերաբերում է Ջրաբերդ և Գյուլիստան գավառներում (կամ Մոավի լեռնաշխարհում) եղած զինվորական ուժերին, որոնք բնդհանուր անունով կոչվում էին Մեծ սղնախ: Հայ զինվորության կազմա-

...և մերումս անճար մնալով ձևոս ավար միմեանց... Ժ և ԺԲԹ (10 և 12 հազար) մարդ ժողովեցանք, պատերազմ մտանք կամ թէ լազկոյ հետ կամ թե տանս Աղուանից թուրքաց հետ. ամուր ծայրս քարանց սղնաղ կապեցանք ի մեծի թագաւորից սուրբ աշօթին շատ կտորումն և յաղթովին և մք ատեալ ի վերայ թուրքաց, մնացեալ և մք տարածեալ ձևոս մեր առ Աստուած վասն մեծի տիեզերակալ թագաւորից: Ես Տփխիսու Վախթանկ խանն շատ օգնովին է՛սա մեզ անթվելի, որ զրով չէ պատմելոյ. և մեծաւ աղաչանօք հայցեմք ի մեծ տէրութեանէդ որ և ևս հող և մոխիր Եսալիս Պարտալու, Շրվանն և Սարգիս Չարապերթու, մեկիք Յոսէփն ի Գանճալու այս Դ (4) մարդկանցն յատուկ յատուկ իրազամ գրեալ և կնքեալ շնորհես վասն մերում անուանաւէր երկրացս որ հասանէ մեզ, և մեք ի զօրութենէդ քումմէ անուամբ զօրութիւն և կապեմք գրէ՛, մենամարտեմք թշնամոյն, մինչև ի գալուստ թագաւորին...» (Տես, ԶՅՅՅ, ԵՐ. 341):

¹ Սղնախ նշանակում է բանակատեղի, ամբույնուն, օսգմական միավորում:

վորման գործում հայերին նուանդուն կերպով օգնում էր վրաց Վախթանգ VI թագավորը:

Մեծ սղնախի նման բանակներ կազմակերպվում են նաև Քիրսի լեռներում՝ Շուշի քաղաքի շրջակայքում և Ղափանում: Այս երեքից ամենից նշանավոր գործեր կատարեց Ղափանի հայ զինվորությունը Գավիթ Բեկի գլխավորությամբ:

Հայ զինվորության բնդհանուր բանակը Ղարաբաղում ըստ Եղուլի ուսումնասիրությունների 40 հազար էր, իսկ ըստ մի այլ աղբյուրի («Ժամանակագրութիւն Պետրոս զի Սարգիս Գիլաննիցի»)՝ 60 հազար: Ելնելով այն ժամանակվա Ղարաբաղի բրնակչության թվից, կարծում ենք, որ հավանականը 40 հազարն է:

Այս նույն ժամանակ ավղանների առաջնորդ Միր-Մահմուդը, ինչպես արդեն նշել ենք, շարունակելով իր հազթական ապստամբությունը՝ գրավում է պարսկական բաղամաթիվ գյուղեր ու քաղաքներ և հասնում Սպահան: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Գյուլնարաթի մոտ, 1722 թվականի փետրվարի 26-ին: Պարսկական ուժերը երեք անգամ գերազանցում էին ավղաններին, սակայն գլխովին ջախջախվեցին: Շահը փակվեց Սպահանի ամուր միջնաբերդում և մոտ 9 ամիս գլիմացավ:

Սպահանը պաշարվեց ավղանների կողմից:

Շահի որդին՝ Թահմազը, կարողացավ փախչել

Ղազվին, և աշխատում էր երկրի հյուսիսային շրջաններում զինվորական ուժեր հավաքել Սպահանը փրկելու համար: Սակայն նա էլ հոր նման ապիկարի մեկն էր և հազիվ կարողացավ 400 հոգի հավաքել: Անհաջող անցան նաև դրամի ուժով պաշարումը վերացնելու ուղղությամբ շահ Սուլթան-Հյուսեինի փորձերը:

Սպահանի մոտ գանվուղ հարուստ ու փարթև մոր-Ջուղան, որի բնակչության գերակշռող մասը հայերն էին, Միր-Մահմուդը ստսկալի ավերման ու կողոպուտի ենթարկեց և մեծ տուգանք գանձեց շուղայեցիներից:

Պետրոս Մեծը աշխատում է օգտվել ստեղծված նպաստավոր իրադրություններից:

1721 թվականի օգոստոսի 30-ին մուսաստանը Եվեղիայի հետ կնքում է Նիշադաթի հաշտությունը, որով իր ձեռքերն ազատում է հյուսիսում և սկսում է եռանդուն կերպով պատրաստվել Պարսկական արշավանքին: Նա իր գեսպան Բորխա Տուրկեստանովին ուղարկում է Վախթանգ VI-ի մոտ, որպեսզի վերջինս հոկտեմբերին հայ-վրացական ուժերով միանա իրեն, իբր քրիստոնյա ժողովուրդներին մահմեդական լծից ազատելու համար: Միաժամանակ, Պետրոս Մեծն ի լուր աշխարհի հայտարարեց, թե զնում է Շամախի՝ լեզգիների պատժելու համար, որոնք իրենց արշավանքներով

մեծ վնասներ էին հասցրել ռուս առևտրականներին:

Ռուսական կառավարության իսկական նպատակների մասին որոշակի գաղափար տալիս է հետևյալ վավերագիրը. Պետրոսը 1722 թվականի հունիսի 25-ին Իրանում իր հյուպատոս Ավրամովին գրում էր. «Առաջարկի՛ր հին կամ նոր շահին, կամ ո՛ւմ կզանես լիազորություն ունեցող, որ մենք զբնում ենք զեպի Շամախի ոչ թե Իրանի դեմ պատերազմելու, այլ ապստամբներին՝ ոչնչացնելու համար, որոնք մեզ վնասներ պատճառեցին և եթե իրանական կառավարությանը ներկա ծայրահեղ քայքայված դրության մեջ հարկավոր է օգնություն, մենք պատրաստ ենք օգնել և մաքրել երկիրը բոլոր թշնամիներից, նորից հաստատել պարսից մշտական տիրապետությունը, եթե դրա փոխարեն նա մեզ կզիջի Կասպից ծովի ափում գտնվող մի բանի նահանգները. որովհետև զիտենք, որ եթե պարսիկներն այժմյան թուլության մեջ մնան և մեր այս առաջարկությունը չընդունեն, այն ժամանակ թուրքերը կտիրեն ամբողջ Իրանին. մի բան, որին մենք հակառակ ենք. մենք չենք ուզում, որ թուրքերը տիրեն Իրանին, ոչ էլ ինքներս ենք ուզում տիրել»²:

¹ Խոսքը լեզգիների մասին է (2. 4.):

² Ան, Հուլից պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 611:

Երբ Ավրամովը Քաճմազին հայտնեց Պետրոսի առաջարկները, նա համաձայնվեց, որովհետև այդ ժամանակ նրա հայրը պաշարված էր Սպահանում և խիստ կարիք ունեւր օգնութեան: Ռուսպարսկական դաշնակցութեան կնքելու համար Քաճմազն իր կողմից զեսպան է նշանակում Իզմայիլ բեկին:

Իզմայիլ բեկը ճանապարհ է քնննում զեպի Գերբենդ, սակայն շահ Սուլթան-Նյուսեինը շուտով անձնատուր է լինում Սպահանում և Միր-Մահմուդը հռչակվում է որպէս Իրանի շահ: Գահաժառանգ Քաճմազին լայնածալալ Իրանից մնում է միայն մի փոքրիկ տերիտորիա երկրի հյուսիսային մասում, որից նա արդեն չէր կարող ինքն իրեն զբրկել՝ համաձայնվելով Պետրոսի առաջարկներին: Ուստի Քաճմազն իր լիազոր Իզմայիլ բեկին ետ է կանչում: Սակայն ռուսները նրան բաց չեն թողնում, կաշառում են, և նրա հետ, ըստ հին լիազորութեաների, 1723 թվականի սեպտեմբերի 12-ին կնքում են մի դաշնագիր, որով Ռուսաստանը պարտավորվում է օգնել Քաճմազին հաստատվելու պարսկական դահի վրա և փոխարենը պահանջում է նրանից, որպէս հավիտենական տիրապետութեան, Գերբենդ, Բարու քաղաքները բոլոր շրջակա հողերով, ինչպէս նաև Գիլան, Մազանդարան և Աստրաբադ նահանգները:

Իզմայիլ բեկի ստորագրած պայմանագիրը վա-

վերացնելու համար շահ Քաճմազի մոտ 1724 թ. մայիսի 1-ին գնում են Ռուսաստանի ներկայացուցիչներ Սեմյոն Ավրամովը և Բորիս Մեշչերսկին: Սակայն շահը և նրա մինիստրները պատասխանում են, որ Իզմայիլ բեկը տերիտորիաներ զիջելու և օգնութեան խնդրելու լիազորութեաններ չի ունեցել և, հետևաբար, այդ պայմանագիրը օրինական չէ: Սակայն շահը մոռանում էր, որ այդ տերիտորիաները (Գերբենդ, Բարու, Սալյան, Գիլան և այլն) բուն պարսկական հողեր չէին, այլ Իրանի կողմից զավթած տերիտորիաներ, և զբանց փոխարենն էր, որ Պետրոսը օգնութեան էր խոստանում:

Օսմանյան կառավարութեանը նույնպէս հրաժարվեց ճանաչել այդ դաշնագիրը, պատճառաբանելով, թէ Քաճմազը դաշնագիր կնքելու իրավունք չունի, քանի որ Իրանի իսկական տերն այժմ ավզաններն են:

Պետրոս Մեծը իրավացի կերպով չկատարեց այդ չլավերացված դաշնագրով ստանձնած իր պարտավորութեանները դահագուրկ շահզադեի հանդեպ և բացարձակապէս ոչ մի միջոց չձեռնարկեց Իրանի ամենավտանգավոր թշնամու՝ Միր-Մահմուդի նկատմամբ: Իսկ մեկ տարի հետո, երբ արդեն Միր-Մահմուդն էր Իրանի տիրակալը, Պետրոս Առաջինը հայտնում էր նրան, որ ինքը գնմ չէ նրա տիրապետութեանն Իրանում, միայն թե

նա շահատակվի Քուրքիային: Կեռ ավելին, Պետ-
բուրը խոստանում էր պաշտպանել Միր-Մահմու-
դին, եթե Քուրքերն արշավեն Իրանի վրա:

Երկուդ կրելով, որ օսմանցիներն իրենից շուտ
կարշավեն Իրանի վրա, ուսաց կայսրը աշխատեց
իր արշավանքն ավելի շուտ սկսել: Եվ 1722 թ. հու-
նիսին նա արդեն Աստրախանում էր: Այդտեղ
կենտրոնացված էր նաև 50.000-ոց ուսսական
զորք:

Իր արշավանքի նպատակները պարզաբանելու
համար Պետրոս Մեծը Աստրախան հասնելու օրը
(1722 թ. հունիսի 15) Արևելքի ժողովուրդներին
ուղղեց մի մանիֆեստ՝ հետևյալ բովանդակու-
թյամբ.

«Որովհետև 1721 թ. լեզգիների տիրապետող
Գոուլթ Բեկը և Ղազիղումուխի տիրապետող Սուր-
խալը, որոնք ապստամբված են շահի, իրենց թա-
ղավորի դեմ, գրոհով վերցրել են Շամախին և այն-
տեղ առևտուր անող ուսս մարդկանց կտորել են
և նրանց ինչքը շորս միլիոն արժողությամբ՝ հա-
փըշտակել են և պահանջը, որ այս ապստամբնե-
րից ապահովություն ստացվի, Շահը չի կատարել,
ուժ շունենալով, ուստի մենք ինքներս, համարելով
չափազանց վիրավորված կայքի ու պատվի կոդ-
մից, վճռեցինք պատժել այդ ապստամբներին, ո-
րոնք վնասակար են երկու կողմերին էլ: Շահի այս
բոլոր երկրներում ապրող հպատակներին հուսա-

զրուսմ ենք, որ ոչ ոքի ամենափոքր վնաս թե՛ անձի
և թե՛ սեփականության վերաբերմամբ չի հասցվի,
միայն թե նրանք հանդիստ մնան իրենց բնակա-
րաններում, հանդուգն կողոպտիչներին շմիանան
և նրանց, զաղտնի թե հայտնի, շօգնեն փողով կամ
ուտելիքներով, իսկ սրան հակառակվողները մեզ
թշնամիներ կձանաչվեն և նրանց հետ կվարվենք
առանց գթության: Բարձրագույն Դուան բոլոր հյա-
տակներին, որոնք գտնվում են այս մարզերում ա-
ռևտրական կամ այլ գործերով, ինչպես այս պա-
հանջում է երկու պետությունների մեջ կնքված հա-
վիտենական հաշտությունը, տրվում է հուսադու-
թյուն, թե նրանք ուսսական զորքերից վախենալու
ոչ մի բան չունեն, միայն թե մնան հանգարտ ու
հանդիստ»¹:

1722 թվականի հուլիսի 18-ին սկսվեց ուսսա-
կան արշավանքը: Հեծելազորը՝ ցամաքով, իսկ հե-
տևակը՝ նավերով շարժվեցին դեպի Գերբենդ ու
Դաղստան: Երեք օր հետո ուսսական նավերը դե-
սանտ հանեցին Գերբենդից քիչ հյուսիս, եկավ նաև
հեծելազորը: Այստեղից, առանց մի զնդակ ար-
ձակելու, ուսսները շարժվեցին առաջ ու գրավե-
ցին Դաղստանի սահմանամերձ շրջանները: Նույն
ձևով (առանց զնդակ արձակելու) օգոստոսի 23-ին
անձնատուր եղավ Գերբենդը: Բարձի խանը, որը

¹ Առ, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 286—287:

օսմանյան օրինակացիա ուներ, գիմադրելու փորձ
արեց, սակայն քաղաքը գրավելից և նա արսորվեց
Ռուսաստան:

Պետրոսի Պարսկական արշավանքն ուներ նվա-
ճողական բնույթ, այն նպատակ ուներ Իրանի տի-
րապետութիւնների հաշվին բնդարձակել Ռուսաս-
տանի տնրիտորիան: Կ. Մարբսն ուղղակի նշում է,
որ Պետրոսի արշավանքը դեպի Իրան նպատակ ու-
ներ ղավթել Կասպից ծովը: Իսկ օտար հողերի
զավթումը ֆեոդալական կենտրոնացած պետու-
թյան նորմալ ֆունկցիաներից մեկն է: Պարսկա-
կան արշավանքը պայմանավորված էր Ռուսաս-
տանի տնտեսական, ռազմա-քաղաքական շահե-
րով: Իրանական աշխարհակալ սելտության քալ-
քայման հետեանքով Թուրքիան ցանկանում էր
զավթել նրա անդրկովկասյան տիրութիւնները:
Դա խոշոր սպառնալիք էր Ռուսաստանի հարավ-
արեւելյան սահմանների համար: Ռուսաստանի շա-
հերը կենսականորեն պահանջում էին ամբացնել
այդ սահմանները ի հաշիվ նույն պարսկական տի-
րութիւնների. դրանով իսկ կփոխվեր ուժերի հա-
րաբերակցութիւնը հօգուտ Ռուսաստանի և ի վնաս
Թուրքիայի: Այդ նպատակի իրականացման համար
Ռուսաստանին անհրաժեշտ էին զաշնակիցներ, և
նա դտավ այդ զաշնակիցներին հանձնն հայերի
ու վրացիների, իսկ Թուրքիայի դեմ մղած պայքա-
րում՝ պարսկական շահի:

Պետրոսը նպատակ ուներ Կասպիական ափերի
նվաճումից հետո գրավել նաև Արեւելյան Հայաս-
տանն ու Արեւելյան Վրաստանը, սակայն այս նպա-
տակը նրան չհաջողվեց իրականացնել: Կասպիա-
կան ափերը գրավելուց մի քանի օր հետո, հան-
կարժ, Պետրոս Մեծը որոշեց ետ դառնալ և այլևս
չչարունակել արշավանքը:

Ի՞նչն էր դրա պատճառը:

Պետրոսն իր վերագարձը պատճառարանում էր
զլխավորապես նրանով, որ զորքը սննդամթերք
չունի և կլիմայական պայմաններն էլ վատ են:

Սակայն սրանք երկրորդական պատճառ-
ներ էին:

Հիմնական պատճառը Ռուսաստանի վրա զոր-
ժադրված միջազգային ձնշումն էր: Երբ ռուսներն
Աստրախանից շարժվեցին դեպի Գերբենդ, այդ
լուրը շատ արագ տարածվեց ու հասավ նաև Կոս-
տանդնուպոլիս: Թուրքի համար արդեն պարզ էր,
որ Ռուսաստանն արշավում է Իրանի վրա: Ինչպես
Պետրոսն էր դեմ, որ սուլթանի իշխանութիւնը
տարածվի Իրանի վրա, այնպես էլ Թուրքիան էր
դեմ, որ Իրանին ռուսները տիրեն:

Թուրքիան վաղուց աչք էր դրել Անդրկովկասի
վրա և սպասում էր հարմար առիթի: Առիթը վեր-
ջապես ներկայացավ մեռնում էր աշխարհակալ
Իրանը, թողնելով հսկայական ժառանգութիւն:

Սակայն Թուրքիան տեսավ, որ Ռուսաստանը

կանխել է իրեն, ուստի կոստանդնուպոլսի ուսական դեսպանին հայտնեց, որ եթե Ռուսաստանն իր զորքերը ետ չքաշի և արշավանքը շարունակի, ապա Քուրբիան պատերազմ կսկսի Ռուսաստանի դեմ: Միաժամանակ Բարձրագույն Դուռը հրաման տվեց էրզրումի Իբրահիմ փաշային, որ պատերազմական պատրաստություններ տեսնի Անդրրկովկաս արշավելու համար:

Հասել էր պարսկական աշխարհակալ պետության քաղաքական վախճանը, հրապարակի վրա դրված էր պարսկական ժառանգության հարցը. այդ ժառանգությունից ցանկանում էին օգտվել թե՛ Քուրբիան և թե՛ Ռուսաստանը: Միաժամանակ եվրոպական պետությունները, հատկապես Անգլիան ու Ֆրանսիան, աշխատում էին, որ այդ ժառանգության բաժանումը չկատարվի ի վնաս իրենց, որ հատկապես Ռուսաստանը մեծ բաժին չստանա ու չհզորանա Մերձավոր Արևելքում. մանավանդ Անգլիան խիստ երկյուղ էր կրում Մերձավոր Արևելքում Ռուսաստանի տարածվելուց, որովհետև դա կարող էր մեծ խոչընդոտ հանդիսանալ զեպի Հընդկաստան տանող ճանապարհին:

Անգլիան ու Ֆրանսիան Քուրբիային հրահրում էին Ռուսաստանի դեմ, խոստանում էին պատերազմ սկսելու դեպքում ցույց տալ ամեն տեսակ օգնություն և աջակցություն:

Եվ այսպես, սկսվում է ուժի ու դիվանագիտու-

թյան մի մրցում, որը փոփոխակի հաջողություններով տևում է մինչև այն պահը, երբ պատմության ասպարեզում երևում է ահնդ ավազակապետը, Նադիր շահը, որն իր հզոր թաթը դնում է իրանական բոլոր տերիտորիաների վրա և դրանով իսկ խառնում բոլոր տեսակի դիվանագիտական հաշիվները: Դրանից հետո պետք եղավ շուրջ մեկ հարյուրամյակ, որպեսզի Հյուսիսի կայսրը վերջնականապես հաստատվեր Անդրկովկասում:

Այսպես, ուրեմն, պարսկական ժառանգությունը առիթ էր դառնալու մի նոր ուս-թուրքական պատերազմի համար: Պետրոսը լավ էր հասկանում այդպիսի պատերազմի վտանգը. եթե պատերազմ սկսեր Քուրբիի դեմ, ապա հյուսիսային ու արևմբայան սահմանները կթուլանային, շվեդները կաբող էին գլուխ բարձրացնել, իսկ երկու ճակատում պատերազմելը Ռուսաստանի ուժերից վեր էր, քանի որ երկիրը խիստ հոգնած էր երկարատև ուս-շվեդական պատերազմից: Ահա այս նկատառումներն էին, որ ստիպեցին Պետրոսին առժամանակ դադարեցնել Պարսկական արշավանքը, դրանով իսկ հետաձգվեց անդրկովկասյան ժողովուրդներին օգնություն ցույց տալու դրժը:

Սակայն Պետրոսը թույլ չտվեց, որ Անդրկովկասում Իրանի ժառանգորդը միայն Քուրբիան լինի: Նա լիովին շհրաժարվեց Պարսկական արշավանքից և դնդապետ Ծիպովին ուղարկեց գրավելու

Ռեշտ (կամ Ռաշտ) քաղաքը՝ Կասպից ծովի հարավային ափին, իսկ գեներալ Մատյուշկինին ուղարկեց գրավելու Բաքուն: Շրջովը և Մատյուշկինը կատարեցին իրենց տրված հանձնարարությունները:

Միաժամանակ Պետրոս Մեծն իր դեսպանի միջոցով սկսեց գաղտնի բանակցություններ վարել Քուրբեայի հետ՝ Անդրկովկասը դիվանագիտական ճանապարհով իրար մեջ բաժանելու համար: Բանակցությունները վերջացան հաջողությամբ. 1724 թվականի հունիսի 12-ին կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր, ըստ որի՝ Կասպիական ափերը մնում էին Ռուսաստանին, իսկ Անդրկովկասի մնացած տերիտորիան՝ Քուրբեային: Երկու պետություններն էլ հասան իրենց նպատակին:

Չհրաժարվելով Անդրկովկասին տիրելու մտքից, Պետրոս Առաջինը շարունակում էր հայերին, վրացիներին ու ադրբեջանցիներին խոստումներ անել ու հուսադրել: Նա եռանդուն պատրաստություններ էր տեսնում ամբողջ Կովկասը զավթելու համար, սակայն 1725 թվականին Մեծ կայսրը մահացավ և նրա այդ պլանների իրականացումն էլ հետաձգվեց:

Պետրոսի անավարտ Պարսկական արշավանքը ունեցավ նաև որոշ բացասական հետևանք. նրա պատճառով պարսիկներն ու հատկապես Քուրբեքը է՛լ ավելի զրգովեցին և թշնամացան հայերի հետ: Բերինք մի տիպիկ օրինակ. Ղարաբաղի հայերը

ռուսաց արբունիքին ուղղված իրենց ազնուագրերից մեկում 1725 թվականին գրում են, որ իրենց վրա հարձակվեց 6000-անոց թուրքական մի ջոկատ, հայերը սաստիկ ջարդ են տալիս նրանց. գերի է ընկնում մի փաշա, որը հայտարարում է, թե սուլթանը հրամայել է այս տեղերի հայերին բուլոքին կոտորել, որովհետև նրանք են ռուսաց թագավորի զորքերն անցկացրել ծովի այս կողմը և այժմ խոչընդոտ են հանդիսանում մեր ճանապարհին¹:

Անդրկովկասի բախտակից ժողովուրդները ուժերը ներածին շափ փոխադարձ օգնության ձևեր էին մեկնում միմյանց՝ ընդհանուր թշնամու դեմ մղվող անհավասար պայքարում: Այսպես, երբ լեզգիները նորից արշավեցին Ղարաբաղի վրա, թալանեցին ու մեծ թվով գերիներ վերցրած անցան Քուռ գետն ու պաշարեցին Գանձակը, գանձակեցիները դիմադրություն կազմակերպեցին և դիմեցին Վախթանգի օգնությանը: Վախթանգն շտապեց այդ օգնությունը հասցնել, սակայն լեզգիները չկամեցան շափվել նրա հետ ու վերացնելով Գանձակի պաշարումը՝ 1722 թվականի մայիսին հեռացան:

Վախթանգը, որպես Վրաստանում պարսկական պետության կառավարիչը (վալին), պարտավոր էր կատարել պարսկական պետության հրահանգները,

1 Տես, ՁԾՅՅ, ԵՐԻ. 421—423:

հատկապես զինվորական: Սակայն վախժանգը նպատակ է դնում ազատագրվել պարսկական լծից. որի համար էլ, ինչպես 1722 թվականի ղեկտեմբերի 12-ին Հաղպատի առաջնորդ Մինաս վարդապետ Փերվաղյանը Մոսկվա՝ Մինաս վարդապետ Տիգրանյանին գրում է¹, վախժանգը սկսում է մերձենալ հայերին՝ համատեղ պայքարի ելնելու համար:

¹ Ահա այդ նամակից որոշ հատվածներ.

«...որ յայժմուս խաղաղ բաղմացիալ անօրէնքն և քայքայեալ անբեցին զվանք, ևս զանապատ, ևս ղեկեղեցիքն. և ղերեալ յաւար հարին, և հրդեհեալ անմարդարեակ արարին ղերկիրս Հայոց, և խանդարեալ կարդ և կրօնք քրիստոնէից, զոր ինչ ազգն լիզոց ղերեաց, և ի սուր սուսերի մաշեաց, և զմնացեալն խորամանգ և ժանտաբարոյ ազգն պարսից, անիրաւ զրկանօք, և խիստ հարկապահանջելով ազքատացոյց, և ի վերջին թշուառութիւն հասոյց զազգս Հայոց, նա ինքն փշացաւ, և զթաղաւորն իւր կորոյս, և եղև ձերբակալ ի Միր վեյսի որդի Մահմուտ բռնակալէն, որ տիրեաց արևելյան կողմին, և մնացեալ է հատրպատականն որ է թաւրիզ քաղաքն և մէջ սորայ, Երևանն և Խափանտանն, որ է տուն սիւնաց, ևս երկիրս վրաց, և Աստուած զարթոյց ազգիս քրիստոնէից զբարի հովիւն և զբաշտարար վային վրացտանու, որ իւր խոհմութեամբն և հանձարեղութեամբն հաւաքեաց զմնացեալ և զցրուեալ ազգս Հայոց և ի տեղիս տեղիս ամրացոյց, և խնամարկեաց, և ետ պահապան յամենայն ուրեք ի վերայ նոցայ:

Եւ եկն համբաւ անտեաց, թէ զալոց է վերոյգրեալ... (խոսքը ուսանելի մասին է.—Շ. Կ.) հանդերձ բազում զօրօք յազատութիւն և յօգնութիւն քրիստոնէիցս: (Տես. ЭЗОР, стр. 336):

Իրանում տեղի ունեցած գահակալական կռիվները ոչ մի փոփոխություն չբերին հայ ժողովրդին, նա վրաց ու ադրբեջան ժողովուրդների հետ միասին նորից մնաց Իրանի տիրապետության տակ, շկտրելով ազատագրական հույսերը Հյուսիսի նքնակալ կայսրից:

Գանձակից վախժանգը վերագարձավ Թիֆլիս, նրա հետ էր նաև Սասյի կաթողիկոսը: Ահա այս ժամանակ է, որ Պետրոս Մեծը նամակ գրեց վախժանգին, որպեսզի նա հայ-վրացական ուժերով իրեն միանա Կասպիական արշավանքի ժամանակ:

Միաժամանակ, Բարձրագույն Դուռը էրզրումի փաշայի միջոցով հայտնում էր վախժանգին, որ օսմանյան զորքերն արշավում են Իրանի վրա, և պահանջում էր վախժանգի օգնությունը, որի փոխարեն խոստանում էր Վրաստանի օսմանյան բաժնում եղած բոլոր քրիստոնյաներին հանձնել վախժանգին:

վախժանգից, ընդդեմ թուրքերի ու լիզզիների, օգնություն էր խնդրում նաև Իրանի կառավարությունը, որի փոխարեն վախժանգին տալիս էր մեծ լիազորություններ:

վախժանգին, իհարկե, ձեռնառու էր ուսանելի հետ միանալը, դրան համաձայն էին նաև Սասյի կաթողիկոսը, Երից Մանկանց վանքի կաթողիկոս Ներսեսը, աչգպիսի տրամադրություններ կային նաև Սյունիքում, մինչ այդ էլ նույն բանին էր ձրգ-

տում նաև ինքը՝ Վախթանգը, ուստի ընդունեց ռուսների առաջարկը:

Վախթանգը վրացական զորքերով ուղևորվեց ղեպի Գանձակ, իսկ Եսայի կաթողիկոսը գնաց հայ զինվորությունը բերելու, որպեսզի Գանձակի մոտ միանան իրար հետ ու գնան Շամախի, ուր պետք է գար նաև Պետրոս կայսրը: Եվ, ահա, 1722 թ. սեպտեմբերին հայ-վրացական զորքերը հանդիպում են Գանձակի մոտ. հանդիպումը շատ սրտառու էր, անշափ մեծ էր երկկողմանի ողևորությունը:

Գանձակի մոտ հայ-վրացական զորքերը մոտ երկու ամիս մնացին, հավանաբար կայսրից հրահանգների էին սպասում: Հավատացած լինելով, թե Պետրոսը գեռևս Դերբենդում է, Վախթանգը նամակ է գրում նրան ու շտապեցնում արշավանքը ղեպի Շիրվան (դա հոկտեմբերի 4-ին էր, այն օրը, երբ կայսրը Կասպիական արշավանքը համարելով ավարտված՝ վերադարձավ Աստրախան): Այս նույն ժամանակ Քիֆլիս է հասնում Պետրոսի պատվիրակ սպա Իվան Տոլստոյը, որը հայտնում է կայսեր վերադարձի մասին: Իվանին ընդունում է Վախթանգի որդի Վախուշտը և իսկույն լուր է ուղարկում հորը: Այս կապակցությամբ մեծ էր վհատությունը հայ-վրացական բանակում: Մինաս վարդապետ Փերվազյանը իր վերահիշյալ նամակում գրում է. «Եւ մենք մնացինք շուարած, և զլուխ ի կոր դա-

սանք, և լալ աշօք իւրաքանչիւր ի բնակութիւնս գնացին, սրտաբեկեալ և տարակուսեալ, և մեք հանդերձ մեր Վախթանգ պարոնիւս նկինք վրացտունս»¹: Ապա գրում է, որ մեզ շրջապատող բարբարոս աղբիբի մեջ լուր տարածվեց, որ հայերն ու վրացիները Մոսկվայի թագավորի կողմնակիցներ են, դա պատճառ դարձավ, որ նրանք բոլորը թշնամանան Վախթանգի ու հայերի հետ, այժմ մեր հույսը մնացել է Աստված և ռուսաց թագավորը²:

Ահա Պետրոսի Պարսկական արշավանքի ամենաբացասական հետևանքներից մեկը. հայերն ու վրացիները այժմ միայնակ էին մնացել դադազած լեզվիների հորդանների, արյունարբու թուրքերի և խորամանկ ու նենգ պարսիկների դեմ-հանդիման: Սկսվում են փոխադարձ կոտորածները, որոնք հավասարապես վնասում էին երկու կողմերին էլ:

Պետրոս Մեծի վերադարձից հետո հայ զինվորությունը շքրվեց, այլ նորից ամբացավ սղնախներում, և ամենամեծ հույսը դարձյալ կապեց Ռուսաստանից սպասվելիք օգնության հետ: Իսկ նա, Պետրոս կայսրը, շարունակում էր իր խոստումները: Այսպես, օրինակ, 1723 թվականի ամռանը Իվան Կարապետի միջոցով կայսրը մի հրովարտակ է ուղարկում հայ ժողովրդին, որտեղ ասված է.

1 ԾՅՅՅ, ԵՐԻ. 337.

2 Նույն տեղում:

«Մենք, — գրում էր կայսրը, — շատ տրամադիր ենք և պատրաստ ազատել նրանց (հայերին) անհավատների լծից: Բայց նրանք էլ կարող են հասկանալ, որ այդ բանի համար շափաղանց անհրաժեշտ է, որ մենք նախ Կասպից ծովի վրա հաստատվենք և այդ ծովի վրա հզած տեղերին տիրենք, որպեսզի այնտեղից դեպի հայերն արշավելու և նրանց հետ միանալու բոլոր պատրաստությունները տեսնենք»¹:

Իվան Կարապետի բերած այս հրովարտակում² (հայերը այն անվանեցին Մեմորիա) Պետրոսը հայ իշխանավորներին խորհուրդ էր աւալիս, որ եթե շատ են նեղվում, ապա կարող են հեռանալ իրենց երկրից ու ապաստան գտնել կասպիական ափերում ռուսների գրաված ֆաղաֆներում, իսկ ժողովուրդը բոլոր առժամանակ հանգիստ մնա իր տեղում:

1724 թվականի նոյեմբերի 10-ին Պետրոս Առաջինը քյոթավա Չելեբու և Անտոն քահանայի միջոցով հայ ժողովրդին ուղարկում է մի նոր հրովարտակ, որով ցանկանում էր նոր ձևով լուծել հայոց հարցը: Այդ հրովարտակից բավականին պարզ երևում է, թե ուսաց արքունիքը ինչ շափով էր մտածում հայ ժողովրդի մասին: Այդ հրովարտակով արդեն ամբողջ հայ ժողովրդին էր առաջարկվում տեղափոխ-

¹ Կն, Հայոց պատմություն, հատ. 2, էջ 629—630:

² Տես, ЭЗОВ, стр. 356—358:

վել կասպիական ափերում ռուսների գրաված նոր տերիտորիաները¹:

Քյոթավա Չելեբին և Անտոն քահանան գործն այնպես էին ներկայացրել ուսաց արքունիքում, որ իբր Ղարաբաղի և Ղափանի հայերն իրենք են ցանկանում տեղափոխվել կասպիական ափերը: Եթե դա իրոք հայերի ցանկությունը լիներ, ապա կայսերական հրովարտակն ստանալուց հետո զարաբաղցիներն ու ղափանցիները մեծ ուրախությամբ կգնային Գերբենդ, Բաքու, Գիլան և Մազանդարան, այնինչ այդպիսի բան տեղի չի ունեցել: Մնում է ննթաղրել, որ քյոթավա Չելեբին և Անտոն քահանան ստիպված են եղել այդ սուտը հորինել: Որ դա իրոք ուսաց արքունիքի ցանկությունն է եղել և ոչ թե հայերի, երևում է նաև կանցլեր Գուլովինի 1724 թ. նոյեմբերի 11-ին Իվան Կարապետին ուղղված նամակից, որտեղ կանցլերը հանձնարարում է Իվան Կարապետին՝ համոզել հայերին տեղափոխվելու ռուսների գրաված տերիտորիաները, բանի որ ռուսները թուրքերի հետ պայմանագիր են կնքել և շեն կարող հայերին զենքի ուժով պաշտպանել:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում որոշ կրճատումներով թարգմանաբար բերել այն խնդրագիրը, որ Եսայի և Ներսես կաթողիկոս-

¹ Տես, ЭЗОВ, стр. 392—394.

ները, Ղարաբաղի մելիքներն ու յուզբաշինները գրել են Պետրոս կայսրին 1725 թվականի հունիսի 25-ին (իհարկե նրանք չգիտեին, որ Պետրոսն այդ ժամանակ արդեն մահացել էր)։

«Աստվածազոր և Քրիստոսասեր մեծ Արքայից արքա բարեհաղթ և քաջամարտ և հզոր Իմփրաթոնին, ծովի և ցամաքի տիրակալ իշխողին»։

...Մեզ մոտ [Ձեր] ուղարկած երկու մարդիկ, որոնցից մեկը երեց է և մյուսը աշխարհական¹, եկան և հզորիդ հրամանի նամակը բերին հասցրին մեզ, որը մենք մեծ փափագով ու ուրախությամբ համբուրեցինք ու գրինք մեր գլխին, զոհացանք և շնորհակալ եղանք քո տերությունից։ ...Հզորիդ հրամանը մեզ՝ ծառաներիս այսպիսին է, որ մենք մեր տուն ու տեղով և ունեցած-չունեցածով վեր կենանք զանք պարսիկներից գրաված ձեր նոր երկրները, որոնք են Բաքուն, Գիլանը, Գերբենդը և այդ տեղերում բնակվենք, բայց... մեր խնդիրքում, որ գրել էինք, այդպիսի բան չկար և այս քո հրամանը մեզ համար չափազանց անհնարին է և բնավ ձեռնադրելի»²։ (Ընդգծումը մերն է։—Չ. Կ.)։

Սա հայրենասեր կաթողիկոսների, և ընդհանրապես զարաբաղյիների ամենահուսահատական

¹ Խոսքը Անտոն քահանայի և քյոթվա Չելերու մասին է (Չ. Կ.)։

² Эзов, стр. 421.

ազերսագիրն էր մեծ «Իմփրաթոնին», որից պարզ երևում է, որ նրանք խիստ հուսախաբված էին։

Իվան Կարապետը Գոլովինին գրում է, որ Անտոն քահանան և քյոթվա Չելերին գաղթեցման վերաբերյալ բանակցություններ վարելու լիազորություններ չեն ունեցել, և երբ այդ կեղծիքը պարզվել է՝ Անտոն քահանան Ղարաբաղ հասնելուց երկու օր հետո փախուստի է գիմել¹։

Մինչդեռ ռուսական կառավարությունն այսպիսի առաջարկներ ու խոստումներ էր անում, մահմեդական աշխարհում իրադարձություններն այլ բնույթ են ընդունում։

Թուրքիան չէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ կասպիական ափերն ընկնեն Ռուսաստանի տիրապետության տակ, նա որոշում է ղեկի ուժով դուրս մղել ռուսներին Անդրկովկասից։ 1723 թվականի աշնանը թուրքերն սկսում են իրենց արշավանքը։ Մինչև 1724 թվականի հունիսի 12-ի ռուս-թուրքական պայմանագիրը Թուրքիան նպատակ էր ցրել Անդրկովկասը մաքրել ռուսներից, չթողնելով նրան նույնիսկ կասպիական ափերը, իսկ պայմանագիրը կնքելուց հետո, որով, ինչպես տեսանք, յուծվեց կասպիական ափերի հարցը, Թուրքիան արդեն նպատակ գրեց գրավել պարսկական ժառանգությունից պայմանագրով իրեն հասանելիք

¹ Сбеа, Эзов, стр. 424—425.

տերիտորիան: Այսպես ուրեմն, 1723 թվականի աշ-
նանն Իբրահիմ փաշան հարձակվում է Վրաստանի
վրա, գրավում է Քիֆլիսը և Վախթանգից հպա-
տակություն է պահանջում: Վախթանգը հպատակ-
վում է, սակայն նա փաստորեն զրկված էր գահից
ու մայրաքաղաքից և թափառում էր Վրաստանի
լեռներում՝ Պետրոս Մեծից օգնություն հուսալով,
իսկ երկրի փաստական տերը Կախեթի Կոստանդին
Քազավորն էր (Մուհամեդ-Ղուլի խանը): Վրաստա-
նից հետո դեպի կասպիական ափերն առաջխաղաց-
ման ճանապարհին առաջին լուրջ խոչընդոտը Գան-
ձակ քաղաքն էր: Գանձակի գրավումով թուրքերը
միաժամանակ կկարողանային մասնատել հայերի,
վրացիների ու ադրբեջանցիների ուժերը, հեշտու-
թյամբ կմիանային Գաղստանի իրենց դրածո ֆեո-
դալների հետ, սպառնալիք կստեղծեին Երևանի ու
Նախիջևանի խանությունների և ընդհանրապես
Իրանի համար, ու կհեշտացնեին Երևանի և Նախ-
իջևանի գրավումը թուրքական այլ զորքերի կող-
մից:

Գանձակը գրավելու համար թուրքերը սղնախ-
ների հրամանատար Ավան (Հովհաննես) յուզբա-
շուն առաջարկում են միանալ իրենց հետ, բայց
Ավանը մերժում է, նա հավատարիմ է մնում հայ-
ադրբեջանական բարեկամությանը: Այդ բարեկա-
մության վառ արտահայտությունն ու ապացույցն է
Գանձակի ադրբեջանցիների և Ղարաբաղի հայերի

միջև 1724 թվականի մարտին կնքված գրավոր հա-
մաձայնությունը, որն ուղղված էր ընդհանուր թըշ-
նամու՝ օսմանյան թուրքերի դեմ:

1723 թվականի հոկտեմբերին թուրքերը պաշա-
րում են Գանձակը¹: Պաշարված քաղաքին վրացա-
կան զորքերով օգնության է գալիս Մուհամեդ-Ղու-
լի խանը: Կատաղի ճակատամարտը տևում է մի
քանի օր: Թուրքերը, որ լեզգիների հետ մոտ 70.000
հոգի էին, տալիս են մոտ 7.000 սպանված ու խու-
ճապահար նահանջում Քիֆլիս: Գանձակի պաշտ-
պանությունը տևում է 18—20 օր:

Գանձակի հերոսական պաշտպանությունը մեկ
անգամ ևս ցույց է տալիս Անդրկովկասի երեք եղ-
բայրական բախտակից ժողովուրդների կուռ հա-
մախմբվածությունն ու համերաշխությունը:

Իբրահիմ փաշային Բարձրագույն Դուռը մե-
ղադրեց դանդաղկոտության մեջ և նոր հրամանա-
տար նշանակեց Սարը-Մուստաֆա փաշային:

1724 թվականին թուրքական բանակը Սարը
Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ անց

1 Գանձակի հերոսական պաշտպանության մասին տես,
P. Абрамян. Разгром закавказскими народами турец-
ких агрессоров в Гандже в 1723 г. (Շախ. ՍՍՏ ԳԱ
«Տեղեկագիր», հաս. դիտ., 1953, № 6, էջ 47—59):

նում է հարձակման և կարճ ժամանակամիջոցում գրավում ընդարձակ տերիտորիաներ. 1725 թվականի օգոստոսին գրավում է Գանձակը և 40 հազարանոց բանակով ներխուժում Լեռնային Ղարաբաղ: Սակայն հաջոց սղնախների զորքերը պարտության են մատնում թուրքերին, և Սարը-Մուստաֆա փաշան վերադառնում է Գանձակ:

1724 թվականին թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Քուփրուլու Աբգուլլահ փաշան հիմնական ուժերով էրզրումից իր արշավանքն ուղղում է Երևանի վրա, նպատակ ունենալով այդ ուղղությամբ դուրս գալ կասպիական ափերը: Նրա հետ էին նաև Արիֆ-Ահմեդ, Հաջի-Մուստաֆա, Յալղուզ-Հասան և Ղոշ-Ալի փաշաները: Երևան արշավելու ճանապարհին գլխավոր հրամանատարին մի քանի օր ուժեղ դիմադրություն են ցույց տալիս կարբեցիները, իսկ Երևանի կամազուրկ Միհրալի խանը չի կարողանում կազմակերպել քաղաքի պաշտպանությունը: Հայրենասեր հայերն էին միայն, որ 60 օր շարունակ անհավասար մարտեր մղելով արյունոտ թշնամու դեմ՝ պաշտպանում էին իրենց հարազատ քաղաքը: Այդ հերոսական պաշտպանությունը ղեկավարում էին Հովհաննես Հունդիրեկյանը, Պողոս Քեչիբեկյանը, Կառչիկ Հովհաննեսը, Դավիթ Միրզեջանյանը, Գրիգոր վարդապետը և ուրիշներ: Ըստ Աբրահամ Երևանցու

վկայության, թուրքերը Երևանը գրավեցին 1724 թվականի հունիսի 7-ին¹:

Երևանի գրավումից հետո թուրքական գլխավոր բանակն արշավեց Թավրիզի վրա, նրա մի մասն էլ գնաց միացավ Գանձակի բանակին՝ սղնախների դեմ կռվելու համար, իսկ մի մասը շարժվեց գեպի Սյունիք՝ Դավիթ Բեկի դեմ:

Երևանցիներից ու կարբեցիներից բացի, թուրքական բանակին հերոսական դիմադրություն են ցույց տվել նաև լոռեցիները 1724 թվականի ապրիլ—մայիս ամիսներին: Այս մասին հիշատակում են Գյուլիստանի Սասյի և Սարգիս յուզբաշինները 1724 թվականի հունիսի 5-ին ցարական արքունիքին ուղարկած իրենց զեկուցագրում, որտեղ գրում են, որ Թիֆլիսից թուրք «...հրամանատարը իր հետ վերցրեց որոշ թվով զորք և գնաց Լոռի քաղաքի վրա: Եվ նա կանգ է առել, չի կարողանում վերցնել»²:

Լոռիի դիմադրության մասին հիշատակում է նաև Կախեթի Մուհամեդ-Ղուլի խանի պատգամավոր իշխան Ռոզեպը, Մոսկվայում, Արտաքին գործերի կուլեգիայում 1724 թվականի հուլիսի 4-ին խանի անունից արած հայտարարության մեջ: Նա

1 Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան, 1938, էջ 21:

2 Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 58:

ասել է, որ կոռի քաղաքի տակ թուրքերը շատ օրեր է, ինչ կանգ են առել, բայց չեն կարողանում վերցնել: Եւ թուրքերը երեք անգամ այդ [քաղաքի] բնակիչներից պարտութուն են կրել: 1:

Մրանք փաստեր են, որոնք գալիս են կրկին անգամ ապացուցելու, որ ղափան-ղաբաբաղյան աղատազրական շարժումները առանձնացած չէին իրենց լեռներում, ինչպես կարծում են բուրժուական մի շարք սխալմամբաններ, այլ լայն արձագանք էին գտել Արևելյան Հայաստանի նաև այլ շրջաններում, որտեղ հայերը զինվել ու կանոնավոր մարտեր են մղել սուլթանական զորքերի դեմ: Բացառված չէ, որ կողմ հերոսամարտերին հայերի հետ միասին մասնակցել են նաև վրացիները:

Թուրքերի հաջողություններին զուղընթաց իրեն զգացնել է տալիս հայերի հուսահատությունը, նորից հայ ավատատերերի միջև ծայր է առնում անհամաձայնությունն ու թշնամությունը: Գնալով վատանում էր Ղարաբաղի հայ զինվորության դրությունը. դրսից այն օղակված էր դարավոր թշնամիներով (թուրքեր, պարսիկներ, լիզզիներ), իսկ ներսից արգեն երևում էին քայքայման նշաններ: Երից Մանկանց վանքի ներսես կաթողիկոսը նորից գժտվում է Գանձասարի Եսայի կաթողիկոսի հետ, զգալով թուրքերին հաղթելու անհնարինու-

թյունը, նա հակվում է թուրքերի կողմը: Խոշոր ֆեոդալներից մեկիք Դավիթը, որ մահմեդականություն էր ընդունել և ստացել էր Բաղր անունը (սա Ղափանի մեկիք Բաղրը չէ, որին մահապատժի ենթարկեց Դավիթ Բեկը), մեծամեծ շարիքներ էր հասցնում հայերին՝ հայ զինվորության շարժումները մատնում էր պարսիկներին, սոսկալի կերպով նեղում ու հարստահարում էր հայ գյուղացիությունը: Մի անգամ 55 հայ նշանավոր գործիչների՝ մեկիքների, յուզբաշինների և այլ ավագների կանչում է իր մոտ խնջույքի, դավաճանաբար բուլբուլի գլխատել է տալիս և զլուխներն ուղարկում շահին: Հետագայում դավաճանն ստանում է իր արժանի պատիժը:

Այս մղձավանջային օրերին շէին թուլանում բազմաշարժար կաթողիկոսի՝ Եսայու ջանքերը: Նրան, ինչպես նաև մի քանի ազդեցիկ մեկիքների, հաջողվում է առժամանակ վերականգնել համերաշխությունը, որը և Եսայի կաթողիկոսին հիմք է տալիս մերժելու օսմանյան կառավարությունը հպատակվելու մասին էջմիածնի Աստվածատուր կաթողիկոսի հորդորները, որ վերջինս անում էր թուրքերի սպառնալիքի տակ: 1724 թվականի սեպտեմբերի 4-ին Աստվածատուր կաթողիկոսը Եսայի կաթողիկոսին գրում է, որ թուրքերը մինչև Երևան ընկած ամբողջ տարածությունը գրավել են, խորհուրդ է տալիս մի քանի յուզբաշինների

Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 58:

ընծաներով ուղարկել օսմանցիների սերասքերի մոտ և հպատակութիւն հայտնել: Ով որ այդ ձևով հպատակութիւն է հայտնում՝ թուրքերը նրանց չեն կոտորում, — գրում էր նա:

Սակայն Եսայի կաթողիկոսը Ռուսաստանից սպասվող օգնութիւն հեռանկարից ոգևորված, մերժում է, իսկ թուրքերը ավելի ու ավելի ակտիվանում են:

Աճում է դժգոհութիւնը Եսայի կաթողիկոսի դեմ, գնալով ընկնում է նրա հեղինակութիւնը, քանի որ նրանից էին լսում ռուսական կառավարութիւն խոստումները, որոնք, սակայն, տվյալ ժամանակաշրջանում, մի շարք օրյեկտիվ պատճառներով, Ռուսաստանը չկարողացավ իրականացնել:

1728 թվականին մահացավ Եսայի կաթողիկոսը, այն մարդը, որ տարիներ շարունակ եղել էր ժողովրդական ազատագրական պայքարի կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը:

Եսայու մահից հետո Ավան յուզրաշին իր եղբայր Թարխան յուզրաշու հետ 1729 թվականին հեռացավ Ղարաբաղից ու մտավ ռուսական զինվորական ծառայութիւն մեջ: Նույն թվականին թուրքերը գրավեցին Ղարաբաղը:

Այսպես, առանց որևէ շոշափելի արդյունքի, վերջանում է Ղարաբաղցիների ազատագրական

պայքարը, այնուհետև ուժեղանում է թշնամութիւնը խոշոր ֆեոդալների՝ մելիքների միջև, որից օգուտ են քաղում առանձին բախտախնդիր խաներ ու բեկեր:

Այսպիսով, Ղարաբաղում ու Ղափանում հայ զինվորութիւն և ազատագրական պայքարի առաջամղան ու ծավալման համար խթան հանդիսացան՝ նախ, պարսկական տիրապետութիւն ծանր լծից ազատագրվելու հայերի ձգտումը, որն այդ ժամանակ ավելի ուժեղացավ՝ կապված Ռուսաստանի արևելյան քաղաքականութիւն հետ: Այնուհետև, կովկասյան լեռնաբնակների ավազակային հարձակումները, որոնք իրենց հետ բերում էին մեծ ավերում, կոտորած ու գերեվարութիւն: Վերջապես, ապստամբութիւնները պարսկական կենտրոնական իշխանութիւն դեմ, որպես հետևանք կենտրոնական իշխանութիւն թուլութիւն, մի հանդամանք, որն հայերին հնարավորութիւն էր տալիս իրենց ավելի ազատ զգալու:

2. ԳԱՎԻԹ ԲԵԿԸ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ

Ավելի նշանավոր գործեր կատարեց հայ զինվորությունն այն հատվածը, որն իր գործողությունները ծավալեց Սյունյաց աշխարհում, կամ որ նույնն է՝ Ղափանում:

XVIII դարի 20-ական թվականներին Սյունիքը ավելի շատ հայտնի էր Ղափան անունով: Կային երկու Ղափաններ, 1) Փոքր Ղափան (կամ բուն Ղափան), որի մեջ մտնում էին Ձորք (կամ Կապան), Բաղք և Կոլսական գավառները. 2) Մեծ Ղափան (կամ Սյունիք, կամ ուղղակի Ղափան), որի մեջ մտնում էին Փոքր Ղափանը և Արևիք, Հարանդ, Ծղուկ, Աղահեջ, Զանգեզուր (կամ Գորիս), Սիսիան գավառներն ու զիպի հյուսիս ընկած մի քանի շրջաններ:

Ինչպես արդեն նշել ենք, Ղափան և Սյունիք անունները գործածել ենք միևնույն նշանակու-

թյամբ և ի նկատի ենք ունեցել այն տերիտորիան, որը գրավում էր Մեծ Ղափանը:

Դավիթ Բեկի զլխավորած շարժումը սկզբում ծավալվեց Փոքր Ղափանում, ապա տարածվեց ամբողջ Սյունիքում: Պարսկական բռնապետությունից ազատագրվելուց հետո Դավիթ Բեկի ստեղծած իշխանության մեջ մտնում էին Փոքր Ղափանը, Սիսիանը, Զանգեզուրը (Գորիս), Ծղուկ ու Աղահեջ գավառների մեծ մասը և հարևան մի քանի շրջաններ, իսկ 1728 թվականին, թուրքերից ազատագրվելուց հետո, Դավիթ Բեկի իշխանությունը տարածվեց դրեթև ամբողջ Սյունիքի, ինչպես նաև Գողթան գավառի մի մասի վրա:

Ղարաբաղի համեմատությամբ Ղափանում վաճառականությունը, հետևաբար նաև արհեստը ավելի էր զարգացած: Ղափանի առևտրական կապիտալը դուրս էր եկել տեղական սահմաններից և ընդունել էր միջազգային բնույթ: Ղափանցիներն առևտրական գրասենյակներ ունեին Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում և այլուր:

Ղափանի հայ վաճառականները ակտիվ մասնակցություն ունեցան ազատագրական պայքարի գործին: Դրա օրինակ է հանդիսանում Ստեփանոս Շահումյանը: Նրա հորեղբայրը՝ հայտնի առևտրական Ռսկան Շահումյանը, մեծ վաճառատուն ուներ Վենետիկում և միլիոնների (ֆրանկ) հասնող առևտուր էր անում:

Ստեփանոս Շահումյանը ամենաակտիվ մասնակցություն ունեցավ Ղափանցիների ապստամբությանը և կռիվները վերջանալուց հետո զնաց Վենետիկ ու նորից սկսեց զբաղվել վաճառականությամբ: Անզնահատելի է Ստեփանոսի գործունեության զերն ու նշանակությունը ոչ միայն որպես առևտրականի կամ ապստամբության սոսկ մասնակցի, այլև այն կապակցությամբ, որ նա Ղափանցիների անօրինակ հերոսամարտերի մասին ականատեսի ու ակտիվ մասնակցի իր հիշողությունները 1737 թվականին գրել տվեց նորաստեղծ Սխիթարյան միաբանության անդամ Ղուկաս վարդապետ Ստեփանյան Սեբաստացուն: Այդ գիրքը կոչվում է «Ընտիր պատմություն Դալիթ բեգին և պատերազմաց հայոցն Խափանու, որք եզեն ընդդէմ Քուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, և Հայոց 1171»¹: Այս գիրքը առաջին անգամ հրատարակել է Ա. Գուլամիրյանցը 1871 թվականին, էջմիածնում: Ակադեմիկոս Բրոսսեն այն թարգմանել է ֆրանսերեն և հրատարակել Պետերբուրգում 1876 թվականին:

Այս գիրքը գրեթե միակ աղբյուրն է Սյունիքի հայ զինվորության 8—9 տարվա ռազմական գոր-

¹ Տեքստում, երբ առիթ ենք ունեցել նշելու Դալիթ Բեկի ապստամբության պատմության այս աղբյուրը, երկար վերնագրից խուսափելու համար գրել ենք՝ Դալիթ բեգ:

ծողությունների, սյունեցիների ազատագրական շարժումների մասին, սակայն այս աղբյուրը հիշողությունների բնույթ ունի և պետք է խիստ զգուշությամբ մոտենալ նրան:

Շահումյանի այդ գրքի մասին խոսք կլինի ստորև, իսկ մինչ այդ նշենք, որ վերջին տարիներին Դալիթ Բեկի ու նրա գլխավորած շարժման մասին հայտնաբերված են մի քանի նոր վավերագրեր:

Այսպես, Պետրոս կայսեր պատվիրակ Իվան Կարապետը իր գրադրություններում մի քանի անգամ հիշատակում է Դալիթ Բեկի, Ղափանի և Ղափանցիների մասին: Առաջին հիշատակությունը հանդիպում ենք ուսաց արքունիքին 1724 թվականի փետրվարի 2-ին Իվան Կարապետի ուղարկած զեկուցագրում, այնտեղ ասված է. «Վախտանգին տղեն ուր մարթէն և [30] մարթ ուղարկել [այ] Մեծ Խայերին՝ մէշն, էղպես լսեցինք»²: Չնայած այստեղ Դալիթ Բեկի մասին խոսք չկա, բայց, ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, բաղդատելով այս տեղեկությունը Ստեփանոս Շահումյանի պատմածի հետ Լեոն հանգել է այն ճիշտ եզրակացությանը, որ այստեղ խոսքը Դալիթ Բեկի մասին է: Այնուհետև, Իվան Կարապետը մի այլ զեկու-

¹ Այսինքն՝ Ղափան:

² Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 80:

ցազրում ինքը հաստատում է իր նախկին ասածը, նա գրում է. «Դավիթ... եկել այ Ղափան և (30) մարդով թե՛ Շահնափաղ խանըն ինձ ուղարկելու»¹:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2888 ձեռագրում ասված է «[Դավիթ Բէկ] ընդ իր անհալ արս իբրև քառասուն...», ուրեմն ճիշտ է Շահումյանի այն տեղեկությունը, որ Դավիթ Բեկը Սյունիք եկավ Շահնավաղի 30—40 մարդկանցով:

Իվան Կարապետը Ղարաբաղում որոշ ժամանակ մնալուց հետո որոշում է անձամբ գնալ Ղափան և տեղում ծանոթանալ Ղափանի վիճակին: Նրա Ղափան մեկնելու նախօրյակին Իրանի դրածո ֆեոդալներ Բարգուշատի և Նախիջևանի խաները հարձակվում են Ղափանի վրա, կոտորում են 4—5 հազար մարդ և մեծ թվով կանայք գերելով վերադառնում:

1724 թվականի ապրիլի 9-ին կոմս Տոլստոյին ուղարկած ղեկուցազրում Իվան Կարապետը հայտնում է, որ սղնախների զորքը գնացել է Ղափանցիներին օգնության: Զորքի գնալուց հետո, 1724 թվականի ապրիլի 15-ին Սյունիք է գնում նաև Իվան Կարապետը և այնտեղ մնում մոտ 3 ամիս: Իր ղեկուցազրում նա գրել է. «Ի փոքր ծառայէտ

արզ լինի վերոյգրեալին զուլուղումն, որ մէք ապրիլի Ժն-ումն [15-ին] գնացինք Ղափան հայոց ղեշուհուլն, շուն Ղափանայ գիր էր եկել՝ թէ նախըզմանայ խանըն և Բարգուշատայ սուլթանն եկել ին Ղափան, հայոց աղգին շատ՝ Դեմ [4000—5000] զօշում ին ջարթէլ, օղուլուշաղ եսիր ին արարէլ, տարէլ»¹:

Անհայտ է, թե՛ ով է Իվան Կարապետին նամակ ուղարկել, գուցե և Դավիթ Բեկը ուղարկած լինի:

Սղնախների զորքի Սյունիք գնալու մասին հիշատակում է նաև Անտոն քահանա Առաքելովը: Նա 1723 թվականի նոյեմբերի 26-ին Բաքվում ռուսներին տալիս է մի շարք ցուցմունքներ, որոնց թվում նա ասում է, որ սղնախներում հավաքված է հայկական մեծ զորք, մոտ 30.000 ձիավոր և մոտ 20.000 հետևակ: Այդ զորքերի գլխավոր հրամանատարն է Ավան յուզբաշին: Այս զորքը պատրաստվում է գնալ Ղափան, որովհետև Ղափանի հայերը սուրհանդակ են ուղարկել և օգնություն են խնդրում²: Այս մասին հիշատակում է նաև Ստեփանոս Շահումյանը³, սակայն մի փոքր շփոթում է ժամանակը: Շահումյանի ասելով Հովհաննես Գուգարացին (Ավան յուզբաշին) սղնախների

1 Ա. Գ. Արամյան, Մի էջ..., էջ 83:

2 Հմմտ. ЭЗОВ, стр. 362:

3 Տես, Դավիթ Բէկ, էջ 10—11:

¹ Ա. Գ. Արամյան, Մի էջ..., էջ 81:

զորքով Ղափան է եկել Նախիջևանի խանի և Բար-
գուշատի խանի հարձակումից առաջ, այնինչ Իվան
Կարապետը շատ պարզ և ուղղակի ասում է, որ
հենց այդ հարձակումն է պատճառ հանդիսացել,
որ Ավան յուզրաշին գնա Ղափան: Մի այլ առի-
թով Իվան Կարապետը նորից գրում է. «Եվ մէք
զօշունով գնացինք Ղափան, տեսինք, որ խայէրն
շարթիւէլ ին և քորդի զօշունըն յնդ ին դառցել,
գնացելք: Նման մի դեպքի մասին խոսում է նաև
Մինաս վարդապետը. 1723 թվականի ապրիլի
19-ին ուսաց կայսրին ուղղված մի ազերսպարում
նա գրում է, որ շահզադն Թահմազը Թավրիզից 4
խաների զորքով ուղարկում է Ադուլիսի կողմերը,
որտեղ հավաքված էին հայերը, և հրամայում է
բոլորին կոտորել: Սակայն այս մասին իմանում է
Վախթանգը և օգնական ուժեր է ուղարկում: Հայ-
վրացական միացյալ բանակը շարդում է խանա-
կան զորքերին ու ցրիվ տալիս¹: Հավանական է,
որ սրանք հենց Իվան Կարապետի ու Ստ. Շահում-
յանի հիշատակած խաներն էին (տվյալ գեպքում
բանակը նշանակութուն շունի՝ 2 թև 4 խան, կտ-
րևորը հարձակման փաստն է), որոնք հարձակվել
էին Ղափանի վրա, որի պատճառով էլ զափանցի-
ւեքը օգնութուն էին խնդրել զարաբաղցիներից:
Եթե դա իրոք այդպես է, ապա մենք ունենք իս-

1 Տես, ЭЗОВ, стр. 348:

կական ռազմական դաշինք, որը միավորում էր
վրացիներին և Ղարաբաղի ու Ղափանի հայ զին-
վորութիւնը:

Վերահիշյալ գրութեան մեջ Իվան Կարապետը
նշում է, որ տեղական պարսիկ խաները թշնամա-
ցած են Դավիթ Բեկի հետ, քանի որ, ինչպես պատ-
մում է Շահումյանը, Դավիթ Բեկն իր առաջին
հարձակումները կատարել է պարսկական զորքերի
վրա և, ընդհանրապես, նրա գլխավորած ազատա-
զրական պայքարն սկզբնական շրջանում ուղղված
է եղել պարսկական բռնապետութեան դեմ, որի
պատճառով էլ, ինչպես պատմում է 1724 թվականի
հունիսի 16-ին Թավրիզից Բաբու եկած Աբել անու-
նով ազուլիսցի մի հայ առևտրական Բաքվում
ռուսների կողմից հարցաքննութեան ժամանակ,
«Շահը հաստատապես մտադիր է զորք ուղարկել
Ղափանի հայերի վրա, նրանց ցրիվ տալու նպա-
տակով, որովհետև մեծ թվով զինվորական հայեր
են հավաքվել Ղափանում, որոնք միացել են Նախ-
իջևանի և նրան մոտիկ շրջանների հայկական զոր-
քերի հետ»¹: Շահի սպառնալիքի հետևանքն էր,
լստ էութեան, Նախիջևանի և Բարդուշատի խաների
հարձակումը Սյունիքի վրա:

Աբելի այս հայտարարութեանից պարզվում է
նաև, որ Նախիջևանում և մոտիկ շրջաններում

1 Ա. Գ. Աբրահամյան, Մի ևջ... ևջ 84:

նույնպես կային հայկական զորքեր և որ նրանք համերաշխ էին Սյունիքի հայ զորքի հետ. սա նշանակում է նաև, որ Սյունիքի հայության պայքարը ինչ-որ տեղական, մանր շարժում չէր, այլ հզոր ժողովրդական կանոնավոր պայքար, որը լուրջ անհանգստություն էր պատճառել շահական կառավարությունը:

Արևլը հայտնում է նաև, որ Քավրիզում «Երևույն մարզ [հայեր] շահի հրամանով պատժվեցին, որովհետև նրանք արձիճ և վառող էին գնել և տանում էին Ղափան»¹: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Քավրիզը այն միակ վայրը չէր, որտեղ զափանցին հայթայթում էր զինամթերք. թե սղնախներում և թե Ղափանում զենքի ու ռազմամթերքի պահասություն զգում էին, բանի որ օղակված էին թշնամիներով, դրսից որևէ բան ստանալու հնարավորություն չունեին և իրենք էին պատրաստում իրենց զենքն ու ռազմամթերքը: Այս բանին որպես ապացույց կարող է ծառայել հետևյալը. երբ Քարխան յուզրաշին Պետերբուրգում, Արտաքին գործերի կոլեգիայում 1729 թվականի հոկտեմբերի 21-ին պատասխանում է իրեն տրված հարցերին, նա տալիս է նաև հետևյալ ցուցմունքը, որ յուրալանչյուր զինվոր ունի իր սեփական զենքը, որ զենքերը՝ հրացան, ատրճանակ, սուր, խանջար

1 Ա. Գ. Արամամյան, *Մի էջ... էջ 84*:

պատրաստվում են տեղում, տեղացիները պատրաստում են նաև վառող, սակայն վառողի պակասություն դարձյալ զգում են, իսկ թնդանոթներ չկան, որովհետև չկան ձուլող վարպետներ¹: Այս ցուցմունքը վերաբերում է Ղարաբաղին, բաց անվերապահ կերպով այն կարելի է տարածել նաև Ղափանի վրա և սակ, որ Գավիթ Բեկի գործն էլ նույն կերպ էր հայթայթում իր զենքն ու ռազմամթերքը:

Քարխան յուզրաշին նշում է նաև, որ Ղարաբաղում կա երկաթ, պղինձ, արծաթ, արձիճ, անտառ: Նույն բանը հաստատում է նաև Իվան Կարապետր, նա 1724 թվականի փետրվարի 5-ին կոմս Տոլստոյին ուղարկած զեկուցագրում Ղարաբաղի մասին գրում է. «...էս երկրում առձիճ, պղինձ, արկաթ, զօրայ և մեշայ շատ կա... ով ուզում այ, ուր խումար փոքր, փոքր խալում այ»²: Պետք է ենթադրել, որ սյունեցիները նույնպես օգտվել են այդ բնական հարստություններից:

Իվան Կարապետր զեպի Սյունիք իր առաքելության հաջողության մասին խոսելիս 1724 թվականի ապրիլի 9-ին կոմս Տոլստոյին ուղարկած զեկուցագրում գրում է. «Եվ ևս թագավորին ուրազն նշանց ավի, կարգացին, ռիչ միայրերան ասում

1 Ան, *Խոջայական կապիտալ*, Երևան, 1934, էջ 358:

2 Ա. Գ. Արամամյան, *Մի էջ... էջ 160*:

ան թէ, մէք թագաւորին ծառայ անք»¹: Սա շափազանց կարևոր ու արժեքավոր վկայութիւնն է, որը մեկ անգամ ևս գալիս է հաստատելու, որ սղնախներից բացի, Սյունիքի բնակչութիւնը նույնպէս հակված էր բնգունել առևտրական հպատակութիւն, որ Դավիթ Բեկի գլխավորած շարժումը մեկուսացած չէր, այլ կապ ուներ սղնախների հետ և, քանի որ ուներ առևտրական օրինատացիա, հետևաբար կապ ուներ նաև այդ ժամանակաշրջանում Անդրկովկասում ծագած ազատագրական շարժումների հետ: Այդ վկայութիւնը հաստատում են նաև սղնախների պատգամավորներ քոխվա Չելիբին և Անտոն Բահանան²: 1724 թվականի նոյեմբերի 5-ին Ռուսաստանի Արտաքին գործերի կուլեգիայում նրանք հայտարարում են, որ Սյունիքը միախորհուրդ է Ղարաբաղի հետ և նույնպէս ցանկանում է մտնել նորին կայսերական մեծութեան հովանավորութեան տակ: Այնուհետև նրանք տալիս են շափազանց արժեքավոր մի տեղեկութիւն. հայտնում են, որ Ղարաբաղի ամբողջ հայ բնակչութիւնը կլինի մոտավորապէս 100.000 բնտանիք, իսկ Սյունիքի հայ բնակչութիւնն ալեկի շատ է, քան Ղարաբաղինը, և մեծ մասամբ զբաղվում է առևտրով: Այս հայտարարութիւնից, ի միջի այլոց, մենք գաղափար

1 Ա. Կ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 86:

2 Տես, Эзов, стр. 387—388:

ենք կազմում նաև այն ժամանակվա Ղարաբաղի ու Սյունիքի հայ բնակչութեան թվի մասին: Եթե, ինչպէս բնդունված է, մեկ բնտանիքը հաշվենք բաղկացած հինգ անձից, ապա Ղարաբաղում կուէնանք կես միլիոն հայեր, իսկ Սյունիքում դրանից ալեկի: Ուրեմն, Սյունիքի և Ղարաբաղի հայութիւնը ազատագրական շարժումների ժամանակ ալեկի քան մեկ միլիոն էր, իսկ Երևանի խանութիւնում հայերի քանակը ալեկի թիչ էր, քան Ղարաբաղում, բայց թե որքան էր, ճշգրիտ հայտնի չէ: Հետևաբար, բնական է, որ ազատագրական շարժումները ալեկի ուժեղ արտահայտվեցին այնտեղ, ուր շատ էր հայ ժողովուրդը՝ Սյունիքում և Ղարաբաղում:

Իման Կարապետի վերջին տեղեկութիւնը Դավիթ Բեկի մասին հաստատում է այն իրողութիւնը, որ Դավիթ Բեկը իր շուրջն էր համախմբել բազարի սյունեցիներին և թուրքերի հետ ունեցած ճակատամարտերում կոտորել նրանցից շատերին. նա գրում է. «Դավիթ Բեկն... այժմ ապրում է Ղափանի երկրում, այնտեղի հայերին հավաքել է [իր շուրջը]: Թուրքը եկել է, [Դավիթ Բեկը] ճակատամարտ է տվել և նրանցից շատ մարդկանց կոտորել»¹:

Այսպիսով պարզվում է, որ ինչպէս Ղարաբա-

1 Սովետական գրականութիւն, Երևան, 1942, № 4, էջ 90:

զր, այնպէս էլ Սյունիքը ունեցել են սուսական օրի-
ենտացիա, որն առավել շեշտված ձևով արտա-
հայտվել է Ղարարադում. և այդ մասին կան բազ
մաթիվ վկայութիւններ: Սակայն Սյունիքի ուս-
սական օրիենտացիա ունենալու մասին կան միայն
մի բանի կցկատուր տեղեկութիւններ: Որ սյունեցի-
ներն ունեցել են սուսական օրիենտացիա, դա հաս-
տատուում է Իվան Կարապետի վերոհիշյալ վկայու-
թիւններում և Մխիթար Բեկի (սպարապետի) խընդ-
րագրով ուսաց արքունիքին, բայց թե ինչո՞ւ
պայքարի զեկավարից՝ Գավիթ Բեկից, ոչ մի զրա-
վոր հիշատակութիւն չի մնացել այդ կապակցու-
թյամբ (և ոչ միայն այդ կապակցութեամբ), ան-
հասկանալի է: Չէ՞ որ Գավիթ Բեկը, ըստ Ստ. Շա-
հումյանի վկայութեան, զրագեա էր¹, կամ թեկուշ
զրագեա էլ շիհներ՝ կարող էր մեկ ուրիշին գրել
առ: Ուրեմն ինչո՞ւմն է բանը: Մի՞թե Գավիթ Բե-
կը ոչ մի հույս չէր դնում սուսական օգնութեան
վրա և ավելորդ էր համարում այդ ուղղութեամբ
զրագրութիւն ունենալ ցարերի հետ ու տարվել
ւին պատրանքներով: Կամ, թերևս, Իվան Կարա-
պետի վկայութիւններն են հնարովի, որ նա արել
է սուսական արքունիքում իր վարկը բարձրացնելու
նպատակով: Այլպէս ինչո՞ւ Ղարարագի մեկիք-
ներն ու յուզրաշիհերը նայի ու ներսես կաթողի-

¹ Տես, Գավիթ Բեկ, էջ 6:

կոսների գլխավորութեամբ բազմաթիւ խնդրագրեր
են ուղարկել սուսական արքունիք, իսկ Սյունիքը
ընդամենը մեկ հատ՝ Մխիթար Բեկի խնդրագրեր,
որն ուղարկվել է Գավիթ Բեկից դադտնի (այս մա-
սին ստորև կխոսվի): Մնում է ենթադրել միայն,
որ ցարի պատվիրակի հետ Սյունիքում եղել են
միայն բերանացի խոսակցութիւններ, որոնք և
հիմք են տվել Իվան Կարապետին զեկուցելու ար-
քունիքին, որ Սյունիքի հայութիւնը նույնպէս ցան-
կանում է մտնել ցարական հովանավորութեան
տակ:

Այժմ տեսնենք, թե ինչ տեղեկութիւններ կան
Գավիթ Բեկի անձնավորութեան մասին, ո՞վ
էր նա:

Գավիթ Բեկի մասին մինչև օրս չի հայտնաբեր-
ված բացարձակապէս ոչ մի վավերագիր, արխիւ-
ների բազմահատոր գրագրութիւններում ոչ մի ան-
պամ չի հիշատակված նրա անունը, շնայած նրա-
նից շատ ու շատ անգամ աննշան գործիչների մա-
սին կան բավականին մանրամասն տեղեկութիւն-
ներ: Այս հանգամանքը շատ առեղծվածային
է դարձնում Գավիթ Բեկի անձնավորութեան
հարցը:

Պրոֆ. Աշ. Արքահամյանը «Մի էջ Անդրկով-
կասի ժողովուրդների և հայ-սուսական հարաբերու-
թիւնների պատմութեանից» արժեքավոր աշխա-

սովթյան մեջ¹ օգտագործել է Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի մի վավերագիր², որտեղ պատմվում է հետևյալը. ցարական բանակի փոխհնդապետ Ստեփանոս Դավիդովը 1797 թվականի նոյեմբերի 16-ին ռուսաց Պավել թագավորին ներկայացնում է Գրիգորիոսի մագիստրատի տւլամ մի տեղեկանք, որով պետք է կաշարին հավաստեր, որ ինքը իր սերվում է ազնվական տոհմից և խնդրում էր իրեն ազնվականի տիտղոս շնորհել: Տեղեկանքում ասվում էր, որ Դավիթ Բեկը Գեղարբունիքի Մմակ զյուղից է, Հախնազար բեկի որդին, Աթաբեկի ցեղատոհմից: Դավիթ Բեկն ունեցել է Մխիթար անունով մի որդի, որին թուրքերն անվանում էին «Ղզըլ խանչալ քեահեա» (Կարմիր դաշույնավոր առաջնորդ) և որը շատ մեծ բաջադործություններ է կատարել թուրքերի դեմ մղված կռիվների ժամանակ: Այս Մխիթարն ունեցել է երկու որդի, մեկը վերոհիշյալ փոխգնդապետ Ստեփանոս Դավիդովն է, իսկ մյուսը՝ էջմիածնի միաբան Իսահակ եպիսկոպոսը:

Պրոֆ. Աբրահամյանը կասկածանք է հայտնում, որ այդ վավերագիրը գուցե և կեղծ լինի, որ Ստե-

փանոս Դավիդովը կարող էր իր ծագումը կեղծել՝ ցույց տալով իրեն ազգականությունը Սյունիքի հերոսի հետ, որպեսզի հեշտությամբ կարողանար ատանալ ազնվականի տիտղոսը: Այդպիսի կեղծիքները շատ տարածված են եղել, սակայն տվյալ դեպքում կեղծիքը հաստատող որևէ փաստ չկա, և Աբրահամյանը եզրակացնում է. «Այսպիսով, նորահայտ նյութերից պարզվում է, որ Դավիթ Բեկը գեղարբունեցի է, սերվում է Աթաբեկի ցեղատոհմից: Նա ունեցել է Մխիթար անունով մի որդի, որի զավակներն են ռուս բանակի փոխգնդապետ Ստեփանոսը և էջմիածնի միաբանության անդամ Իսահակ վարդապետը»¹:

Սակայն, եթե համաձայնելու լինենք այդպիսի եզրակացության հետ, ապա անհասկանալի է մնում, թե ինչպես Ստեփանոս Շահումյանը, որն անսահման գովասանքով ու նվիրվածությամբ է խոսում իր հերոսի մասին, չգիտի, որ Դավիթ Բեկը Մխիթար անունով մի բաջ որդի է ունեցել: Ծթի իրոր Մխիթար որդին եղել է և սյունեցիների հերոսամարտերի ժամանակ կռվել թուրքերի դեմ, անհնարին է, որ Ստ. Շահումյանը չիմանար այդ մասին և չգրեր: Այնուհետև, եթե Դավիթ Բեկը Գեղ-

¹ Տես, էջ 92—95:

² Տես, Հայկ. ՍՍՌ Պետական մատենադարան, Արխիվային բաժին, Կաթողիկոսական դելյան, Բզթապանակ Ց 6, վավերագիր Ց 45:

¹ Ա. Գ. Աբրահամյան, Մի էջ..., էջ 95: Ա. Աբրահամյանը պարզել է, որ Իսահակ անունով վարդապետ (և ոչ թե կպիսկոպոս) այդ ժամանակ իրոր հղել է էջմիածնում:

արքունիքի Մմակ գյուղից լիներ, Աթաբեկի ցեղատոհմից, անշուշտ Ե. Լալայանը և Բաֆֆին, որոնք շրջել են այդ վայրերում, ժողովրդական որևէ ավանդույթուն լսած կլինեին և կգրառեին, բայց երկուսն էլ լռում են այդ մասին, ինչպես նաև հավաստում, որ Գավիթ Բեկը ամուսնացած չի եղել, ուրեմն և ժառանգ չի ունեցել:

Վերջապես, որ Ստ. Գավիղովի ներկայացրած տեղեկանքը պղնձականի արտղոս ստանալու համար կեղծիք է, համոզիչ կերպով ապացուցիլ է Վ. Հակոբյանը «Ուշագրավ աշխատություն» հոդվածում¹: Վ. Հակոբյանը ցույց է տալիս, որ Գրիգորիտպոլի մագիստրատի կողմից Ստ. Գավիղովին տրված տեղեկանքը գրելիս որպես հիմք ծառայել են հենց իրեն՝ Գավիղովի տված ցուցմունքները, իսկ ուրիշ, կողմնակի որևէ աղբյուր չի եղել, ուրիշ ոչ մի գրավոր վավերագիր, արձանագրություն կամ ժողովրդական ավանդույթուն չկա:

Այնուհետև, Վ. Հակոբյանը վկայակոչում է Գավիթ Բեկի պատմության մեղ հասած բոլոր չորս ձեռագրերը, որոնց մեջ պարզ կերպով Ստ. Շահումյանը հայտնում է, որ Գավիթ Բեկը Մցխեթցի էր: Սակայն Գավիթ Բեկի պատմության միակ հրատարակիչ Ա. Գուլամիրյանցը «աղչասիրական»

¹ Տես, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1954, № 6:

նկատառումներով փոխել է քննարի մեջ մի քանի բառ և Գավիթ Բեկին արդեն դարձել է Սյունեցի: Բերում ենք այդ երկու փոփոխակը. քստ ձեռագրերի. «...և կոչեալ զԴաւիթ-պէկն Մծխիրացի ի Հայկազեանս տոհմէ, ևս նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան...»¹: Ըստ Գուլամիրյանցի հրատարակած գրքի. «...և կոչեալ զԴաւիթ բէկն Սիւնեցի ի Հայկազեանս տոհմէ, ևս նմա զիշխանութիւն երթալ իւր հայրենի յաշխարհն Սիւնեաց, որ այժմ կոչի Խափան...»²:

Ժողովրդական ավանդույթուններն էլ տարբեր ծննդավայրեր են ցույց տալիս Գավիթ Բեկի համար, մի մասը նրան համարում է Հալիձորցի (Ղափանցի), մի մասը՝ Արցախցի (Հյուսիսային Ղարաբաղ): Այս վերջին տեղեկությունը տալիս է Գալուստ Շիրմաղանեանցը. նա 1842 թվականին Հաստատում ձանապարհորդելիս հանդիպում է 80-ամյա մի ճգնալորի, որը իր երիտասարդության տարիներին գրի է առած լինում Գավիթ Բեկի շարժման մասնակիցներից մեկի՝ Սրապիոնի պատմածները: Այս Սրապիոնը իրեն համարում է Պապ գորավարի եղբոր որդին: Ճգնալորի գրառումները հիմնականում համընկնում են Ստ. Շահումյանի

¹ Տես, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1954, № 6, էջ 104:

² Գավիթ Բեկ, էջ 5:

պատմութեան հետ: Դավիթ Բեկի մասին այստեղ կարդում ենք հետևյալը. վրաց թագավորը Սյունի-
րի համար «...նշանակում է մի քաջ անձն Դաւիթ
Բէկ անուն, Արցախի կողմէրէն զաղթուած երբեմն
Վրաստան և երկար ժամանակ ծառայած իւրեանց
արքունիքի մէջին, վաստակած փառք, պատիւ և
պաշտօն զօրագլխութեան»¹:

Ճգնալորի այս վկայութեան մեջ ուշադրաւն աչն
է, որ Դավիթ Բեկը երկար ժամանակ ծառայել է
վրացական արքունիքում և արժանացել է մեծ
փառք ու պատվի և զօրավարի պաշտոնի:

Այժմ անդրադառնանք զափանցիների ազատա-
զրական պայքարի պատմութեան հիմնական աղ-
բյուրին՝ Շահումյանի թելադրած պատմութեանը:
Ինչպես նշել ենք, Ստ. Շահումյանը պայքարի ակա-
նատես է և ակտիվ մասնակից, հետևաբար բավա-
կանին հավաստի աղբյուր է, միայն թե նա շատ
է չափազանցում իր դերը, իրեն ներկայացնում է
որպես ազատագրական պայքարի միակ նախա-
ձեռնող: Բաֆֆին էլ անվերապահորեն հավատացել
է Շահումյանին և իր «Դավիթ Բեկ» վեպը կառու-
ցել է այդ ասպեկտով:

Շահումյանը, որպես կանոն, չափազանցում է
թշնամու ուժերը և, ընդհակառակը, նվազեցնում
հայերի ուժերը:

Ըստ այդ աղբյուրի, Սյունիքի ազատագրական

¹ Արարատ, 1877, էջ 412:

շարժման նախաձեռնողը եղել է ինքը՝ Ստեփանոս
Շահումյանը, որ տեսնելով երկրի ավերվելը մտա-
զըրվում է գնալ Մցխեթ քաղաքը՝ Վրաստանի իշ-
խանաց իշխան Շահնավազի մոտ և նրանից մի
զորապետ խնդրել Սյունիքը թշնամիներից պաշտ-
պանելու համար: Իսկ որպեսզի ցույց տա, թե բո-
լոր սյունեցիներն էլ համաձայն են իր առաքելու-
թեան նպատակների հետ, նա կատարում է կեղծիք,
այսինքն՝ Սյունիքի հիսուն տանուտերերի անունից
Շահնավազին ուղղված մի խնդրագիր է հորինում,
ասյա պատրաստել է տալիս այդ հիսուն տանու-
տերերի կնիքների նման կնիքներ և կնքում խընդ-
րագիրը: Եվ ահա, իբր այդ գրութեան համաձայն
Վախթանգ VI-ի որդի Շահնավազ խանը Մցխեթից
կանչում է Դավիթ Բեկին, հրամայում է գնալ Սյուն-
յաց աշխարհը, զորք հավաքել այնտեղ և պահ-
պանել հայոց երկիրը թշնամիներից: Շատ ման-
կամիտ են Շահումյանի այս փաստարկները:

Ո՞րն է հավանական ճշմարտութիւնը:

Հայ զինվորութիւնը, ինչպես տեսանք, չէր
առաջացել առանձին անհատների ցանկութեաննե-
րով, այլ հետևանք էր երկրի ներքին ու արտաքին
ընդհանուր քաղաքական ու տնտեսական բարե-
նպաստ իրադրութեան: Արդեն նշել ենք, որ Վրաց
արքունիքը հայ ժողովրդական-ազատագրական
շարժման համար ուղարկում էր զինվորական հրա-
հանգիչներ. այդ է վկայում Իվան Կարապետը իր

զեկուցագրերում, նշելով, որ Շահնավազը իր մարդկանցից 30—40 հոգու ուղարկում է հայերին օգնություն, այդ մարդկանց մեջ էլ հենց գտնվում էր Դավիթ Բեկը:

Եթե Շահնավազի ասած ձևով է եկել Դավիթ Բեկը, ապա դա նշանակում է, որ տանուտերերը համաձայն չէին նրա գալստյանը, այլասյես ինչո՞ւ պետք է Շահնավազը տանուտերերի անունից կեղծ խնդրագիր հորիներ: Հենց իրեն՝ Շահնավազի վկայությամբ, երբ Դավիթ Բեկը գալիս է Սյունիք, մեղիքների մեծ մասն անմիջապես միանում է նրան, կարծես թե անհամբեր սպասում էին նրա գալըստյանը: Նշանակում է, այստեղ կեղծիք կատարելու անհրաժեշտության մասին խոսք լինել չի կարող: Ավելի ճիշտ, Շահնավազի կեղծիքն այն է, որ նա բացահայտ կերպով կեղծել է փաստերը: Ծշմարտությունն այն է, որ հենց իրենք Կանուտերեր՝ մեղիքներն ու յուզբաշիններն են խնդրագիրը գրել ու Շահնավազին խնդրել Սյունիք ուղարկել Դավիթ Բեկին, որն ըստ էության արդեն զորավարի անուն էր հանել, ինչպես որ հիշատակվում է ժողովրդական ավանդություններում: Նրանց այդ խնդիրը վրաց արքունիք տարել է Շահնավազը:

Բակուր-Շահնավազը բավարարել է սյունեցիների խնդիրը և ուղարկել է Դավիթ Բեկին, ինչպես նաև 30—40 այլ ուղղմական մասնազետներ: Այսպիսով, Ստեփանոս Շահնավազի ամբողջ ծա-

ռայությունը Դավիթ Բեկի Սյունիք գալու գործում այն է, որ նա զափանցիների խնդրագիրը հասցրել է վրաց արքունիք:

Հետագայում Ստ. Շահնավազը ակտիվորեն մարտնչել է հանուն Դավիթ Բեկի զլխավորած գործի, հանուն իր բազմաշարժար հայրենիքի ազատության ու անկախության: Նրա ուղղմական ընդունակությունները գնահատվել են Դավիթ Բեկի կողմից և նա նշանակվել է զորապետի տեղակալ: Չմոռանա՞նք նաև, որ Ստ. Շահնավազը հարուստ տուրքական է հղել և իր հարստությամբ անգնահատելի ծառայություն է մատուցել ազատագրական պայքարի գործին:

Դավիթ Բեկի անձնավորության մասին Շահնավազը, ինչպես տեսանք, հաղորդում է կցկտուր տեղեկություններ, — ասում է, որ նա Մցխեթցի էր (ըստ ձեռագրերի), հայկաղյան տոհմից, ասել է թե՛ հայ էր, ապա թվում է նրա բարեմասնությունները. «Եւ ինքն Դաւիթ էր արչնուական, բարեպաշտ, արդարակորով, ծանոթ գրոց, արխասիրտ, երկայնամիտ խորհրդով, զորաւոր բանիւ և գործովք, և վրեժխնդիր թշնամեաց ազգին մերոյ, ինքն և ամենայն հետևողք իւր»¹:

Եվ այսպես, 1722 թվականին Դավիթ Բեկին,

¹ Դավիթ Բեկ, էջ 6:

Վրաստանից եկած Թիկնապահների ու օգնականների հետ, մենք արդեն տեսնում ենք Սյունիբուն: Ստ. Շահումյանը Վրաստանից Դավիթ Բեկի հետ եկածներից հիշատակում է հետևյալներին. Մխիթար, Մեծ Գորգի, Հովհաննես, Բանգուր Զաբարիա իշխան, Բայինդուր իշխան, Ավթանդիլ, Փոքր Գորգի, Մատուր, Ղարազեռզ, Քաղեսու, Եղիազար, Հարություն:

Սյունիբուն Դավիթ Բեկը գտնում է միայն ցիրուցան, անկաղմակերպ ուժեր: Փողովրդի մեջ ընդհանուրը ապստամբական տրամադրությունն էր, որը և շատ հմտորեն օգտագործում է Դավիթ Բեկը: Լինելով տաղանդավոր զորավար, նա մեծ հռանդով ձեռնամուխ է լինում եղած ցիրուցան ուժերը միավորելու և օտար կեղեքիչների դեմ պայքարի հանելու մեծ ու ազնիվ գործին:

Սյունյաց աշխարհում ժայթքում է դարավոր ճնշումից լեռնացած հայ ժողովրդի ատելությունը, ապստամբ լեռնցին ձգտում էր մի շնչով կյանել ու ոչնչացնել այն ամենը, ինչ հիշեցնում էր իրեն ստրկացնողներին: Այդ լեռնաստանի ժողովուրդն «...իր շրջապատող ժայռերի նման ամուր կուրծք ուներ և իր ծմակների վագրերի նման աներկյուղ սիրտ... և որպես մի դարանամուտ գազան, իր թարստոցի միջից հարձակումներ էր գործում, երբ

Թշնամին հանդգնում էր վրդովել նրա խաղաղությունը»¹:

Սկզբում, բանի դեռ ուժերը քիչ էին, Դավիթ Բեկն ընտրում է կովի պարտիզանական տակտիկան, որի համար անչափ նպաստավոր էին Սյունիքի աշխարհազրական պայմանները: Սյունիքը մեծ ու փոքր լեռնաշարերի, անդնդախոր ձորերի և վիթխարի ու անմատչելի դազաթների մի անտառոտ աշխարհ է, հռչակված մանավանդ իր անմառչելի յոթ բերդերով, որի համար այն երբեմն կոչվում է «Յոթնաբերդ գավառ»:

Ահա այս Յոթնաբերդ գավառում կիրառելով հանկարծակի հարձակումների տակտիկան, Դավիթ Բեկը կարճ ժամանակամիջոցում ահ ու սարսափ է տարածում պարսկական իշխանության ներկայացուցիչների վրա:

Սյունիք հասնելու առաջին օրերին իր ունեցած փոքրաթիվ Թիկնապահներով նա հարձակվում է Ուլ-Քափախի դաշտավայրում բնակած Ղարա-Չոռլու ավազակ թուրք ցեղի վրա ու կոտորում նրանց: Այս առաջին, թեպետ և փոքրիկ, հաղթանակը խիստ բարձրացնում է Դավիթ Բեկի հեղինակությունը: Այդ հաղթանակը մեծ արձագանք է գրտնում ամբողջ Սյունիբուն, անգամ Արաքսի ափին՝

¹ Բուֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Հայպետհրատ, 1959, էջ 167:

Հին Զուղան արձագանքում է սկսված ապստամբական շարժմանը: Այս մեծ արձագանքը հենց ցույց է տալիս ընդհանուր ապստամբական տրամադրությունների առկայությունը:

Շուտով Դավիթ Բեկի շուրջն հավաքվում են 400 խիզախ մարտիկներ: Դավիթ Բեկը գնում հաստատվում է Ենհեր (կամ Եինուհայր) բերդում ու սկսում անընդհատ հարձակումներ գործել պարսկական իշխանությունը ներկայացնող տեղական խաների ու բեկերի վրա: Ուշ-Քափաշի դաշտավայրը դեռևս լրիվ մաքրված չէր մահմեդականների իշխանությունից: Դաշտավայրի բոլոր 32 մահմեդական ցեղերը, որոնց մեջ գերիշխող գիբը էր գրավում Զիվանշիր ցեղը, ահանելով Դավիթ Բեկի համարձակ ու հաջող գործողությունները, որ սպառնում էր իրենց Ֆիզիկական գոյությունը և իրենց աիրապետությունը, հավաքվում, զինվում ու դուրս են գալիս Դավիթ Բեկի դեմ: Ըստ պատմիչի շափազանցրած տվյալների՝ թշնամին ուներ 16 հազարանոց զորք, մինչդեռ Դավիթ Բեկն ուներ ընդամենը 400 բնաիր մարտիկներ: Ահա այս փոքրաթիվ զորքով նա հարձակվում է թշնամու վրա, սկսվում է սոսկալի կոտորածը:

Դարերով ճնշված ստրուկը վերջապես սուր էր բարձրացրել իր ստրկացնողի վրա. նման դեպքերում սպորությունն ու վրեժխնդրությունը հասնում

են դաժան անպիտան, տասնապատկում ուժերը և հրաշքներ գործում: Այս դաժան կոտորածը տևում է երեք օր և վերջանում է Դավիթ Բեկի կատարյալ հաղթանակով: Թշնամին հավաքում է իր զորքի մնացորդներն ու հեռանում Այունիբից:

Ուշ-Քափաշի դաշտավայրի ցեղերի դեմ տարած հաղթանակը Դավիթ Բեկի անունը է՛լ ավելի հայտնի դարձրեց ոչ միայն մեկիքների, յուզբաշիների ու զինուորների շրջանում, որոնք մասամբ արդեն ճանաչում էին նրան՝ վրաստանում կատարած նրա գործերից, այլև ժողովրդի բոլոր խավերում, անգամ այն տեղերում, ուր մինչ այդ նրա մասին լսած անգամ չկալին: Այդ պահից սկսվում է արյունահեղ ու դաժան պատերազմներով լի նրա հերոսական կյանքի ուղին: Այս առաջին հաղթանակների ազդեցության շնորհիվ զնալով սկսում է բորբոքվել ազատատենչ սյունեցիների ժողովրդականազատագրական անհաշտ պայքարի կատաղի հրդեհը:

Շուտով բոլոր կողմերից գալիս են հայ իշխաններից շատերը և համախմբվում Դավիթ Բեկի շուրջը: Առաջինը նրա մոտ գալիս է Զավնդուր գավառի իշխան Քորոսը, որը Դավիթ Բեկից ստանում է այդ գավառի կառավարման և զորք կազմելու լիազորություններ, ապա իր հետ վերցնելով Դավիթ Բեկի հետ վրաստանից եկած Բայինդուրին, վե-

բազաւնում է իր գազաւը: Նրա օրինակին հետևում են այլ իշխաններ, ինչպես, օրինակ, Տիլենշի մականվածները, ջուղայեցի Մաղա մելիքի որդիները և շատ ուրիշներ: Նրանց բոլորին էլ Դավիթ Բեկը հաստատում է իրենց գազաւներում և տալիս ուղղմական մասնագետներ՝ Վրաստանից իր հետ եկածներին, որպեսզի տեղերում կազմակերպեն ու մարզեն հայ զորքերը:

Հայտնի է, որ հայ մելիքները իրենց իրավունքների մեջ հաստատւում էին պարսից շահերի տված հրովարտակներով, և այնուհետև դառնում իրենց երկրի (գազաւի) լիակատար տեր ու տնօրէնը, արտոնություն էին ունենում ըստ իրենց հպատակների թվի և ըստ իրենց նյութական կարողության գորք պահելու և այլն:

Շահումյանի հաղորդած այն փաստը, որ Սյունիքի մելիքները գալիս էին Դավիթ Բեկի մոտ և նրա կողմից հաստատւում իրենց նախկին իրավունքների մեջ, նշանակում է, որ Դավիթ Բեկը Սյունիքի բոլոր հայ իշխանավորների համար արդեն համարվում էր սյուզերեն: Դա նշանակում է, որ Սյունիքը այլևս չէր ճանաչում Իրանի կենտրոնական իշխանությունը, որ Սյունիքը իրեն անկախ էր հռչակում Իրանից: Սակայն, այդ անկախությունը դեռ հարկավոր էր նվաճել, նվաճել համառ ու երկարատև պայքարի ընթացքում, հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ ու արգելիքներ: Եվ Դավիթ

Բեկը կարողացավ դափանցիներին ազատագրական պայքարի գործը պսակել հաջողութեամբ, շնայած որ այստեղ պայմաններն ավելի անբարենպաստ էին, քան Ղարաբաղում:

Ղափանի հայ զինվորությունը, ի տարբերություն սղնախների, ուներ նաև ներքին՝ ռազմաճակատ, դա Ղափանի տեղական թուրք ու պարսիկ ֆեոդալներն էին, որոնք շատ լուրջ խոչընդոտ էին ազատագրական պայքարի համար: Նրանք ձգտում էին տեղում պահպանել պարսկական իշխանությունը, ուստի այդ ֆեոդալների դեմ պայքարը՝ արդեն պայքար էր պարսկական իշխանութեան դեմ: Այդ պայքարի ընթացքում, հատկապես սկզբնական շրջանում, բնական է, որ տուժում էր խաղաղ բնակչութիւնը. հրահրվում էին ազգային ու կրոնական կրքերը և առանձին տեղերում այդ պայքարը երբեմն կրում էր ազգամիջյան կոտորածների բնույթ: Շահումյանը հաղորդում է, օրինակ, որ Սափի-Ղուլի խանը 500 պարսիկների զուլխանցած ավերում է երկու հայկական գյուղեր, դրա դիմաց Դավիթ Բեկի հրամանով Մխիթար սպարապետը՝ Թաղամեր ավանում կոտորում է 60 բնտանիք պարսիկներին:

1 Առն (տես նրա՝ Հայոց պատմութիւն, հատ. 3, էջ 674-ի ծանոթագրութիւնը) իրավացի կերպով նշում է, որ «սպարապետ», «զորավար», «իշխան», «զորապետ», տիրոջ ոսկերի գործածական շնն եղել Ղափանում, այլ Դավիթ

Դավիթ Բեկը չէր մոռանում, իհարկե, արտա-
բին, հիմնական թշնամուն, սակայն նա հասկա-
նում էր, որ մահամերձ Իրանի կենտրոնական իշ-
խանությունը թույլ է ու անընդունակ նույնիսկ ինքն
իրեն պաշտպանելու, հետևաբար անհրաժեշտ էր
նախ պայքարել տեղական իշխանությունների գեմ:
Իրենց դարավոր կեղեքիչների դեմ այդ դաժան
պայքարի ընթացքում սյունեցիները դրսից գրեթե
ոչ մի օգնություն չէին ստանում, սղնախներից եկած
օգնությունը հետագայում, երբ արդեն սկսվում են
օսմանյան արշավանքները, այլևս չկրկնվեց: Սա-
կայն Դավիթ Բեկը կարողանում էր հարկ եղած մի-
ջոցները գտնել, ժողովուրդը սիրով համալրում էր
նրա բանակի շարքերը:

Դավիթ Բեկի բանակի թվի մասին բացարձակ
հավաստի աղբյուր չունենք, և այդպիսի թիվ որո-

Բեկի պատմությունը գրող Ղուկաս վարդապետն է կիրառու-
թյան մեջ մտքերը՝ հարմարելով հին հայկական տիտղոսե-
րին: Որ Դավիթ Բեկի զինավոր օգնականը՝ Մխիթարը չի
կրել «սպարապետ» անունը, այլ ցույց է տալիս նրա գերեզ-
մանարտի արձանագրությունը (տես, Ազգագրական հանդես,
1899, Ե. Լալայան, «Ձանգեղուրի գավառ»):

Որ Մխիթարն իրոք չի կրել «սպարապետ» տիտղոսը,
այդ երևում է նաև ուսաց կառավարությանն ուղղած նրա
լեզրագրից, որի տակ ստորագրել է Մխիթար Բեկ (տես,
Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտու-
թյուններ, 1952, № 3, էջ 99):

նկը ոչ մի արդյունքի չի հասցնի: Այն կարելի է
մոտավոր կերպով որոշել: Ինչպես տեսանք, Ղա-
րաբաղի հայ բնակչությունը 100.000 ընտանիք էր,
իսկ Ղափանինը նրանից շատ էր. Ղարաբաղի բո-
լոր սղնախներում կար մոտավորապես 40 հազար
վորք: Արդ, եթե այդ այդպես է, նշանակում է Ղա-
փանում զրանից ավելի շատ վորք պետք է լիներ:

Պետք է ենթադրել, որ Դավիթ Բեկը ունեցել է
ավելի քան 40 հազարանոց մշտական բանակ, որը
սակայն կենտրոնացած չէր մի տեղում, այլ գտնը-
վում էր երկրի տարբեր մասերում և հարկ եղած
ժամանակ հավաքվում:

Որ Դավիթ Բեկի վորքը միավորված չէր մի բա-
նակի մեջ, այլ բաժանված էր առանձին գավառ-
ներում և գտնվում էր մեկիքների ու յուրբաշինների
հրամանատարության ներքո, երևում է նաև Ստ.
Շահումյանի պատմությունից: Ղափանի ամբողջ
հայ զինվորության բնակչության տեղերի, քանակի
և զորավարների մասին, մինչև այն ժամանակ, քա-
նի դեռ Դավիթ Բեկը Շահերում էր, Ստ. Շահում-
յանը հաղորդում է հետևյալը.

Շահերում էին գտնվում Բայինդուր զորապետը,
Բալի զորապետը, Մինասը և Ստեփանոսը, նրանք
ունեին 550 զինվոր:

Տաթևում—Ղիչին, Այդին, Եսային, Տիրացուն,
Սիմոնը՝ որանք ունեին 400 զինվոր:

Հալիձորում—Մելիք Փարսաղանը 250 զինվորով և Տեր-Ավետիսը 468 զինվորով:

Չավնդուր գավառի զորավարներն էին Վարդանը, Փարսաղանը, Թորոսը, Բայինգուրը, Նուրարը, Թովմասը, Թուրինջը և Հովհաննեսը, ունեին 2000 զինվոր: Կալեր ավանում—Պապ զորավարը և նրա հետ 700 զինվոր. Շահումյան տանից Ստեփանոս Վարդանեսյանը (այսինքն՝ ինքը պատմիչը) Պապի տեղակալն ու սպարապետն էր:

Մեղրիում — Կոստանգինը, Հովհաննեսը, Սարին, Առաքելը և նրանց հետ 400 զինվոր:

Մաղաչուղի որդիները և Տիլենչի մականվածները ունեին 400 զինվոր:

Մելիք Ղուջուն 200 զինվոր ուներ, Սիսիանի զորավարը՝ 500 զինվոր, Ալշար Երեցը, որ կոչվում է նաև տեր Գասպար, ուներ 250 զինվոր: Բաղարբրդի Աղամ զորավարն ուներ 150 զինվոր, Գյուլ բերդի Ղազար զորավարը՝ 110 զինվոր, Շիվանաձորի Սարգիս զորավարը՝ 250 զինվոր¹:

Այսպիսով, Ղափանի զորքի թիվը ազատագրական պայքարի սկզբնական շրջանում, քանի դեռ Դավիթ Բեկը գտնվում էր Շնհերում, այսինքն՝ մինչև 1724 թվականը, հավասար էր շուրջ 6600 մարդու, որոնք գտնվում էին տարբեր վայրերում: Զորքն այդ ձևով բաժանելը ուներ այն առավելությունը, որ

գա շատ հարմար էր Դավիթ Բեկի վարած լեռնային մանր պատերազմի տակտիկային, որի մեջ վճռական մոմենտը, որոշիչը շեշտակի, անակնկալ և ուժգին հարձակումն էր, որը մեծ խուճապ էր առաջացնում թշնամու բանակում և ապահովում հաղթանակը: Դավիթ Բեկը եթե ցանկանար էլ՝ չէր կարող խոշոր զորաբանակներ պահել, որովհետև անհրաժեշտ կլինեին երկրի տարբեր մասերում կառուցել հսկայական շինություններ, զորանոցներ, բանակատեղիներ և դրա համար ունենալ բավականաչափ զրամական միջոցներ: Դավիթ Բեկն այդպիսի հնարավորություններ չուներ:

Սկզբում Դավիթ Բեկի գլխավոր զորակայանը Շնհեր բերդն էր, իսկ հետո տեղափոխվեց Հալիձոր, որտեղ 1724 թվականին կառուցեց մի ամուր բերդ: Հալիձորը գտնվում է Բարզուշատ գետի ձախ ափին: Գյուղի տները քարաշեն էին, և քանի որ տեղանքը հարթ չէր, ապա տներից մեկի կտուրը մյուսի համար ծառայում էր որպես բակ: Գյուղի կենտրոնում գտնվում էր գմբեթավոր եկեղեցի, գյուղը պատկանում էր Տաթևի վանքին: Հալիձորից երկու կիլոմետր դեպի հյուսիս, նույնպես Բարզուշատի ձախ ափին, գտնվում է Շնհեր գյուղը, որը Բարզուշատի ձորի գյուղերից ամենամեծն էր:

Երբ Դավիթ Բեկը Շնհերից իր ոստանը տեղափոխում է Հալիձոր, այդ ժամանակից էլ ավելի է սեփանում Հալիձորի համբավն ու բնակչությունը:

¹ Տես, Դավիթ բեգ, էջ 76—78,

Գնալով մեծանում է նաև Դավիթ Բեկի հեղինակությունը ժողովրդի մեջ, այդ բանին նպաստում է նաև այն հանգամանքը, որ Դավիթ Բեկը անողոր էր ազատագրական շարժմանը դավաճանողների նկատմամբ: Հիշենք Տաթևի մելիք Դավթի օրինակը. այս մելիքը երբ լսում է, որ Դավիթ Բեկը եկել է Սյունիք և անցել ազատագրական պայքարի գլուխ, խորհում է կողմնակիցներ հավաքել «...տալ պատերազմ ընդ Դավիթ Բեկին»¹: Նա ուրանում է բրիտանական հավատը, ընդունում է մահամեղականություն և կոչվում մելիք Բազը, իսկ իր բոլոր որդիներին, որոնք նույնպես ընդունել էին իսլամը, սնվանում է շահ-ղուլի (շահի ստրուկ): Այսպիսով նա բացահայտորեն դավաճանում է իր հայրենիքի, իր ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի գոյժին և մեծամեծ շարիքներ հասցնում, բազմաթիվ քստմենլի շարագործություններ ու դավաճանություններ կատարում: Ի վերջո Դավիթ Բեկը ձերբակալում է նրան ու նևտում Շնհերի բանտը, որտեղ դավաճանը 12 օր բարձրաձայն կըրկնում էր ժողովրդական հայտնի ասացվածքը՝ «Լույսը Լուսավորչի հավատին, վայ ուրացող մարդին»: Թերևս մոտալուտ մահվան սարսափի տակ նա դաջաց իր շարագործությունների համար, բայց ներում չստացավ: Տասներկու օրից հետո Դավիթ Բեկը գլխատեց նրան:

¹ Դավիթ Բեկ, էջ 8—9:

3. ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻ ՍԿՂՐՆԱԿԱՆ ՊԱՅԿԱՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԽԱՆԵՐԻ ԴԵՄ

Դավիթ Բեկի գլխավորած ժողովրդական-ազատագրական պայքարը հենց բնում խեղդելու համար ոտքի են կանգնում տեղական խաներն ու նրանց կամակատարները՝ զանազան մանր ու մեծ սուլթաններ, բեկեր, դավաճան հայ մելիքներ և այլն:

1723 թվականին Բարդուշատի Ֆաթալի խանը Ղարաղաղի խանից օգնություն ստանալով, 18 հազարանոց բանակով արշավում է Չավնդուրի վրա, որի իշխանն էր բաջաղորով Թորոսը: Ինչպես տեսանք, Թորոսը առաջիններից մեկն էր, որ յուր համերաշխությունն էր հայտնել ազատագրական պայքարի գործին և իր երկրում ստեղծել զինական ուժեր: Տեղեկանալով Ֆաթալի խանի առաջարժման մասին, Թորոս իշխանը իր զորքով զարանամուտ էլինում և գիշերը «յանկարծակի զաղաղակ բար-

ձին, ի վերայ յարձակեցան, հարին՝ կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զայլսն ի փախուստ դարձուցին»¹:

Հայերի համար ավելի մեծ վտանգ էր ներկայացնում Զեա բերդի Ասլամաղ-Ղուլի խանը, որը լսելով Ֆաթալի խանի պարտութեան մասին, մեծ զորք է հավաքում և պատրաստվում հայերին գլխովին ջախջախելու:

Սակայն արթուն էր Դավիթ Բեկը: Նա արագորին հավաքում է իր զորքերը և գալիս բանակում Ղարաչիմեն կոչված գյուղի մոտ: Նրան են միանում Չավնդուր, Գենավուզ և մոտակա մյուս շրջանների զորավարներն իրենց զորքերով: Դավիթ Բեկը պաշարում է Զեան:

Զեա բերդը գտնվում է Կապան գավառում, Բուխուրուիս լեռան մոտ, Հալիձոր գետի ձախափին, այնտեղ, ուր Հալիձոր և Օխչի գետերը միախառնվելով կազմում են մի եռանկյունի:

Զեան իր բնական պայմաններով և արհեստականորեն ստեղծված ամրություններով Սյունիքի ամենաուժեղ բերդերից մեկն էր և ուներ ստրատեգիական շատ մեծ նշանակություն: Այդ բերդը Ղափանի ամրոց տերիտորիայի վրա գրեթե գերիշխող դիրք ուներ: Պաշարումից երկու օր հետո սկսվում

¹ Դավիթ Բեկ, էջ 10:

է բերդի գրոհը. այս գրոհի ժամանակ է, որ առաջին անգամ մենք տեսնում ենք ազատագրական պայքարի երկու պանծալի հերոսներին՝ Մխիթար սպարապետին և Տեր-Ավետիսին միասին գործելիս: Բարձրաբերձ ու անառիկ Զեան համառորեն դիմադրում էր: Վերջապես Տեր-Ավետիսին հաջողվում է խաբել բերդապահներին և ներս մտնել բերդ: Միևնույն ժամանակ Մխիթարը գրսից շարունակում է գրոհը, նրա քաջերը բարձրանում են պարիսպների վրա, կոտորում պահապաններին ու ներխուժում բերդը. սկսվում է կոտորածը. ամրոցաբնակներից սպանվում են մոտ 4000 մարդ:

Զեայի գրավումը գավիթբեկյան էպոպեայի գալստն սխրանքներից մեկն է: Այդ բերդի գրավումից հետո Կապան գավառը դառնում է Սյունիքի ժողովրդական-ազատագրական պայքարի կենտրոնը:

Այնուհետև Դավիթ Բեկը բնկնում է Աշբեղում եղած պարսիկ ֆեոդալներին և անցնում է Սիսիան գավառը: Այստեղ 1724 թվականին նա պաշարում է նշանավոր Որոտան բերդը, որը գրավելու գործում խիստ օգնում է բնական մի պատահար: Պաշարման շորրորդ օրը հորդ անձրև է տեղում, անձրևի սաստկությունից պարսպի մի կողմն ինքն իրեն քանդվում է, հայոց զորքը, խրախուսվելով զրանից, անցնում է գրոհի և քանդված տեղից ներխուժելով կոտորում է բերդակալներին ու գրավում

բերդը: Հայերի ձեռքն ընկնում է մեծ քանակությամբ ազգամական հանդերձանք և այլ ավար:

Այս նշանավոր հաղթանակից հետո Գավիթի Բեկն իր զորքի մի մասին Սիսիանից ուղարկում է Բարգուշատի խանի ղեմ, որն այդ ժամանակ սկսել էր ակտիվանալ:

Օգտվելով Գավիթի Բեկի ուժերի այդ մասնատումից, Նախիջևանի խանը հավաքում է 14 հազարանոց մի բանակ և շարժվում է Սիսիան՝ Գավիթի Բեկի վրա: Երբ այս մասին Գավիթի Բեկը լուր է ստանում, շտապ զորահավաք է կատարում Սիսիանում ու Գարբասի կողմերում և գալիս բանակում է Նախիջևանի ղեմի մոտ, որտեղ հասել էր նաև Նախիջևանի խանը: Գավիթի Բեկն իր փոքրաթիվ ուժերով, հարձակման թափի վրա միայն հույսը դնելով, աճցնում է հարձակման: Հայերն սկսում են կոտորել պարսիկներին: Սակայն վերջիններս ձևացնում են կեղծ փախուստ, ցրում են հայերի ուժերը և հանկարծակի ետ գառնալով իրենց զերազանց ուժերով սկսում են հարվածել հայերին: Դրությունը օգհասական էր հայ զորքի համար, նենդ ու դաժան թշնամին նրան սեղմել էր դիտին, առջևից թուրն էր, հետևից՝ ջուրը: Մինչև մութն ընկնելը հայերը կատաղի կերպով դիմադրում են, տալով շուրջ 1000 սպանված: Վրա հասնող գիշերային խավարը փրկություն եղավ նրանց համար և ազատեց գլխովին ջարդվելուց: Հալածական հայերը փախչում

են Սիսիան գալառը, ու զիշերին նրանց է հասնում նաև Գավիթի Բեկը: Ահա այստեղ էր, որ Գավիթի Բեկը առաջին անգամ ճաշակեց պարտության գառնությունը: Դրանից հետո Գավիթի Բեկը որոշ ժամանակ զբաղված էր Հալիձորի բերդը ամրացնելու գործով:

Նույն թվականի ամսանը Բարգուշատի Ֆաթալի խանի հոտերից մեկը, որի մեջ կար շուրջ 2000 ուխար, հովիվները քշում են Չավնդուր՝ արածացնելու: Թորոս իշխանը ուղարկում է մի ջոկատ, որը տեղ հասնելով կոտորում է բոլոր հովիվներին, իսկ ուխարներին վերցնում որպես ավար:

Այս հանգամանքը պատրվակելով, Ֆաթալի խանը իր եղբայր Աղասի խանի հետ հավաքում է 12 հազարանոց մի ջոկատ, և ապա կեազ գավառում իշխող Սափի-Ղուլիին գրում է, թե Չավնդուրը հայերը ապստամբել և սուր են բարձրացրել մահաձեզականների՝ ղեմ, որ ինքը 12 հազարանոց բա-

1 Ստ. Շահումյանի պատմության մեջ գրված է. «...և սուր վերացուցեալ ընդդէմ թուրքաց...» (տես էջ 16): Այս և մի շարք այլ տեղերում պատմիչը թուրք սակավի ի նկատի ունի ոչ թե օսմանյան թուրքերին, այլ ընդհանրապես մահմեդական բնակչությանը, իսկ այդ ժամանակ, այսինքն՝ մինչև 1726 թվականը, երբ սկսվեցին թուրքական արշավանքները դեպի Սյունիք, Սյունիքի մահմեդական բնակչությունը զբթե բացառապես պարսիկներն էին, ուստի համապատասխան տեղերում պատմիչի կողմից գործածված թուրք տնունք փոխարինել ենք մահմեդական կամ պարսիկ անունով:

նակով գնում է Չավնդուրի վրա և որ իրեն օգնելու համար պետք է հավաքել Գենավուզի կողմերում եղած բոլոր մահմեդականներին ու այդ կողմից հարձակվել Չավնդուրի ապստամբների վրա:

Սակայն Սափի-Ղուլին ուշացնում է իր օգնությունը: Այլևս նրան չսպասելով՝ Յաթլի խանն իր եղբոր հետ անցնում է հարձակման: Հայկական զորքերից 150 զինավառ հայեր, թույլ տալով, որ թշնամին առաջ անցնի, նրանց հետևից ծառեր են կտրում անտառից և մի լեռնանցքի մոտ փակում ճանապարհը: Ավելի խոշոր հայկական ուժերը թշնամուն հարվածում են ճակատից, իսկ դարանասուտները՝ հետևից: Պարսկական խառնիճադանջ ամբոխն ընկնում է երկու կրակի տակ և տալով 4000 սպանված՝ խուճապահար փախչում է Բարգուշատ:

Հաջորդ օրը Սափի-Ղուլին մի հեծյալ ջոկատով գալիս է Չավնիս ավանը և այդ կողմերի բեկերին՝ հրավիրում է, որ իրենց զորքերով գան ու միասին ավերեն-թալանեն շրջակա հայ գյուղերը: Մանև

1 Պարսկական վարչական սխեմայում խանությունները բաժանվում էին մահալների, որոնց վրա մեծ խանը՝ բեյլերբեյը (բեկերի բեկը) նշանակում էր առանձին կառավարիչներ՝ խան, սուլթան, բեկ, նայիր, միրբուլուկ, մելիք և այլ անորոշությունով: Իսկ հայ իրականության մեջ բեկ տիտղոսը արվում էր մելիքի կրտսեր որդիներին և ռազմական գործիչներին, ինչպես, օրինակ, Դավթ Բեկ, Մխիթար Բեկ, Ավթանդիլ Բեկ և այլն:

գյուղի հայերն այդ մասին խսկույն խմաց են տալիս թորոս իշխանին. նա 500 սպառազեն մարդկանցով հաջորդ օրն առավոտյան հասնում է Չավնիս: Սափի-Ղուլին դեռ չէր հավաքել շրջակա բեկերին, երբ ենթարկվում է թորոսի հարձակմանը ու տալով 80 սպանված՝ փախուստի է դիմում: Թորոսը, դադարեցնելով Սափի-Ղուլիի հետապնդումը, սկսում է բնաջնջել տեղական մահմեդական բնակչությանը: Գործում էր գոյության պայքարի անողոք օրենքը, և ապրելու իրավունք ստանում էր միայն ուժեղը: Թորոս իշխանը ավերում է սլարսկական երեք գյուղ: Գրան սրպես պատասխան Քիս և Գաց ավանների մահմեդականները հարձակվում են Մանևի վրա, բայց թորոսը սրանց ևս կոտորում է, ու գավառի այդ մասում (Մանևի շրջանում) կառավարիչ է նշանակում կալերցի Պապին, իսկ ինքը վերադառնում Չավնդուր:

Սափի-Ղուլին Լեազի ձորում եղած մահմեդական ազդարնակչությանն իսպառ բնաջնջումից ազատելու համար նրանց գաղթեցնում է Օրդուբադ: Լեազում, Արձանաքարի կողմերում մնում են մահմեդական շորս գյուղեր: Պապի հրամանով հայ զինվորները կոտորում են այդ գյուղերի բնակչությանը և գալիս հասնում են Թաղամեր ավանին, որտեղ ևս 60 ընտանիք կար. սրանք լաց ու կոծով աղաչում են հայ զորականներին, որ իրենց խնայեն, հայտնում են իրենց հպատակությունը և Պապը խնայում

է նրանց: Բայց դա երկար չի տևում. մի երկու ամսից հետո Սափի-Ղուլին Օրդուքաղից մի գիշեր հարձակվում է Սալյունի կողմերում երկու հայկական գյուղերի վրա, կոտորում է տղամարդկանց, թալանում գյուղերը և կանանց ու երեխաներին գերելով՝ տանում Օրդուքագ: Երբ Դավիթ Բեկն իմանում է Սափի-Ղուլիի այդ ավազակային հարձակման մասին, հրամայում է Մխիթար սպարապետին՝ գնալ ու կոտորել Թաղամերի այն 60 ընտանիքներին, որոնց Պապը խնայել էր: Իսկ Պապին հրամայում է գնալ Լևազի ձորը և այդ շրջանն իսպառ մաքրել մահմեդականներից: Սրբություն մատարելով հրամանը, Պապը մեծ ավար է վերցնում Լևազի կողմերից և ուղարկում Զվար ավանը, իսկ ինքը գնում է Վահրավարա գյուղը, որտեղ հրեք հայ ընտանիքներ կային, որոնք ուրացել էին քրիստոնեական հավատն ու իրենց հաշույնները. Պապը կոտորում է բոլորին, բռնագրավում է նրանց ունեցվածքն ու վերադառնում իր գավառը:

Եվ այսպես ամենուրեք, ամբողջ Սյունիքում մենք տեսնում ենք հայ ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներին՝ սուրը ձեռքին իր պատվի ու ազատության, իր գոյության, իրեն հայրենիքի անկախության համար մարտնչելիս:

1725 թվականին Չավնդուրի Թորոս իշխանը հավաքում է իր բոլոր զորքերը, ինչպես նաև աշխարհազորականներին և պատրաստվում արշավել

լու Օրդուքագի վրա: Բայց այս անգամ նրան վիճակված չէր հասնելու իր նպատակին, և պատճառը ոչ թե արտաքին թշնամին էր, ոչ թե Օրդուքաղը գրավելու անհնարինությունը, այլ ներքին դավաճանությունը: Այստեղ է, ահա, որ հանդես է գալիս Սյունիքի ազատագրական պայքարի երկրորդ հայ գավաճանը՝ Բարգուշատի մոտ գտնվող Երիցվանիկ ավանի՝ մելիք Ֆռանգյուլը, Ֆաթալի խանի սիրելին: Մելիք Ֆռանգյուլն ըստ էության կարվածական վեճեր է ունեցել Թորոս իշխանի հետ և առիթ է փնտրել նրան կործանելու համար: Արդ, հենց որ իմանում է Թորոսի ձեռնարկումների մասին, մի խարեական նամակ է գրում նրան, խորհուրդ է տալիս Ֆաթալի խանին ճակատամարտ տալ Բարգուշատի մոտ, ասելով, որ մենք՝ այստեղի հայերս, քեզ թե ու թիկունք կլինենք և միասին կջախջախենք թշնամուն:

Ազնիվ լեռնցին հավատում է պարսկա-թուրքական քաղաքականության խարդախություններին լավատեղյակ գավաճանի խորամանկ խոսքերին և իր զորքով գալիս է Բարգուշատի սահմաններում գտնվող Եղվարդ գյուղը, որը Երիցվանիկ ավանից

1 Այս ավանն իր անունն ստացել է իր մոտի լեռան վրա գտնվող Երիցուկի վանքի անունից, վանքը կոչվում է նաև կարմիր վանք, իսկ ավանը կոչվում է նաև Արծվանիկ կամ Նախիչևանիկ:

մեկուկես մղոն է հեռու Այստեղ նրան միանում է Մելիք Ֆոանզյուլը 2000-ոց մի ջոկատով: Սա թորոս իշխանի երրորդ մեծ ճակատամարտն էր լինելու:

Իրենց բանակներով Եղվարդ են գալիս Յաթալի խանն ու իր եղբայր Աղասին, նրանք ունենին 18 հազարանոց բանակ: Յաթալի խանն օգնական հեծելազոր էր ստացել նաև Արաքսի այն կողմից՝ չալարիների ցեղից:

Թորոսը ճակատամարտից առաջ դիմում է իր գլխավորներին, ողևորում նրանց ու հարձակվում թշնամու վրա: Հայերը կռվում են անօրինակ քաջությամբ ու հերոսությամբ, խանական զորքերը չեն դիմանում ուժեղ ճնշմանը և փախուստի են դիմում: Թորոսն իր զորքով ընկնում է խուճապահար փախչող թշնամու հետևից, սկսվում է մի սարսափելի կոտորած: Թվում էր, որ հաղթությունը կատարյալ էր լինելու, որ թշնամին գլխովին պետք է ջախջախվեր: Սակայն թորոսի հետևից գնացող մելիք Ֆոանզյուլն այդ ժամանակ մարդ է ուղարկում խանի մոտ և հորդորում է նրան հտ դառնալ ու հարձակվել թորոսի վրա, իսկ ինքն էլ խոստանում է թիկունքից հարվածել:

Հուսահատ խանին հենց այդպիսի մի օգնություն էր պետք. թորոսն ընկնում է դավաճանի ու թշնամու կրակի մեջ և շրջապատվում: Սկսվում է կատաղի, օրհասական կռիվ: Սակայն ուժերը

խիստ անհավասար էին, թշնամին անհամեմատ ուժեղ էր զորքի թվական տեսակետից և ուներ դիրքային առավելություն: Եղվարդի դաշտում հերոսական մահով ընկնում է թորոս իշխանը իր 3.000 քաջերի հետ միասին: Թորոսի մարդկանցից ազատվում են միայն 1.400 հոգի և գնում Չավինդուր: Ահա այս հերոսի մասին է, որ այնքան հուզիչ, վիպական գույներով նկարագրում է հայ մեծանուն վիպասան Բաֆֆին իր «Դավիթ բեկ» անմահ պատմավեպում: Բաֆֆին անձամբ շրջադայել է այդ վայրերում և գրի է առել ժողովրդական ավանդությունները: Թորոս իշխանի այդ ճակատամարտի կապակցությամբ նա գրում է. «Եղվարդի մոտ գտնվում է մի նեղ դաշտ, որ մինչև այսօր կոչվում է Նարդիղու-դամի: Այդ անունը նշանակում է նարդիղների կամ շուշանների դաշտ: Եվ իրավ, այդ ծաղկազարդ դաշտը արժանի է իր անունին: Շրջապատված անտառախիտ լեռներով և գեղեցիկ, կանաչազարդ բլուրներով, այդ դաշտը ներկայացնում է երկրի շքեղ բնության հիանալի տեսարաններից մեկը... Ժողովրդական ավանդությունը շուշաններ և նարդիղներ բուսեցնող դաշտի մասին... ասում է, որ այդ շուշանները, այդ նարդիղները բուսնիլ սկսան այն օրից, երբ հայոց քաջերի արյան կաթիլները թափվեցան այդ դաշտի վրա»¹:

1 Բաֆֆի, Դավիթ Բեկ, Հայպետհրատ, 1956, էջ 547:

նել Սափի-Ղուլիի առաջարժումը, սակայն տեսնելով, որ թշնամին թվապես մի քանի անգամ գերազանցում է, խոճապահար դիմում է փախուստի, դրանով իսկ հնարավորություն տալով թշնամուն անարգել կերպով շարժվելու մինչև Դաշտուն, ճանապարհին ավերելով շրջակա բոլոր հայ գյուղերը: Դավիթ Բեկը 2800 մարտիկներով շուտափույթ կերպով հասնում է Դաշտուն: Հենց միայն Դավիթ Բեկի գալստյան լուրն առնելով՝ Սափի-Ղուլին փախչում է Օրդուբադ:

Մեծ էր Դավիթ Բեկի դժգոհությունն ու դաշրույթը Պապի նկատմամբ: Պապի վախկոտության պատճառով բավականին հայեր կոտորվում են, իսկ հազարավոր մարդիկ մնում անօթեան: Այս հանգամանքին ավելանում է նաև այն, որ, ինչպես նշվեց, Պապի զորքն էլ դժգոհ էր նրանից, և ահա Դավիթ Բեկը մահապատժի է ենթարկում Պապին:

Ժողովրդական ավանդությունը որոշ տեղեկություններ է տալիս Պապի և Դավիթ Բեկի փոխհարաբերությունների մասին. բստ այդ ազրջուրի Պապը նեղացած է եղել Դավիթ Բեկից, որի պատճառը հետևյալն է. դեռևս Թորոս իշխանի կենդանության ժամանակ Յաթալի խանը Արաքսի սյն ափից՝ շալաբիների ցեղից օգնական ուժեր ստանալով մի մեծ բանակով հարձակվում է Չավընդուրի վրա: Թորոս իշխանը թշնամուն քաշում է մի ձորի մեջ, ապա ինքը առջևից, իսկ Պապը հե-

տևից օղակում են պարսիկներին ու սկսում կոտորածը: Խանը խայտառակ պարտություն է կրում: Բարձր գնահատելով Պապի ռազմական ընդունակությունները, Թորոսը խոստանում է միջնորդել Դավիթ Բեկի առաջ՝ Պապին զորավարության աստիճան տալու համար. նույն քանը պահանջում է նաև նրանց զորքը: Սակայն Դավիթ Բեկը Պապին նշանակում է ոչ թե զորավար, այլ զորավարի փոխանորդ, «...էն նշանակությունն ոչ միայն հօրեդրօրս, այլև նրա բոլոր զօրքի համար անպատվութիւն համարեցաւ, ուստի և Պապն էլ սրտնեղութիւնէն քաշվեց գնաց իւր տունը...»¹:

Պապին գլխատելուց հետո Դավիթ Բեկը մտադրվում է նրա ամբողջ գերդաստանը ոչնչացնել, այդ պատճառով, — հաղորդում է ավանդությունը, — Պապի ազգատոհմից այլևս ոչ ոք չի մնում Դավիթ Բեկի իշխանության տակ և չի մասնակցում ազատագրական պայքարին, նրանք մեծ մասամբ գնում են Օրդուբադ և այլ տեղեր²:

Պապին մահապատժի ենթարկելուց հետո, կրք Դավիթ Բեկը գնում է Չավընդուր, Սափի-Ղուլին նորից աշխուժանում է ու պատրաստվում արշավանքի: Նա և նրա հետ նաև Ղազուր որդին ու Շահխալամի որդին հավաքում են 12 հազարանոց մի

1 Արաբատ, 1877, էջ 418:

2 Նույն տեղում:

բանակ և արշավում Գենավուզի վրա, ավերում ու կողոպտում են Գենավուզի հայկական գյուղերը: Դավիթ Բեկը արագորեն կազմում է 4 հազարանոց մի բանակ և արշավում Սափի-Ղուլիի ու նրա զաշնակիցների դեմ: Հանդիպումը տեղի է ունենում Մեղրի գետի մոտ: Ճակատամարտը տևում է ամբողջ օրը, երկու կողմից էլ լինում են մարդկային մեծ զոհեր, սակայն Դավիթ Բեկը չի կարողանում անցնել գետը, և թշնամուն թողնելով Մեղրի գետի մոտ, զնում է Հալիձոր: Պատմիչը, ճիշտ է, չի ասում, որ Դավիթ Բեկը պարտություն կրեց այդտեղ, բայց նրա հաղորդած փաստի վերլուծությունը բերում է այն եզրակացությունը, որ Դավիթ Բեկը Մեղրի գետի մոտ շատ ծանր պարտություն է կրել: Այլապես նա թշնամուն ազատ չէր թողնի և, հավանաբար, խուճապահար փախուստ չէր տա մինչև Հալիձոր:

Հաղթանակը թևավորում է Սափի-Ղուլիին ու իր զաշնակիցներին, նրանք անցնում են Գուրհամի կողմերը և ամենուր սփռում իրենց ավազակային ասպատակությունները: Ոչ մի տեղ դիմադրություն չհանդիպելով, Սափի-Ղուլին իր արշավանքը հասցնում է մինչև Մեղրի բերդը և պաշարում է այն:

Կրած պարտությունն այնքան էր ազդել Դավիթ բեկի վրա, որ նա, ըստ էության, հուսահատությունից երկար ժամանակ անգործություն էր

մատնված: Մինչդեռ Սափի-Ղուլիի բանակը Քեււտով ավելի ու ավելի զորեղանում էր: Պատմիչը վկայում է, որ նրա բանակն էին գալիս նույնիսկ Թավրիզից ու Ղարաբաղից (Սև լեռ): Մեղրին առայժմ միայնակ կանգնած էր ահավոր թշնամու հանդեպ և ցույց էր տալիս հերոսական դիմադրություն: Մեղրեցիները բաժանվում են երեք թաղերի, զինում են զենքի ընդունակ ամբողջ բնակչությունը և սկսում են համառ մարտերը:

Պաշարման հինգերորդ օրը պարսիկներն անցնում են գրոհի և որոշ հաջողություն ունենում, նրանք գրավում են Մեղրու փոքր թաղը, սակայն մեղրեցիները քանդում են կամուրջը, և, այդպիսով, Մեղրի գետը դառնում է մի բնական պատնեշ իրենց ու թշնամու միջև: Մեղրեցիներն, իհարկե, հասկանում էին, որ միայն իրենց ուժերով երկար ժամանակ չեն կարող դիմադրել կամ հաղթել իրենցից մի քանի անգամ զորեղ թշնամուն, ուստի նրանք սուրհանդակ են ուղարկում Կալբը և հայտնում, որ դիմադրությունը կարող են շարունակել ևս երկու օր և որ իրենց շուտափույթ օգնություն է հարկավոր: Կալբրում Պապի փոխարեն զորապետ էր նշանակված մեր պատմիչը՝ Ստեփանոս Շահումյանը: Երբ վերջինիս համար պարզ է դառնում մեղրեցիների անհուսալի դրությունը, նա գիշերով հասնում է Չավնդուր և Բայինդուր զորավարին իրազեկ է դարձնում մեղրեցիների

վիճակի մասին: Բայինդուրն շտապով հավաքում է 2000 զինվոր և Շահումյանի հետ միասին մյուս օրը հասնում Մեղրի:

Բայինդուրի այս շտապողականության պատճառն այն էր, որ Սափի-Ղուլին նոր օժանդակ ուժեր էր սպասում Արաքսի մյուս ափից, անհրաժեշտ էր կանխել նրանց: Առավոտյան թշնամին տեսավ, որ մեղրեցիների զորքը խիստ շատացել է, պարսիկներն սկզբում չէին հավատում, թե մեղրեցիները գրսից օգնություն են ստացել, նրանք կարծում էին, որ մեղրեցիները իրենց կանանց տղամարդու շորեր են հագցրել, տվել են ռազմական հանդերձանք և բազմաթիվ կեղծ գրոշակներ, որպեսզի իրենց սարսափեցնեն: Սակայն շատ շուտով նրանք համոզվեցին, որ գործ ունեն ոչ թե կանանց, այլ մարտերում հռչակված հայոց քաջերի հետ:

Մինչև Բայինդուրի Մեղրի հասնելը, գիշերը մեղրեցիները հանկարծակի դուրս են գալիս քաղաքից և հարձակվում թշնամու վրա: Ընդհարումը շատ սասախիկ էր, թշնամու բանակում մեծ շփոթություն է առաջանում, որը շուտով փոխվում է խուճապի: Գիշերային խավարը խանգարում է սրոշել, թե ինչ քանակի ուժեր են հարձակվել իրենց վրա: Խուճապն այնքան մեծ է լինում, որ Շահիսլամի որդին իր 2000 մարդկանցով փախչում է մինչև Օրդուբադ: Սակայն պարսիկներն

ականհայտ թվական գերակշռություն ունեին, ուստի մեղրեցիները չեն կարողանում զլխովին ջախջախել նրանց ու վերադառնում են բերդը:

Այս հերոսամարտն արդեն կատարված էր, երբ Բայինդուրը տեղ հասավ: Նա իսկույն կազմեց ռազմական գործողությունների պլանը, ամբողջ զորքը բաժանեց երեք մասի, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 860 մարդուց: Սյդ գնդերից մեկը հրաման ստացավ հարձակվելու ճակատից, իսկ մյուս երկուսը՝ թևերից: Այսպիսով պարսկական բանակը շրջապատվում է, սկսվում է կտրուրածը: Ըստ մեր պատմիչի չափազանց քրած տվյալների, Սափի-Ղուլին տալիս է 11 հազար սպանված և զորքի մնացորդներով փախչում է Օրդուբադ: Հայերը վերցնում են մեծ թվով զերիններ, որոնց թվում կար մի նշանավոր մահմեդական՝ հաջի Շափին, որին հետագայում փոխանակում են հայ գերիների հետ:

Բայինդուրի այս հաղթանակը մեծ ոգևորություն է առաջացնում Ղափանում, ժողովրդական-

1 Այստեղ պատմիչը ականհայտ կերպով պակասեցրել է հայ զորքի թիվը, որն ըստ նրա 2580 մարդուց էր բաղկացած: Սակայն, հենց միայն Բայինդուրը 2000-ոց մի ջոկատով էր եկել օգնության, իսկ Մեղրին այն ժամանակ բավականին մեծ բերդաքաղաք էր և կունենար ոչ թե 580 զինվոր, մանավանդ այն զեպքում, երբ զենքի ընդունակ բոլոր մարդիկ զինված էին, այլ մի քանի հազար զինվոր:

ազատագրական պայքարը, որ մի փոքր թուլացել էր, նորից վերելք է ապրում:

Նույն՝ 1725 թվականին Դավիթ Բեկն զբաղվում է Փոքր Ղափանի ու Միլիանի կողմերում ավազակությամբ զբաղվող թափառական մահմեդական ցեղապետներին ու նրանց հորդաներին ոչնչացնելով: Այսպես, օրինակ, նրա երկու անվանի զորավարները՝ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը, Ղազանկուլի լեռներում հարձակվում են բռնվորների վրա ու կոտորում նրանց: Այստեղ Մխիթար սպարապետը քիչ էր մնում գերի ընկնելու և միայն Տեր-Ավետիսի քաջության շնորհիվ նա ազատվում է գերությունից: Ապա նրանք ավար են վերցնում այդ ցեղերից ամբողջ ունեցվածքը, այդ թվում 6300 ոչխար, 430 ալլ անասուններ, ու բերում Հալիձոր:

Նույն բախտին են արժանանում նաև Գաղբել լեռան վրա գտնվող թափառական ցեղերը: Դրանից հետո արշավանք է կազմակերպվում Բարգուշատի կողմերում եղած թափառական ցեղերի դեմ, որոնք ասպատակելով անցել էին Կապանի լեռները և շարունակում էին առաջ շարժվել: Մխիթար սպարապետը 1800 քաջերի զուխ անցած հարձակվում է նրանց վրա ու ցիրուցան անում:

Այդ ժամանակ նորից իրեն զգացնել է տալիս Բարգուշատի Ցաթալի խանը: Նա մեծ զորքի զբլուխ անցած, ավերելով ու կոտորելով խաղաղ հայ

բնակչությանը, գալիս հասնում է մինչև Խոտանան գյուղը, բայց այստեղ նրա դեմ դուրս է գալիս Մխիթար սպարապետը, մեծ ջարդ է տալիս ու փախուստի մատնում, սակայն հետապնդումը չի ցանկանում շարունակել, որովհետև զժամած էր Դավիթ Բեկի հետ և զբանով թերևս ցանկանում էր Դավիթ Բեկին զգացնել տալ իր ուժը: Գժտության պատճառը անհայտ է, պատմիչը ոչինչ չի ասում այդ մասին: Մի անգամ էլ է գժտվել Մխիթար սպարապետը Դավիթ Բեկի հետ, այդ մասին մանրամասն կխոսենք օսմանյան արշավանքների կապակցությամբ, իսկ տվյալ դեպքում Մխիթարի գժտությունը զգալի վնաս է հասցնում հայ զորքերին: Պատմիչը հետևյալ ձևով է նկարագրում այդ դեպքը. Մխիթար սպարապետը խռոված էր իր տեր Դավթի հետ, ուստի երբ հայոց զորքը սկսում է կոտորել թշնամուն ու հալածել, Մխիթարը հրամայում է զորավարներին դադարեցնել կռիվը և հտ գալ: Այս հանգամանքը մեծապես խրախուսում է թշնամուն և նրանք հարձակվում են հայերի վրա, կոտորում են 300—400 մարդ ու մեծ թվով գերիներ վերցրած վերադառնում Բարգուշատ: Գերիների մեջ էր նաև Ստեփանոս Շահումյանը: Այդ ժամանակ ծանր վիրավորվում է նաև Մեկր Փարսազանի որդի Բալի զորավարը, որի պա-

1 Տես, Դավթ Բեկ, էջ 40:

րանոցը կիսով չափ կտրվել էր կովի ժամանակ, և նա ուշագնաց ընկել էր Խոտանանի մոտ: Բարեբախտաբար նա չի մահանում և երեք օրից հետո հասնում է Հալիձոր:

Շահումյանը պատմում է, որ ինքը երկար շմեաց Ֆաթալի խանի մոտ գերության մեջ, այնտեղ հանդիպում է մի բարի մահմեդականի, որը հնարավորություն է ստեղծում փախչելու:

Մխիթար սպարապետի արարքը մեծ զայրույթ է պատճառում Դավիթ Բեկին, նա նույնիսկ ցանկանում է գլխատել Մխիթարին և միայն զիջելով մյուս զորապետների թախանձագին խընդրանքներին՝ ներում է:

Ավանդությունն ասում է, որ մահապատժի փոխարեն Դավիթ Բեկը ծեծել է տալիս Մխիթարին¹:

Մխիթարի արարքը դավաճանություն չէ, ինչպես կարծում է Լեոն, Մխիթարը նպատակ չի ունեցել վիժեցնել հայերի ազատագրական պայքարի գործը, այլ հոգով և սրտով նվիրված է եղել նրան: Դա հն ցույց տալիս մինչև այդ ու դրանից հետո նրա կատարած հերոսական գործերը: Իսկ վերոհիշյալ արարքը պետք է համարել որպես անձնական վատություն Դավիթ Բեկի նկատմամբ:

Վերջանում է դաժան մարտերով ու մեծագոր-

¹ Տես, Ե. Կալայան, Ջանգեղուրի դաւառ, Ազգագրական հանդես, 1904 թ., գիրք XII, էջ 193:

ծություններով լի Սյունյաց լեռնաստանի ժողովրդական-ազատագրական պայքարի առաջին էտապը (1722—1726 թթ.) որն ուղղված էր պարսկական բռնապետության դեմ. այն ավարտվում է հայերի հաղթանակով, Սյունյաց աշխարհում ստեղծվում է հայկական իշխանություն Դավիթ Բեկի գլխավորությամբ:

Ազատագրական պայքարի այս առաջին էտապի հաջողությունը նպաստեցին հետևյալ հանգամանքները.

ա) Պետրոս կայսեր Պարսկական արշավանքը բարոյական խոշոր ներգործություն ունեցավ ազատագրական պայքարին ավելի հուժկու թափ հաղորդելու և ժողովրդի ազատատենչ ոգին ավելի բարձրացնելու համար.

բ) Թուլացած և անդամահատված Իրանը ազատագրական շարժումների համար շատ նպաստավոր էր, քանի որ պարսկական կենտրոնական իշխանություն գրեթե չկար և պարսկական անձայրածիր տիրակալության բազմաթիվ կետերում նույնպես բռնկվել էին ազատագրական շարժումներ ու ապստամբություններ.

գ) Թուրքիան, որ ավելի լուրջ վտանգ էր ազատագրական պայքարի համար, ինքն էր պատերազմում Իրանի դեմ ու դրանով նպաստում Դավիթ Բեկի գլխավորած շարժման հաջողությանը.

դ) հայ ժողովուրդը մղում էր արդարացի, ա-

վատագրական պատերազմ, որի հաջողութեամբ շահագրգռված էին հասարակության բոլոր խավերը.

ե) ազատագրական պայքարի ղեկավարը՝ Դավիթ Բեկը, հիանալի առաջնորդ էր: Նա աչքի էր ընկնում իր լիակատար անսասանութեամբ ու անհողողող վճռականութեամբ, արագ ու ճիշտ վճիռներ կայացնելու և հրամաններ տալու ընդունակութեամբ: Բնությունը Դավիթ Բեկին առատորեն էր օժտել մտավոր կարողություններով, նա ուներ ստրատեգիական հիանալի ընդունակություններ, անձնական անխորտակելի, սառնարյուն քաջութուն, ռազմական մեծ փորձ, լայն ժողովրդականություն՝ բնակչության ու բանակի մեջ, և սարսափ տարածող անուն՝ թշնամիների մեջ: Տաղանդավոր զորավարը նաև հմուտ դիվանագետ էր. այս մասին մենք առիթ կունենանք խոսելու հետագա էջերում:

4. ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԴԵՊՒ ՍՅՈՒՆԻՔ

Նախորդ գլխում տեսանք, որ 1722—1726 թվականներին Դավիթ Բեկը կարողացավ գրեթե ամբողջ Սյունիքն ազատել պարսկական բռնապետական լծից:

Ցնծոս էր Սյունյաց աշխարհը, վերջապես երկիրը մաքրված էր պարսիկներից ու զանազան կիսավայրենի թավառական ցեղերից: Հայ շինականն սկսեց ազատ շնչել, զբաղվել իր վար ու ցանքով. իր առօրյա հոգսերով: Աշխատավորական ամենալայն մասսաները ծարավի էին խաղաղության ու հանգստության, պատերազմը ավերել էր նրանց տնտեսությունը, հասցնելով աղքատության ու թրջվառության: Այժմ նորից հնչեց սյունեցու հորովելը, պտտվեցին գեղջկուհու իլիկն ու ջահրան, խոջայի բերած հաղվազյուտ զարդերն ու առլասեղենը նորից սկսեցին զարդարել հարսանիքների

ընկալանքի մասին քննարկում քննարկում, քննարկում
ու խորտակելով ամեն մի դիմադրություն: Կյանքը
կանգ է առնում Հայոց աշխարհում:

Իր անգիտությանը ու դաժանությանը հռչակված
օսմանցին, հավատարիմ իր այդ հռչակին, սկսե-
անխնա կոտորածը: Կոտորում էր թե՛ զինվորին,
թե՛ խաղաղ բնակչին, իսկ Հայոց աշխարհի գեղե-
ցիկ կանայք դառնում էին հարեմի՝ ամենաստու-
կրթերի ու ամենազազրելի արատների այդ յուրա-
տեսակ հիմնարկության, գերին:

Թուրքերը միշտ էլ աչքի են ընկել նվաճված ժո-
ղովուրդների նկատմամբ իրենց վայրենությանը ու
կառավարման դաժանությանը: Պլանաչափ, սիս-
տեմատիկ ու պաշտոնական, անողոք, անզուսպ ու
չլաված կողոպուտը կատարվում էր այն բոլոր եր-
կրներում, որտեղ սուլթանը մտցնում էր իր բռնա-
պետական կարգերը: Թուրքական բանակն իր հե-
տևից թողնում էր տների ծխացող ավերակներ
ամենուրեք թափված մարդկային դիակներ, լաց
հառաչանք ու արյուն:

Թվում էր, թե ամեն մի դիմադրություն ավել-
լորդ է: Թուրքերը շրջապատեցին «...յամենայն
կողմանց զերկիրն Դաւթի, զՍօթնաբերդ դաւառն
Խափանու»¹: Երեւոց հայ շինականի, զինվորի ու
զորապետների մեծ մասի՝ հաղթանակի նկատմամբ

¹ Դաւթի բեգ, էջ 43.

ունեցած հավատը, նրանց համակեց բոլորովին
չլաված ու չտեսնված խուճապ: Թուրքական յաթա-
ղանի ահն ու սարսափը մի պահ ճզմեցին ու ճնշե-
ցին նրանց ազատասեր հոգին:

Սյունյաց լեռների անպարտելի ու ահարկու ար-
ծիվը մնաց մենակ, նրան լքել էին իրեն իսկ կազ-
մած հայ զորքերը, հավատարիմ էին մնացել, եթե
հավատանք տատմիչին, 17 հոգի և Տեր-Ավետիսն
ու մելիք Փարսաղանը սակավաթիվ մարդկանցով¹։
Ահա այս մի բուռն հավատարիմների հետ Դաւթի
Բեկը գնաց փակվեց Հալիձորի իր անմատչելի ամ-
րոցում, սար ու ձոր դղրդացնող առյուծի մոնչունը
միառժամանակ լռեց: Թշնամին ավելի լկտի ու հա-
մարձակ դարձավ, նա նույնիսկ գնաց պաշարեց
Հալիձորը: Ահա այստեղ է, որ Դաւթի Բե-
կի զորավարական մեծ տաղանդն ու անզուգական
հերոսությունը:

¹ Ուշագրավ է Շահումյանի նկարագրությունը, նա պատ-
մում է, որ 1726 թվականին թուրքերը անթիվ անհամար
«...զօրօք ի Սինեաց աշխարհն մխեցան, և կալան յամենայն
կողմանց զերկիրն Դաւթի զՍօթնաբերդ դաւառն Խափանու
Յայնժամ ամենայն բնակիչք դաւառին առ հասարակ խոռոկե-
ցան, սասանեցան, թողին լրին զԴաւթի, և գնացին մտին ընդ
լծովն օսմանցոց: Եւ մնաց միայն Դաւթի Եօթնեւտասան սպա-
ռազէն արամբ ի յանապատն Հալիձորոյ, ուր կանգնեալ էր
զաւտով բերդն: Ընդ նմա էին նաև երեք կախկողոսունք
Տաթևու և Երկոստան բահանայք, զհետ գնացին նաև Տեր
Աւետիսն, և Մելիք Փարսաղան սակաւ ոմամքք, զի զօրքն ամե-
նեքեան թոթափեցան ի նոցանէ» (Դաւթի բեգ, էջ 43—44):

Մինչև Հալիձորի ճակատամարտին անցնելը նկատենք, որ Դավիթ Բեկին հավատարիմ մնացածների մեջ շկար Մխիթար սպարապետը: Պատմիչը անուններով թվում է Տեր-Ավետիսին ու մելիք Փարսազանին, Մխիթար սպարապետի անունը չի հիշատակում, իսկ Մխիթարը Դավիթ Բեկից հետո երկրորդ անձնավորությունն էր Սյունիքում, և եթե նա Դավիթ Բեկի հետ լինե՞ր՝ Ստ. Շահումյանը անշուշտ նրա անունը ևս կհիշատակեր:

Արդ, որտե՞ղ էր Մխիթար սպարապետը:

Ինչպես ասացինք, օսմանցիները Սյունիք են մտնում 1726 թվականի գարնանը, իսկ մոտ մեկ տարի հետո, 1727 թվականի գարնանն արդեն պաշարում են Հալիձորը. Հալիձորի ճակատամարտում մենք նորից հանդիպում ենք Մխիթար սպարապետին, ուրեմն մոտ մեկ տարի Մխիթարը անջատված է լինում Դավիթ Բեկից: Ի՞նչ էր անում նա այդ մեկ տարվա ընթացքում:

Պ. Հարությունյանի կողմից 1952 թվականին հայտնաբերվել է Մխիթար սպարապետի խնդրագիրը ռուսական կառավարությանը¹: Մխիթարի այդ խնդրագրում գրված է, որ լեզգիները, պար-

սիկները, թուրքերը հարձակումներ են գործում հայերի վրա, կոտորում են բնակչությանը, ավերում են գյուղերն ու քաղաքները, հատկապես թուրքերի բարբարոսություններին թիվ ու համար չկա: Մենք սղնախներ ենք ստեղծել, շատ թուրքեր ենք կոտորել արգեն, բայց նրանք նորանոր ուժերով եկել շորս կողմից շրջապատել են մեզ, մեր ուժը բիչ է, ուստի սարկաբար խնդրում ենք ձեր կայսերական մեծությունից՝ մեզ մի օգնություն ուղարկել:

Խնդրագիրը ստորագրել են Մխիթար Բեկը և Տյուզբաշիներ՝ Եղիազարը, Ավթանդիլ Բեկը, Բայլինգուրը, Հովհաննեսը, մելիք Բալասանը և այլն:

Այս փառաթուղթը ուղերձ (послание) անվանելը սխալ է, ավելի ճիշտ կլինի այն անվանել խնդրագիր: Մխիթար Բեկի այդ խնդրագիրը գրվել է 1726 թվականի մարտի 24-ին, կապանի Ս. Աստվածածին կոչված եկեղեցում:

Մխիթար Բեկի այս խնդրագիրը հուսահատ գորակետի հուսահատ փորձն էր, որն արժանաչավ դարբաղցիների բազմաթիվ խնդրագրերի տխուր ճակատագրին:

Իր այդ խնդրագրին Մխիթար սպարապետը պատասխան չի ստացել:

Ի՞նչ պայմաններում է գրվել խնդրագիրը: Ինչպես տեսանք, Հալիձորում Դավիթ Բեկի հետ 1726 թվականի սկզբներում շկար Մխիթար սպարապե-

¹ Տես, П. Арутюнян, Послание Мхитар-бека русскому правительству. (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1952, № 3, էջ 83—99):

տր: Սակայն, ինչպես իրավացի կերպով նկատում է Ա. Միրզոյանը¹, Մխիթարը ոչ թե դավաճանել է ընդհանուր գործին, այլ Դավիթ Բեկից անկախ համախմբել է հայկական ուժեր և մի որոշ ժամանակ պայքարել օսմանցիների դեմ: Հենց այդ ժամանակ էլ, մենակ մնալով, իր հույսով լի հայացքը դարձրել է դեպի ուսաց արքունիքը: Այդ ժամանակ նա ունեցել է ընդամենը երկու յուզբաշիններ, որ անմիջականորեն ենթարկվել են իրեն (սա աղբն-հայտ է դառնում նրա խնդրագրից), և որոնք մյուս վեց յուզբաշինների հետ միասին ստորագրել են խնդրագիրը: Սակայն, զգալով անջատ պայքարի անհուսալիությունը, Մխիթարը նորից միանում է Դավիթ Բեկին և մեծամեծ քաջագործություններ է անում Հալիձորի մոտ օսմանցիներին ջախջախելու ժամանակ:

Պ. Հարությունյանը, հրատարակելով սույն խնդրագիրը, անում է մի շարք սխալ եզրակացություններ, որոնք քննադատել է Ա. Միրզոյանը: Այսպես, Պ. Հարությունյանը գտնում է, որ բեկ տիտղոսը կրում էին որպես ռազմական ղեկավարների՝ Դավիթ Բեկը, Ավթանդիլ Բեկը, Մխիթար Բե-

¹ Տես, Ա. Միրզոյան, Մխիթար-բեկի կողմից ուսական կառավարությանն ուղղված ուղերձի հարցի շուրջը (Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1952, № 8, էջ 87—98):

կը և այլն, և որ դա նշանավոր տոհմի պատկանելու նշան չէր, հետևաբար, եզրակացում է Պ. Հարությունյանը, Մխիթարը նշանավոր տոհմից չէր, ուներ հասարակ ծագում. հենց այս սխալ եզրակացությունն էլ ըստ էության հիմք է հանդիսացել վիպասան Ս. Խանզադյանի համար, որը Մխիթարին անվանում է «ոամիկի որդի»:

Բեկ տիտղոսի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել խոսելու և նշել ենք, որ այդ տիտղոսը հայ իրականություն մեջ կրել են մեկիքների կրտսեր որդիները, ինչպես նաև ռազմական ղեկավարները: Հետևաբար, Մխիթար սպարապետը, ինչպես նաև Դավիթ Բեկը ունեն աղնվական և ոչ թե «ոամական» ծագում:

Պ. Հարությունյանը գտնում է, քանի որ խընդրագրի տակ չկա Դավիթ Բեկի ստորագրությունը, որը շարժման գլխավոր ղեկավարն էր, ապա Դավիթ Բեկն այդ ժամանակ, այսինքն՝ մինչև 1726 թ. մարտի 24-ը, արդեն մահացել էր: Մենք արդեն տեսանք, թե ինչու Դավիթ Բեկի ստորագրությունը չկար, իսկ որ Դավիթ Բեկը զբաղված էր հետո դեռ շատ քաջագործություններ է արել և մահացել է 1728 իվականին, այդ մասին ունենք պատմիչի՝ Ստ. Շահումյանի ուղղակի վկայությունը:

Պ. Հարությունյանը անվերապահ կերպով հավատում է Մխիթար սպարապետի գերեզմանաքարի վրայի արձանագրության այն թվականին (1727

թ.), որ տալիս է Ծ. Լալայանը 1899 թվականին հրատարակած իր «Զանգեզուրի դաւառ» ուսումնասիրութեան մեջ: Այնտեղ գրված է¹.

Այս է տապանի հանգստեան,
Իջեալ մարմնով ի դերեզման,
Սաչ Մխիթար մեծ անուանեալ,
Սորայ օնէր իշխանութիւն,
Սա բեմորատ զնաց ջիվան,
Որ է երկրէն սաչ Կեանճով էր.
Նահատակուցառ ՌՃՀԶ²:

Այս արձանագրութիւնից երևում է, որ Մխիթարը Գանձակեցի է, մահացել է 1727 թվականին. այստեղից Պ. Հարութիւնյանը եզրակացնում է, որ Սյունիքի ազատագրական պայքարը վերջացել է 1727 թվականին և բոլոր իրադարձութիւնները թվականը երեք տարով ետ է տանում: Սակայն Ա. Միրզոյանը իր վերոհիշյալ հոդվածում վկայակոչում է նույն Ծ. Լալայանին, որը 1904 թվականին նորից հրատարակում է Մխիթարի գերեզմանաքարի արձանագրութիւնը, որտեղ Մխիթարի մահվան թվականը տրված է ՌՃՀԶ³ (1179+551=1730).

¹ Տես, Ծ. Լալայան, Զանգեզուրի դաւառ, 1899, էջ 35:

² ՌՃՀԶ=1176+551=1727 թ.

³ Տես, Ազգագրական հանդես, 1904, գիրք XII, Ծ. Լալայան, Զանգեզուրի դաւառ, էջ 197:

ըստ էութեան Ծ. Լալայանը 1899 թվականին սխալմամբ էր գրել ՌՃՀԶ: Որ իրոք Մխիթար սպարապետը մահացել է 1730 թվականին և Սյունիքի ազատագրական պայքարն էլ տևել է մինչև 1730 թվականը, այդ մասին պատմում է նաև Ստեփանոս Շահումյանը և մենք ոչ մի հիմք չունենք կասկածի տակ առնելու նրա հաղորդած փաստը:

Այժմ անգրադառնանք Հալիձորի դեպքերին:

Մենք տեսանք, որ նախքան Հալիձորի պաշարումը Դավիթ Բեկին լքողներից մեկն էլ Մխիթար սպարապետն էր, որ առանձին զորքեր էր հավաքել ու պայքարում էր օսմանյան զավթիչների դեմ: Խոսել ենք նաև այն մասին, որ Մխիթար սպարապետը մի անգամ էլ է խոռովել Դավիթ Բեկից, որի մասին հիշատակում է Ստ. Շահումյանը¹: Որ իրոք Մխիթար սպարապետն ու Դավիթ Բեկը որոշ ժամանակ գծալից են հղել իրար հետ, այդ մասին ժողովրդական ավանդութիւնն էլ որոշ բան պահպանել է: Այսպես, երբ խոսք է լինում Դավիթ Բեկին վրաստանից կանչելու՝ լեզգիների դեմ պայքարելու համար, Մխիթար սպարապետը, որ այդ ժամանակ իբր թե Հալիձորում էր գտնվում և մեկից փարսազանի կողմից կարգված էր զորքերի հրամանատար, ասում է. «Լեզգիները զալիս են՝ թող զան, ով տղամարդ է, թող անուն հանն: Կարիք

¹ Տես, Դավիթ բէգ, էջ 39—41:

չկա Դավիթ Բեկին կանչելու¹։ Ժողովրդական այս
ավանդույթունը վկայում է այն մասին, որ ազա-
տագրական պայքարի այդ երկու ղեկավարների
պառակտումների գործում դեր է խաղացել ֆեո-
դալական մասնատվածությունը։

Սակայն Դավիթ Բեկը չվհատվեց իր սիրած
զորքերի ու զորապետների պատճառած դառնու-
թյունից, չվախեցավ օսմանյան ահուկի բանակից,
արիարար սկսեց ամրացնել Հալիձորի բերդը և այն
վերածեց իրոք մի անառիկ ամրոցի։ Նա իր շուրջն
հավաքեց ու ղինեց բերդում գտնվող զենքի ընդու-
նակ բոլոր տղամարդկանց և նրա զորքի թիվը հա-
սավ մոտ 350 հոգու։ Հալիձոր եկած օսմանցիների
մասին պատմիչը հետևյալն է ասում. «օսմանցի-
ների Ղափան գալու իններորդ ամսին, որը Դավիթ
Բեկի դալստյան հինգերորդ տարին էր, բաղմամբիվ
զորքով Ղափան եկան հասան օսմանցիների սուլ-
թան Ահմեդի Բեքիր և Արաք-Ալի փաշաները, նրանց
հետ էր նաև Բարգուշատի Ֆաթալի խանը։ Դրա-
նից հետո բոլոր տեղերում եղած հայ ու թուրք
զորավարներին հրամայեցին գալ հավաքվել այն-
տեղ, և նրանց մոտ բոլոր կողմերից եկան թուրքա-
կան զորքերը, որոնք իրենց հետ վերցրել էին նաև
Գողթան գավառի, Ագուլիս քաղաքի, Օրդուբադի,

¹ Ազգագրական հանդես, 1904, գիրք XII, Ե. Լալայան.
Ջանգեդուրի գառա, էջ 180։

Փիսիանայի, Բարգուշատի, Չավնդուրի, Սեղրու,
Ղափանի հայկական զորքերը, ինչպես նաև զարա-
լուտու կողմած թուրքերին և Սև լեռան (Ղարադաղի)
բնակիչներին. այս բոլորը եկան հավաքվեցին և
նրանց թիվը հասավ 60—70 հազարի։ Բոլոր զորքե-
րի զորահանդես կատարեցին, պատրաստվեցին ու
եկան Դավիթ Բեկի վրա։ մեծ պասի տասներեքե-
րորդ օրը եկան քանակեցին Հալիձորի հանդեպ, գե-
տի մյուս կողմում։ Իսկ Դավթի մոտ եղած զորքը,
երբ այդ ահագին բաղմունքունը տեսավ՝ զարհու-
րեց, նրանցից շատերը զնացին փաշաների մոտ և
անձնատուր եղան։ Բայց որոնք քաշ էին ու
արի՝ խիզախաբար պատրաստվում էին պատե-
րալմի»¹։

Այսպիսով, Դավիթ Բեկի փոքրաթիվ զորքը մի
նոր զտման է ենթարկվում. անարիներն ու վախ-
կոտները հեռանում են, և միայն իրոք քաջերն են
մնում Դավիթ Բեկի մոտ, շնն լքում իրենց սիրելի
զորավարին։

Շահումյանի պատմությունից պարզվում է, որ
Սյունիքի գրեթե բոլոր կողմերից թուրքերը հայկա-
կան զորքեր էին բերել Հալիձորի մոտ, ըստ էու-
թյան այդ հայ զորքերի մի մասը բերվել էր բռնու-
թյամբ, իսկ մի մասը (և հավանական է ավելի
փոքր մասը) եկել էր կամովին։ Թեև պատմիչը չի

¹ Դավիթ Բեկ, էջ 44—46։

ասում, բայց պետք է ենթադրել, որ բռնությունները հայ զորքերը ճակատամարտի վճռական պահին անցել են Դավիթ Բեկի կողմը, խուճապ առաջացրել օսմանյան բանակում և նպաստել Դավիթ Բեկի հաղթանակին:

Չնայած բոլոր կողմերից հավաքած օգնական ուժերին, դարձյալ անհավանական է, որ Հալիձորի մոտ թուրքերը կենտրոնացնեին 60—70 հազարանոց հակալական բանակ: Մինչև Հալիձոր հասնելը թուրքերը գրավել էին բավականին տերիտորիա և իրենց գրաված բոլոր բնակավայրերում՝ քաղաքներում, ամրոցներում, բերդերում անշուշտ զորամասեր էին թողնում իրենց հիմնական ուժերից: Եվ յալաների բացահայտության պատճառով զժվար է ճշգրիտ որոշել, թե ինչքան զորք էր եկել Հալիձորը պաշարելու: Պետք է ենթադրել միայն, որ Սյունիք ներխուժած օսմանյան ամբողջ զորքն է եղել 60—70 հազար՝ տեղական օգնական ուժերի հետ միասին, և այդ զորքի մի մասը միայն, թերևս կեսն էր եկել Հալիձոր:

Պատերազմական գործողություններն սկսվում են 1727 թվականի «մեծ պասի տասներեքերորդ օրը» (ապրիլ ամսի վերջերին): Դավիթ Բեկն իջնում է բերդից, գրավում է բերդի մոտ եղած գյուղը, որը թշնամու հանդեպ էր՝ Հալիձոր գետի ափին, և իր քաջերից 160 հոգի ուղարկում է գետի անցման տեղերը փակելու համար: Այդ 160 հոգին

երկու օր շարունակ կատաղի մարտեր մղելով հերոսաբար դիմադրում էին թուրքերին և թույլ չէին տալիս գետն անցնելու: Բայց երրորդ օրը օսմանյան բանակում եղած հայ հրացանավորները կատարում են իրենց դավաճանական սև գործը: Հիանալի կերպով ծանոթ լինելով տեղանքին, նրանք մի այլ տեղից առաջնորդում են թուրքերին գետն անցնելու և գրավում են գյուղի մի մասը: Դավիթ Բեկն ստիպված նահանջում է և իր փոքրաթիվ զորքով փակվում Հալիձորի ամուր բերդում: Թուրքերը շրջապատում են բերդը:

Վեց օր անընդհատ տեղի էր ունենում հրացանաձգություն: Օսմանցիներից ամեն օր կոտորվում էր մինչև 400 մարդ, իսկ Դավիթ Բեկի մարդկանցից շատ քիչ էր զոհեր լինում, քանի որ նրանք պարիսպներով պաշտպանված էին բերդի բարձր հուսալի կերպով պաշտպանված էին բերդի բարձր պարիսպներին մոտեցան անզղաձև կառուցվածք ունեցող 26 հատ մեծ մեքենաներով. դրանք երեք կողմից հենում են պարիսպներին ու փորձում ներխուժել բերդը:

Սակայն զուր էին զալաղած թուրքերի կատաղի ճիգերը, պարիսպների պահպանները հերոսաբար պաշտպանում էին իրենց բերդը. նրանք վերևից դնդակահարում էին գրոհողներին, վառվող նյութեր լցնում նրանց վրա ու ցած գլորում մեքենաներից: Այսպես տեսնում է մինչև օրվա ութերորդ ժա-

մը: Ստեփանոս Շահումյանը գեղարվեստական մեծ վարպետությամբ է նկարագրել այդ պահը¹:

Օրվա ութերորդ ժամին, երբ արդեն վերանում էր ապրելու հույսը, զորքի առաջ հանդես եկան Սյունիքի աղատագրական պայքարի երկու ակա- նավոր հերոսները՝ Մխիթար սպարապետն ու Տեր- Ավետիսը: Նրանք սկսեցին բորբոքել զորքի ցասու- մը, հայրենասիրությունն ու պատվասիրությունը: Բզեռերելով զինվորներին, նրանք ասում էին.

«...քաջացեք, մի վախեցեք, եկեք մեզ հետ, եթե մեր վերջը հասել է՝ քաջությամբ մեռնենք, որով- հեռե լավ կլինի մեզ համար պարիսպներից դուրս արիությունը մեռնել, քան թե այստեղ, մեր աչքի առաջ տեսնել մեր ընտանիքների և բարեկամների մահն ու այլ դժնդակություններ...»²:

Այսպես խրախուսելուց հետո, երկու հերոսները

¹ «Անց էր տեսնել գալի ահեղ տեսիլ կատաղեալ զօրացն ազմուկ աղաղակին. զի իբրև զմերևնայսն կանգնեցին, հա- րիրաւոր և հաղարատր զբօշակակիրքն յառաջ խաղացին, ապա զօրքն ամենայն զկնի հեղանէին իբր յորձանս յորդախա- ղաց դետոյ ահագին զոյմամբ, և կամ իբր ամեհի ալիս ծովու յուղեալք բոնութենէ հոգմոց զարիւ և զարիւ գալին, մի զմիով անցանէին, և ի մերենայից անտի ի վերայ պարսպացն դի- մէին, և ահասարակ յերկոցունց կողմանց ձայն փողոյ, և ձայն թմրկաց, զոչին զօրաց, շառաչին հրալից գեղակաց, նայթմունք հրացանից զականջս իւրացոցանէին» (Դատիթ րէզ, էջ 48):

² Դատիթ րէզ, էջ 49—50:

300 զինավառ մարդկանցով, մահն աչքի առաջ ունենալով, օրվա ութերորդ ժամին դուրս եկան բերդի գաղտնի դռնից և մեռնողի մոլեգին կատա- ղությունը հարձակվեցին օսմանյան հսկայական բանակի վրա: Սյունիքի աղատագրական շարժման բախտը կախված էր այս հարձակման ելքից, իսկ այդ ելքն այնքան փայլուն էր, որ մարդկային միտքն անգամ երեակայել չի համարձակվում. սա- կայն խոսքը տանք պատմիչին.

«Ով սքանչելեացս, ով մեծի բարեգթութեանցն Աստուծոյ, զի երեք հարիւր (300) վառեալք ի յութ- երորդ ժամու աւուրն, ձայն ետուն խրախոյս բար- ձին, յարձակեցան միանգամայն ի վերայ եօթա- նասուն հազարաց (70000). առաջինն յանկարծակի յարձակեցան ի վերայ յաջակողմեան գնդի նոցա յաջ և յահեակ կոտորելով»¹:

Ակսվեց սյունեցիներին աղատագրական պայքա- րի ամենաարյունալի օրը: Անակնկալ կերպով հար- ձակվելով թուրքերի աջակողմյան գնդի վրա, հայ քաջերը մեծ իրարանցում ու սարսափ առաջացրին օսմանյան բանակում: Ծակատամարտը գնալով ավելի ու ավելի էր մոլեգնում, զարհուրելի մարտը հնձում էր թուրքական զինվորներին: Թուրքերը «...աղաղակ բարձրացրին, թե քրիստոնյաները կո- տորեցին մեզ», վրա հասնող մութն էլ ավելի է

¹ Դատիթ րէզ, էջ 50:

մեծացնում օսմանցիների սարսափը: Շփոթված թուրքերը կոտորում են նաև մեկմեկու: Խուճապալին աղմուկն անցնում է շարքից շարք, օսմանյան ահռելի բանակն ընկնում է հուսահատության մեջ: Իսկ որքա՛ն ապահովված էին համարում նրանք իրենց հաղթանակը նախքան այս կոտորածի վրա հասնելը: Եվ ահա երերաց, ցնցվեց ենիշերիների անսպարտելի՝ բանակը, հնչեցին նահանջի փողերը, դոռոզ ու ամբարտավան օսմանցին կատաղորեն դիմադրելով ու տալով հսկայական մարդկային կորուստներ, սկսեց դանդաղորեն նահանջել, որը շուտով վերածվեց խուճապահար փախուստի: Հետապնդումը պարտվածների համար կործանարար հետևանք ունեցավ, հայոց քաջերը ամենուրեք հասնում ու անխնա կոտորում էին թշնամուն: Նրանցից շատերը բազմաթիվ անդամներ իրենց վրա զգացել էին Դավթի ու նրա մարդկանց քաջության ուժը, և որովհետև թուրքական բանակից լսվող աղաղակն ու շտեանված կոտորածը գնալով ուժեղանում էր, ուստի թուրքերից ոչ ոք այլևս չէր մտածում դիմադրության մասին, այլ բոլորն էլ հուսահատ ու խուճապահար փախչում էին:

Այդ օրը օսմանյան բանակից ընկավ 12 հազար պատերազմող, իսկ հայերից՝ շատ քիչ մարդիկ: Հայերն այդ օրը թուրքերից խլեցին 148 դրոշ և բազմաթիվ այլ ավար:

Թուրքական բանակի այդ սոսկալի ջախջախու-

մը մի զաժան զատաստան էր թուրքերի կատարած բոլոր գաղանույթյունների համար: Հալիձորի մոտ տարած հաղթանակը ռազմական արվեստի ամենափայլուն նմուշներից մեկն է: Այդ ճակատամարտը մինչ այդ ու դրանից հետո էլ Դավթի Բեկի ավամ բոլոր ճակատամարտերից ամենալիթխալին էր, ամենաարյունահեղն ու ամենակատաղին, սրտեղ հաղթեց հայ ժողովրդի անընկճելի քաջությունն ու ազատասեր ոգին: Հալիձորի մոտ տարած փայլուն հաղթանակը միաժամանակ բարոյական խոշոր հաղթանակ էր թուրքական զավթիչների նկատմամբ: Այդ հաղթանակից հետո արտասովոր շափով բարձրացավ Դավթի Բեկի հեղինակությունը, Մյունչաց լեռների անսպարտելի արծիվը նորից տարածեց իր հզոր թևերը: Ազատագրական պայքարը նոր կյանք ու հոգի, նոր ուժ ու թափ ստացավ: Այդ հզոր հարվածով Դավթի Բեկը նորից դրություն տերն է դառնում, նրան լքած զորքերը վերադառնում են իրենց գերագույն հրամանատարի մոտ:

Ժողովրդական ավանդությունը պատմում է, որ օսմանցիները նոր զորք են հավաքում Հալիձորը պաշարելու համար. Դավթի Բեկը մատակ ձիերի մի երամակ բաց է թողնում նրանց բանակի վրա, թշնամու ձիերը կատաղաբար հարձակվում են մատակների վրա, այդ երևույթը մեծ շփոթություն ու իրարանցում է առաջացնում օսմանյան բանա-

կում, ձիերը կոխկրտում են զինվորներին, իսկ սրանք կարծում են թե թշնամին է հարձակվել իրենց վրա, քանի որ օրը երեկոյանում էր և իրարանցման պատճառը միանգամից չպարզվեց: Օգտւրվելով այդ շփոթութիւնից ու վրա հասնող մթութիւնից, Դավիթ Բեկը հարձակվում է նրանց վրա և զլխովին ջախջախում¹:

Հայ ժողովրդի մեջ աստիճանաբար նորից բորբոքվում է թշնամանքի, վիրավորանքի զգացումն ու վրիժառութեան ծարավը ենիչերինների վայրենի հորդանների նկատմամբ, լեռնանում է համաժողովրդրդական ահարկու դիմադրութիւնը, և Դավիթ Բեկն արդեն մտածում է ամբողջ Սյունիքն անարգ թշնամուց մաքրելու մասին:

Նա որոշում է նախ հարձակվել Մեղրու վրա, բայց լուր առնելով, որ այնտեղ թուրքական մեծ բանակ կա, ժամանակավորապես հետաձգում է արշավանքը՝ բանակը համալրելու նպատակով: Բանակի համալրման համար պատրաստի ուժեր կային Արաբսի մյուս ափում՝ Օրդուբադի դիմաց: Դրանք պատկանում էին շահ Թահմազին և նպատակ ունեին օսմանցիների հարձակումներից պաշտպանել պարսկական սահմանը:

Նվ ահա, Դավիթ Բեկը Մխիթար սպարապետին

¹ Տես, Ազգադրական հանդես, 1904, դիրք XII, Ե. Լալայան, Զանգեզուրի դաւառ, էջ 187:

ու Տեր-Ավետիսին 66 ռազմիկների հետ ուղարկում է պարսկական այդ զորաբաժնի հրամանատար խանի մոտ՝ օսմանցիների դեմ համատեղ ռազմական գործողութիւններ սկսելու առաջարկութեամբ: Խանին նրանք հանդիպում են Դուզազ Քուրդաշան կոչված գյուղում: Սակայն պարսիկ խանը չի համաձայնում Դավիթ Բեկի առաջարկութեանը և միայն 50 զինվոր է տալիս: Այսպիսով, Մխիթար սպարապետի ու Տեր-Ավետիսի հրամանատարութեան տակ եղած ջոկատի թիվն հասնում է 116 հոգու, և նրանք այդ մի բուռն մարդկանցով ձեռնարկում են մի հանդուգն գործ՝ որոշում են գրավել Մեղրին:

Թերևս տարօրինակ թվա, որ Դավիթ Բեկն ավելի մեծ ուժերով չհամարձակվեց հարձակվել Մեղրիի վրա, իսկ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը համարձակվեցին: Պատմական որևէ տեղեկութիւն չկա այս կապակցութեամբ, ամենայն հավանականութեամբ Հալիձորի մոտ օսմանյան բանակի ջախջախման լուրը արագ տարածվել ու արդեն մեծ խուճապ էր առաջացրել նաև Մեղրիում, ուստի Մեղրիի թուրքական փաշան հեռացել էր այդտեղից՝ Մեղրիում թողնելով միայն փոքրաքանակ զորք: Ստ. Շահումյանը հաղորդում է մեր ենթադրութեանը բոլորովին հակառակ մի տեղեկութիւն. նա ասում է, որ Մեղրիի օսմանյան փաշան այդ ժամանակ օգնական ուժեր ստացավ և նրա

զորքի թիվը հասավ 22 հազարի, և իբր թե դրանից հետո է, որ մեր քաջերը գրավում են Մեղրին: Սա բացարձակապես անհավանական է. ինչպե՞ս կարող էին 116 մարդ հարձակվել 22 հազարանոց բանակի վրա: Ըստ էության Մեղրիում մնացած փոքրիկ կայազորը հույս ուներ դրսից մեծ օգնություն ստանալու, և այդ օգնությունն ստանալու դեպքում միայն նրանց ընդհանուր թիվը կհասներ 22 հազարի: Իսկ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը իմանում են այդ մասին և աշխատում են Մեղրիի գրավման իրենց հանդուգն ծրագիրը արագ իրականացնել, քանի ղեռ թուրքերն սպասվող օգնական ուժերը չեն ստացել: Նրանք զալխս են Մեղրու այգիները և հավաքում ու ղինում են օսմանյան բռնություններից փախած ու այդ վայրերում ապաստան գտած հայերին, համապատասխան տեղերում դասավորում են նրանց, իսկ իրենք փորրաթիվ մարդկանցով գիշերը դադարնի մտնում են Մեղրի: Այստեղ ամբողջ գիշերը տենդագին պատրաստություններ են տեսնում, տեղացի հայերից կազմակերպում են նորանոր ղինական ուժեր և մանրամասն բացատրում նրանց անելիքը: Առավոտյան օսմանցիները տեղեկանում են, որ հայերը Մեղրիի շրջակայքում զորքեր են կուտակում, ուստի իրենք նույնպես ղինվում ու պատրաստվում են կռվի:

Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը, երբ

տեսնում են, որ թշնամին իմացել է իրենց պատրաստությունների մասին, այլևս չեն սպասում և իրենց ունեցած մարդկանցով սուսերամերկ հարձակվում են բերդում և զած թուրքերի վրա: Նրանց հաջողվում է կոտորել պահապաններին ու բացել դարբասները: Պատերազմողների գոռում-գոչյունն ու զենքերի շառաչը հասնում է դրսում դարան մտածներին, և ահա, նրանք նույնպես անցնում են հարձակման ու ներխուժում բերդ: Օսմանյան զորարածինը, կարծելով թե մեծաքանակ զորք է հարձակվում իր վրա, խուճապահար դիմում է փախուստի: Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը շտապում են կտրել օսմանյան զորքի փախուստի միակ ճանապարհը, «որն անցնում էր Արաքսի կիրճով, ուր Մեղրիի քարավազներն են, ուր Արաքսի վրա Մեղրիի կողմից ցցվում են ժայռներ, և այդ ժայռերով էլ անցնում է դժվար ու երկար ճանապարհը, որ թուրքերեն լեզվով կոչվում է Ուզուն-Բենդ (Երկար անցք)»¹:

Օսմանցիները մտնում են կիրճն ու ընկնում թակարդի մեջ. մի կողմից Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսն էին, մյուս կողմից մեղրեցիները: Օսմանցիներն ստիպված են լինում անցնել Արաքսով: Այդ անցման ժամանակ հայերը կոտորում են նրանցից շատերին, մի մասն էլ խեղդվում է գե-

1 Առ. Հայոց պատմություն, հատ. 3, էջ 691:

տում: Կոտորածից շատ քչերն են ազատվում: Մեղ-
րեցիները վերցնում են շափաղանց մեծ ավար,
սպանում են թուրքական հարկահանին, որի մոտ
գտնում ու այրում են 32 հազար հատ հարկահա-
նության ցուցակներ¹:

Ղափանցիների ազատագրական սլաշքարի երկ-
րորդ շրջանի այս երկրորդ հաղթանակը՝ Մեղրիի
գրավումը, է՛լ ավելի ամրապնդեց Դավիթ Բեկի
ուժն ու հեղինակությունը, նորանոր ուժեր համա-
խմբվեցին նրա գրոշի ներքո, թշնամին նորից զգաց
հայոց գյուցազնի ներկայությունը:

Մեղրիի գրավումից որոշ ժամանակ հետո, օս-
մանյան փաշան մեծաքանակ զորք է հավաքում ու
գալիս բանակում է Բեխ կոչված գյուղում: Դավիթ
Բեկը գիշերով անակնկալ հարձակվում է նրանց
վրա, կոտորում է մեծ մասին, իսկ մնացածին էլ
փաշայի հետ միասին փախուստի մատնում:

Օսմանյան մի այլ զորաբաժին, բաղկացած 800

¹ Այս կասկածությանը Ստ. Շահումյանը գրում է, որ
Արաբսի մոտ թուրքերին կոտորելուց հետո հայերը «...անտի
դարձ արարին և եկին հասին ի Մեղրի, և անդ գտին զանբա-
կառափունս Թուրքաց, զանհամար ձիս և զզորիս նոցա, զան-
շափ գոյս նոցա, իբրև շորեր հարկու տաղանդոյ ինչս, զբեւն
հարկահանին բացին, և անդ երեսուն և երկու հազար թուղթս
հարկաց գտին, և զայն ամենայն ի հուրն այրեցին: և և զՓաշ-
տեցի նորվիլն գտին, որ էր ուրացեալ զՔրիստոս, վասն
այսօրիկ զգլուխն հատին» (Դավիթ Բեգ, էջ 56):

հոգուց, ավարառության նպատակով Բարդուշատից
շարժվում է դեպի Տաթև: Հայերը նորից կիրառում
են գիշերային հարձակման իրենց փորձված տակ-
տիկան, կտրում են Օքսուզ-Զիարաթ անունով
լեռնանցքը, կոտորում են 36 թուրք, 7 հոգու գերի
են վերցնում, իսկ մնացածներին փախուստի մատ-
նում:

Օսմանցիները մի երրորդ փորձ ևս կատարում
են Սյունիք ներթափանցելու համար. նրանց մի
փոքր զորաբաժին գալիս բանակում է Մանլեի մոտ
թուրքական մի գյուղում: Դավիթ Բեկի քաջերը նո-
րից գիշերով հարձակվում ու բնաջնջում են նրանց,
կենդանի են մնում միայն երկու հոգի, որոնց և
բերում են Հալիձոր:

Այսպիսով, օսմանցին դուրս էր շարտված երկ-
րից, իսկ տեղական խաներն ու բեկերը հնազան-
դեցված կամ ոչնչացված էին: Ազատագրական
պայքարը Սյունյաց լեռնաշխարհում պսակվում է
հաջողությամբ շնորհիվ իրենց՝ հայերի, իրոք հե-
րոսական ու փառավար ռազմական գործողությու-
ների, որոնք գլխավորում էր Դավիթ Բեկը:

Դավիթ Բեկի զորավարական տաղանդի հետ
միացած էր նաև հմուտ դիվանագետը: Նրա ամն-
նանշանակալից դիվանագիտական հաղթանակը
անկասկած այն կտրուկ շրջադարձն է, որ նա կա-
տարում է Իրանի նկատմամբ վարվող քաղաքա-

կանութեան մեջ: Ձեռք բերած ազատութիւնն ու անկախութիւնը ավելի ամուր հիմքերի վրա դնելու համար Դավիթ Բեկը ցուցաբերում է մեծ շրջահայեցողութիւն, նա կարողանում է ճիշտ գնահատել ստեղծված արտաքին իրադրութիւնը, ուժերի նոր հարաբերակցութիւնը, այն, որ Իրանը պատերազմում էր Թուրքիայի դեմ: Այդ հանգամանքը հնարավորութիւն է տալիս մերձենալ Իրանին, բարեկամութիւն ու դաշնակցութիւն հաստատել իր երեկվա թշնամու՝ շահ Թահմազի հետ և, դրանով հենց, ամրապնդել իր տարած հաղթանակը Թուրքիայի դեմ:

1727 թվականին Դավիթ Բեկը բարեկամական առաջարկներով դիմում է շահ Թահմազին, որն այդ ժամանակ իր աթոռանիստը դարձրել էր Քավրիզ քաղաքը, և ձեռնարկներն հպատակութիւն է հայտնում նրան, ապա, որպէս իր սխրագործութիւնների ապացույց, շահ Թահմազին շորս բեռ օսմանյան կտրած գլուխներ է ուղարկում: Բայց, իհարկե, թուրքերի այդ գլուխները չէին, որ ցնցող տպավորութիւն գործեցին շահ Թահմազի վրա, այլ Հալիձորի ու Մեղրիի հերոսամարտերը, որոնց շնորհիվ Դավիթ Բեկը կարողացել էր գրեթէ ամբողջ Սյունիքն ազատել օսմանյան թուրքերից, և որի համար էլ հենց թահմազը Դավիթ Բեկին ճանաչում է Սյունիքի կիսանկախ իշխան ու նրա իշխանութեանն է հպատակեցնում տեղական խաներին ու բեկերին:

Այս կապակցութեամբ գրված շահական հրովարտակում ասված է.

«Պարսից Շահ-Թահմազ արքայից քաջ Դավիթ Բեկին և Հայոց քաջ զորավարներին, որոնք քեզ հետ են՝ ողջո՛ւյն: Բազմաթիվ անգամներ մեզ հայտնի է եղել քո քաջութիւնները, բայց այժմ ականատես եղանք ձեր մեծամեծ քաջութիւններին ընդդեմ մեր թշնամիների: Ահա, այժմ քեզ իշխան եմ նշանակում, և գլխավոր մեր բոլոր իշխանների, որոնք քո կողմումն են. և Գափանի երկիրը, որ քաջութեամբ առար՝ քեզ լինի: Բայց դու պետք է ելնես և քեզ մոտ հավաքես բոլոր զորքերը և այդ քո կողմում եղած խաներին, և քո սահմաններից դուրս հանես օսմանցիներին»¹:

Սույն հրովարտակի հետ թահմազը Դավիթ Բեկին ուղարկում է վասալական նշաններ՝ մի խաչվառ (դա առանձին դրոշ է, որ տանում էին առջեից) և մի հիանալի նժույգ, իսկ զորապետներին էլ մեկական պատմուճան: Այնուհետև Դավիթ Բեկի մոտ գալիս ու հնազանդութիւն են հայտնում տեղական բոլոր մահմեդական իշխանավորները: «Եւ եկին հնազանդեցան նմա ափենայն իշխանք և գաւառապետքն Թուրքաց», — ասում է Ստ. Շահումյանը²:

¹ Դավիթ բեգ, էջ 58—59:

² Նույն տեղում, էջ 59:

Շահ թահմազը Դավիթ Բեկին իրավունք է տալիս նաև դրամ կտրելու. այդպիսի իրավունք ոչ բոլոր վասալներն էին ունենում, դա գրեթե հավասարազոր էր լրիվ անկախության:

Դավիթ Բեկի կտրած դրամի մի երեսին գրված է շահ թահմազի անունը, իսկ մյուս երեսին գրված է «Քրիստոսի ծառայ Դավիթ»¹:

Հաջողությունները թևավորում են իշխանաց իշխան Դավիթ Բեկին: Սյունիքի հերոսն արդեն նպատակ է դնում մաքրել օսմանցիներից Արաքսի ամբողջ հովիտը մինչև Նախիջևան: Այդ նպատակի համար նա գնում է Մեղրի, այդտեղ է հավաքում իր բոլոր զորքերը, ապա անցնում է Կրճիվան ավանը, ինքը մնում է այնտեղ, իսկ Մխիթար սպարապետին ու Տեր-Ավետիսին արշավանքի ուղարկում Օրդուբադի վրա: Վերջիններս հարձակվում են իրենց սիրած եղանակով՝ զիշերով, և կոտորելով օսմանցիներից 300 հոգի, ստիպում են նրանց թողնել քաղաքը: Օսմանցիները բանակում են քաղաքից դուրս, իսկ հայերը, փոխանակ հետապնդելու և զլխովին ջախջախելու թշնամուն, զբաղվում են քաղաքում ավարատությունը ու կերուխումով: Այդ ժամանակ Օրդուբադ է հասնում նաև Դավիթ Բեկը

¹ Աղզազրական հանդես, 1904, գիրք XII, Ե. Լալայան, Հանդեզուրի գաւառ, էջ 185:

ու խիստ զայրանում է նրանց վրա, ասելով. «Ձեր թշնամին քաղաքից դուրս բանակ է գրել, իսկ դուք այստեղ նստած ուտում և խմում էք»: Նույն ժամին հայ զորքը թողնում է կերուխումը, նստում ձիերը և հարձակվում օսմանյան բանակի վրա: «Բսկ նրանք երբ այդ զորքը տեսան՝ կարծեցին թև պարսկական զորք է, և դուրս եկան նրա դեմ պատերազմելու, սակայն, երբ փորձով համոզվեցին ու տեսան, որ դա Դավիթ Բեկի զորքն է՝ փախուստի դիմեցին»: Ահա թե որքան մեծ էր Դավիթ Բեկի համբավն ու թողած սարսափը օսմանյան բանակի վրա:

Հայ զորքերը մեծ բանակությամբ անասուններ ու ալլ ավար վերցնելով շարժվում են Դեշտ կողմում ավանը: Այստեղի թուրքերը տեսնելով հայ զորքերի մոտենալը՝ փախչում են ու մտնում Ազուլիս քաղաքը: Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը նրանց հետևից հետապնդումը շարունակելով գալիս են Ազուլիս. քաղաքի պահապանները անակընկալի եկած թողնում են զարբասներն ու հեռանում, իսկ մեր երկու հերոսները փոքրաթիվ մարդկանցով անարգել մտնում են քաղաքը, կոտորում են քաղաքում եղած փոքրաթիվ օսմանցիներին, ապա գնում բանակում են քաղաքից դուրս՝ Քովմա Առաքյալի վանքում: Շուտով հիմնական ուժերով Ազուլիս է գալիս նաև Դավիթ Բեկը. բնակիչներն ուրախությամբ ու ցնծությամբ են դիմավորում

նրան, համբուրում են ձեռքը (դա հնազանդության հայտնելու նշանն է):

Ի նշան տարած հաղթանակի, Դավիթ Բեկը նոր զգեստներ է բաժանում իր ռազմիկներին: Մեղ սնհայտ պատճառներով Աղուլիսի քաղաքապետ մելիք Մուսին կասկածելի է երևում Դավիթ Բեկի աչքում և Բեկը հրամայում է զլխատել Մուսիին: Սակայն մելիք Փարսազանը բարեխոսում ու երաշխավոր է լինում Մուսիի համար ու կարողանում է նրան ազատել մահից, որի համար շուտով ամբողջ հայ զորքը զոչում է:

10 օրվա բնթացքում թուրքերը երեք անգամ հարձակվում են Դավիթ Բեկի զորքի վրա և երեք անգամն էլ պարտություն կրում: Այդ ժամանակ Դավիթ Բեկը օգնական զորք է ստանում Իրանից. շահ Թահմազը երեք խաների զլխավորությամբ մի զորաբաժին է ուղարկում նրան: Հայ-պարսկական բանակը մի անգամ ևս ջախջախիչ հարված է հասցրնում օսմանյան բանակին:

Դրանից երկու օր հետո օսմանցիներն հավաքում են մի մեծաթիվ բանակ և զալիս բանակում են Մարաղայի դաշտում: Դավիթ Բեկը պատրաստվում է վճռական ճակատամարտի: Նա իր զորքը բաժանում է երեք մասի՝ մի կողմում պարսկական զորքն է, երկրորդ կողմում հայերը՝ Դավիթ Բեկի զլխավորությամբ, որը և հիմնական հարվածող ուժն էր, իսկ երրորդ կողմում՝ Արաքսի կողմից

Տեր-Ավեսիան էր իր զորաբաժնով: Ճակատամարտի ետուն պահին, շղիմանալով թուրքերի ճնշմանը, պարսիկները փախուստի են դիմում: Սակայն հայ-կական զորքը ամուր կանգնում է իր դիրքերում և շուտով սկսում է նեղել թշնամուն: Եվս մի փոքր ճնշում և թուրքական բանակը տալով մեծաթիվ զոհեր՝ խուճապահար փախուստի է դիմում: Այդ փայլուն հաղթանակից անմիջապես հետո հայկական զորքը հետապնդում է փախստական պարսիկներին, որոնք ճողոպրում էին զեպի Թավրիզ, հասնելու, որոնք ճողոպրում էին զեպի Թավրիզ, հասնում ու շրջապատում է նրանց և հարկադրում վերադառնալ Աղուլիս: Սակայն խաներին հաջողվում է փախչել, հայերի ձեռքն է ընկնում խաների հարեմները՝ իրենց տիկիներով, ազախիներով ու ներքինիներով հանդերձ:

Այս զեպքերից հաղիվ երկու օր անց պարզվում է, որ Աղուլիսի հայերը իրենց քաղաքապետի զբլխավորությամբ առերես էին միայն հպատակված Դավիթ Բեկին, իսկ ծածկաբար շարունակում էին զանազան ծառայություններ մատուցել օսմանցիներին: Եվ ահա, նրանք բացահայտորեն դավաճանում են: Դափանցիների հերոսամարտերի պատմության փառավոր էջերը կեղտոտվում են այս եր-

1 Մահմեդականները արշավների գնալիս սովորությունն էին իրենց հարեմները հետները տանելու Ամենամեծ խաչատուակությունը մահմեդականի համար դա նրա հարեմի գերվելն էր:

րորդ դավաճանի՝ մեկիք Մուսիի, քստմնելի գործերով:

Դավիթ Բեկի՝ Ազուլիս արշավելու ժամանակ, այդ վաճառաշահ քաղաքի բնակիչները բաժանված էին երկու խմբակցությունների, որոնցից մեկն ուներ պարսկական օրիննտացիա, իսկ մյուսը՝ թուրքական: Ընդ որում, թուրքական օրիննտացիա ունեցողները բնակչության ավելի ստվար մասն էին կազմում. սրանց պարսղուխն էր դավաճան մեկիք Մուսին: Նրանք մտածում էին թուրքերի միջոցով ընդլայնել իրենց առևտրական կապերը օսմանյան լայնածավալ կայսրության մեջ: Եվ այսպես, կընելով միայն իրենց նեղ առևտրական շահերից, ազուլիսցիները դավաճանեցին հայրենիքի ազատագրության ընդհանուր գործին: Նրանք մեկիք Մուսիի գլխավորությամբ հարձակվեցին քաղաքում եղած հայ զորականների վրա, կոտորեցին նրանց, ապա զնացին պաշարեցին Թուլմա Առաքյալի վանքը, որտեղ գտնվում էր Դավի Բեկն իր հիմնական ուժերով:

Դավիթ Բեկը շջանկացալ եղբայրասպան պատերազմ սկսել: Ազուլիսում ապրում էին 10 հազար հայ ընտանիքներ (մոտ 50.000 մարդ) և պատերազմի զեպքում շատ անմեղ հայեր կարող էին սուժել, ուստի մեկիք Փարսաղանը բարձրանում է պարսպի վրա և դիմելով Մուսիի զորքին ասում. «Եղբայրներ, հանդարտ լսեցեք, ոչ մի հրացան մի

արձակեք, թույլ տվեք, որ մեր տերը դուրս գա գնա, դուք էլ գնացեք ձեր քաղաքը, և մինչդեռ խաղաղության այդ միջնորդը պարսպանների վրայից խաղաղություն էր բարբառում՝ զնդակահարեցին նրան, այն մարդուն, որը փրկել էր մեկիք Մուսիի կյանքը»¹:

Դավիթ Բեկն համոզվեց, որ խաղաղությամբ ոչ մի արդյունքի չի հասնի, ուստի գիշերը քանդելով վանքի պարսպի մի կողմը, իր զորքերով հեռանում է այգոնդից և մոտակա թուրքական մի գյուղում է ավար աննկելով ազուլիսցիների քաղմաթիլ ձիեր, ջորիներ, 1300 ոչխար, ինչպես նաև շատ այլ ապրանքներ՝ զնում է Մեղրի:

Այդ զեպքից որոշ ժամանակ անց ազուլիսցիներն իրենց թուրքասիրությամբ նորից զրգոում են Դավիթ Բեկի բարկությունը, և Բեկը մեծ ուժերով Դավիթ է պատժելու նրանց, սակայն քաղաքը դրազալիս է պատժանում: Դրա փոխարեն, շրջապատում վել չի կարողանում: Դրա փոխարեն, շրջապատում ամեն ինչ, որ պատկանում էր ազուլիսցիներին, ավերելով ու թալանելով՝ նա Մեղրիի վրայով վերադառնում է Հալիձոր:

Ազուլիսի վատ օրինակը վարակիչ հետևանքներ ունեցալ, այդ օրերին Դավիթ Բեկի դեմ ապստամբում է Չավնդուրը և հպատակվում է օսմանցիներին: Դավիթ Բեկը իր զորապետներից 14 հոգու

¹ Դավիթ բեկ, էջ 64:

իրենց զորքերով հանդերձ ուղարկում է Չավինդուրի ապստամբությունը ճնշելու: Զորապետները կատարում են իրենց տրված հանձնարարությունը և ապստամբության ղեկավարներին ու օսմանյան սլաշտոնյաներին ձերբակալելով բերում են Հալիֆ-ձուր՝ Դավիթ Բեկի մոտ: Նրանք սկսում են աղաչել ու երգվել Դավիթ Բեկին, որ այնուհետև հավատարիմ կանան նրան: Բեկը լիովին չի հավատում նրանց և երկու հոգու պատանդ է թողնում իր մոտ, իսկ մնացածներին աղատություն է տալիս:

Նորից ասպատակություններ է սկսում Սյունիքի մշտական թշնամին՝ Բարդուշատի Ֆաթալի խանը: Նա մեծ զորքով գալիս կողոպտում է երեք հայկական գյուղեր ու երկու հայ զորապետների գերելով վերադառնում Բարդուշատ: Ի պատասխան դրա, Տեր-Ավետիսը զիշերային մի հարձակում է գործում Բարդուշատի վրա, վերցնում է հարուստ ավար ու գերիներ և վերադառնում:

Այդ օրերին Սյունիքի ժողովրդական-ազատագրական պայքարը կրում է մի շատ ծանր ու անպառնալի կորուստ: 1728 թվականին, Հալիֆորում, իր տանը, հիվանդությունից մահանում է Դավիթ Բեկը, այն մարդը, որ մոտ 7 տարի շարունակ, զենքը ձեռքին քաջաբար մարտնչում էր պարսկական ու թուրքական բռնապետությունների դեմ, այն մարդը, որ իր համառ ու տևական ռազմական ու վարչական անխոնջ գործունեության շնորհիվ կա-

ռողացավ իրագործել Սյունիքի հայության ազատագրական ձգտումները և Սյունիքը դարձնել զրեթե անկախ մի իշխանություն, գլխավորապես հենվելով հայ ժողովրդի, հայ գյուղացիության ուժերի վրա: Ըիշտ է, շարժումը գլխավորում էին ֆեոդալ-կղերական տարրերը, առևտրականները և մասնակցում էին, բայց զորքը, ազատագրական պայքարի այդ գլխավոր շարժիչ ուժը հիմնականում կազմված էր գյուղացիությունից և աշխատավորական այն տարրերից, որոնց այնքան հմուտ կերպով կարողացավ համախմբել Սյունիքի անմոռաց հերոսը՝ Դավիթ Բեկը: Նա իր անմահ գործերով մնաց որպես մի եզակի ու անկրկնելի երևույթ, որպես հայ ժողովրդի անցյալի պատմության մրդաձավանջային օրերը լուսավորող մի պայծառ աստղ, որ փայլեց հայոց մթնամած երկնակամարում և սերունդների հիշողության մեջ անջնջելի հիշատակ թողեց:



Դավիթ Բեկի մահից հետո նրա զորավարներն իրենց իշխան են ընտրում Մխիթար սպարապետին:

Պատմիչի խոսքերով ասած՝ Մխիթար սպարապետը «...վերջին մխիթարին Հայոց, որ իբրև կորին առիժոյ գոշեաց ի լերանցն Սիւնեաց, և ի

նմանէ սասանեցան ամենայն գազանք ի մորիս
խրեանց, և էջ և յափշտակեաց զյափշտակութիւն ի
միջոյ գազանաց: Եհար՝ խորտակեաց զեղջիրս
հպարտաց, հատոյց զտահուցումն եօթնապատիկ ի
զլուխս թշնամեաց, և յամօթ արար զմեծամեծս
հեթանոսաց, և յաւար էառ զփառս նոցա առ ի
մխիթարեալ զաղզն Հայոց տղջոյն»¹:

Ռազմական ընդունակությունների տեսակետից
Մխիթարը կարող էր լիովին փոխարինել Դավիթ Բեկին,
սակայն նա շուներ Դավիթ Բեկի վարչական
ու ղիվանստգիտական միտքը: Մխիթարը չկարողա-
ցավ համերաշխութեանը պահպանել զորքի ու երկ-
րի մեջ, նրա հետ գծուկեց Սյունիքի մյուս փառա-
պանծ հերոսը՝ իր ռազմական ընկեր Տեր-Ավետի-
սը: Այստեղ, օբյեկտիվ գործոնների հետ միասին,
անշուշտ դեր խաղացին նաև փառասիրությունն ու
նախանձը. Տեր-Ավետիսը ոչնչով պակաս չէր Մխի-
թարից և ինքն էր ձգտում ստանալ Դավիթ Բեկի
ժառանգությունը, մանավանդ, որ ինքը տեղացի
էր, իսկ Մխիթար սպարապետը, ինչպես ցույց է
տալիս նրա գերեզմանաքարի վրայի արձանագրու-
թյունը, եկվոր էր, զանձակեցի: Տեր-Ավետիսը
պայքարից ղիմադարձ եղավ հիմնականում այն
պատճառով, որ թուրքերին ղիմադրելը այլևս ան-
հնարին էր համարում. ազատագրական պայքարի

համար ստեղծվել էին նոր, անբարենպաստ պայ-
մաններ, և Տեր-Ավետիսը զլուխ խոնարհեց թուր-
քական զորութեան առաջ:

Մխիթար սպարապետն ընդամենը մեկ տարի
միայն մնաց Հալիձորում: Այդ մեկ տարվա ըն-
թացքում Տեր-Ավետիսն այնքան ստորացավ, որ
հասավ մինչև իր հայրենիքին զավանձանելու աս-
տիճանին. նա հակվեց դեպի օսմանցիները:

Օսմանցիները նորից իրենց զորեղ զգացին
Սյունիք ներխուժելու համար. չկար Դավիթ Բեկը,
ավելին, Մխիթարին հավասար Տեր-Ավետիսը այժմ
ոչ թե նրա հետ էր, այլ նրա դեմ: Բացի դրանից,
1729 թվականին թուրքական կառավարութունը
խոշոր ուժեր ուղարկեց Ղարաբաղ և հրով ու սրով
ընկճեց զարաբաղցիների ղիմադրությունը: Այդ
հանգամանքը օսմանցիներին հնարավորություն
տվեց Ղարաբաղում եղած զորքերը նույնպես ուղղել
Սյունիքի դեմ, և 1729—1730 թվականներին թուր-
քիան ծավալուն հարձակման անցավ Դավիթ Բեկի
ստեղծած իշխանությունը ոչնչացնելու նպատա-
կով:

1729 թվականին թուրքերը պաշարում են Հալի-
ձորը. նրանց բազմությունը սարսափ ու հուսահա-
տություն է առաջացնում բերդում, ծայր է առնում
անմիաբանությունը: Բերդականները Տեր-Ավետի-
սին երկու անգամ զորապետների հետ ուղարկում են

¹ Դավիթ Բեկ, էջ 74—75:

օսմանյան փաշայի մոտ խաղաղության առաջարկով: Փաշան երդվում է, որ անձնատուր լինելու դեպքում բերդին ոչ մի վնաս չի տա:

Մխիթար սպարապետը տեսնելով Տեր-Ավետիսի դավաճանական ու քայքայիչ գործունեությունը, գիշերը միայնակ ու հուսահատ հեռանում է Հալի-ձորից, այնտեղ թողնելով կնոջն ու երեխաներին: Իսկ առավոտյան բերդի դռները բաց են անում օսմանցիների առաջ: Երդմնադանց փաշան կոտորում է բերդում եղած բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու մանուկներին՝ դերի վերցնում: Թուրքերը մտնում են նաև կուսանոցը և գերում բոլոր կույսերին: Նրանք քանդում են բերդի պարիսպները և ավերակների վերածում այն, ապա վերցնում են իրենց ամբողջ ավարը, այդ թվում Մխիթարի կնոջն ու որդիներին, և հեռանում:

Այս դեպքը խորապես ցնցում է Տեր-Ավետիսին և նրա մեջ արթնացնում իր նախկին կրոնական ջերմեռանդությունը, զգում է, որ ինքը, կրոնի մի պաշտոնյա¹, այնքան արյուն է թափել, այնքան քաշագործություններ ու վերջն էլ դավաճանություն է կատարել, և թողնում է այդ երկիրը ու գնում բնակվում Երուսաղեմում, որտեղ բազմաթիվ ասպաշխարություններից հետո, Ամենայն Հայոց կաթո-

¹ Մինչև աղատադրական պայքարին սուրը ձեռքին մասնակցելը Տեր-Ավետիսը օձված է եղել քահանա:

ղիկոս Աբրահամի հաճությամբ ու համաձայնությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքից ներում է ստանում:

Ստ. Շահումյանի գրքի հրատարակիչ Ա. Գուլամիրյանցը Չամչյանի մոտ կարդացել է, որ Տեր-Ավետիսը գնում և Հոռմի պապից է ներում ստանում, և զարմանք է հայտնում, թե ինչո՞ւ լուսավորչական հայ Տեր-Ավետիսը պետք է գնար կաթոլիկ Հոռմի պապից ներում ստանար¹: Այլ ձեռագրերում, սակայն, գրված է, որ Տեր-Ավետիսը ներումն ստանում է իրոք Հոռմի պապից²:

Մենք կարծում ենք, որ սվլյալ դեպքում Գուլամիրյանցը ճիշտ ուղղում է կատարել իր հրատարակած տեքստում: Իրոք, ի՞նչ հարկ կար Տեր-Ավետիսին Հոռմ հասնելու, քանի որ նա ուներ իր հավատակից կաթոլիկոսն ու պատրիարքը: Այստեղ կեղծիքն ըստ էության կրոնասիրական նկատառումներով՝ Հոռմի հեղինակությունն ընդգծելու իմաստով, կատարել է Շահումյանի պատմության գրառողը՝ Մխիթարյան միարանություն կաթոլիկանդամ Ղուկաս վարդապետ Ստեփանյան Սերաստացին, որից, որպես հիմնական աղբյուրից, արտագրվել են նաև մյուս ձեռագրերը:

¹ Տես, Դաւիթ Բէգ, Գուլամիրյանցի ծանոթագրությունը 70-րդ էջում:

² Տես, Աբարատ, 1905, էջ 83—84:

Որտեղ էլ ստացած լինի իր ներումը, պատմության դատավճիռն անողոք է, ոչ մի ապաշխարանք ու կրոնական ներում չեն մաքրի դավաճանի անունը, դավաճան, որի պատճառով թշնամին առաջին անգամ մտավ Դավիթ Բեկի անառիկ ամրոցը՝ Հալիժոր:

Մխիթար սպարապետը, հավատարիմ ազատագրական պայքարի շահերին, ամեն կերպ աշխատում էր Սյունյաց լեռներում վառ պահել Դավիթ Բեկի սկսած սրբազան գործը: Անխոնջ եռանդով նա նորից սկսում է հայ զորքեր հավաքել: Բաղմաթիվ տեղերում շատ անգամ կոտորում է թուրքական բանակները, արշավում է նաև Օրդուբադի վրա և այն նույնպես ազատագրում թուրքական հրոսակներից, ապա, վերցնելով մեծ ռազմավար գնում է Ջանգեզուրի խնձորեսկ բերդում միառժամանակ հանգիստ առնելու:

Սակայն խնձորեսկի մի խումբ հայերի կողմից թշնամություն բարբոթվեց իրենց իսկ ազատության համար պայքարող այդ տաղանդավոր ու հաղթական զորապետի դեմ: Նրանք երկյուղ ունեին, թե թուրքերը կգան և իրենց էլ հալիժորցիների նման կկոտորեն: Այդ վտանգից ազատվելու համար 1730 թվականին նրանք զնդակահարում են Մխիթար սպարապետին, իսկ իրենք դառնում են

«...օտարների կամավոր ստրուկը, ինչպես որ առաջ էին...»¹:

Խնձորեսկցիներն ստորանում են այն աստիճան, որ կտրում են Մխիթար սպարապետի գլուխը և ստրկաբար ընծա տանում Թավրիզի փաշային, սակայն փաշան սաստիկ զարմանում է՝ տեսնելով այդ եղեռնագործությունը, և ասում. «...այ անօրեններ ու անբարիշտներ, ինչպե՞ս համարձակվեցիք... սպանել ձեր տիրոջը, որ այնպիսի քաջ մարդ էր»² և հրամայում է բոլորի գլուխն էլ կտրել: Այսպես է ռազմասեր փաշան վարձահատույց լինում ստոր դավաճաններին, նա կարողանում է դնահատել քաջ մարդուն և հարգել նրա հիշատակը:

Մխիթար սպարապետի ստոր սպանությունից հետո հայ զորքերը աստիճանաբար ցրվում են զանազան կողմեր:

Սրանով վերջանում է Սյունիքում ծավալված ժողովրդական-ազատագրական պայքարը, հայ ժողովրդի հերոսական պատմության փառավոր էջերից մեկը:

Տաղանդավոր զորավար Դավիթ Բեկի գլխավորած՝ սյունեցիների ժողովրդական-ազատագրական պայքարը XVIII դարի առաջին կեսի ամենանշանակալից դեպքն է Հայաստանում: Ճիշտ է, այդ

1 Դավիթ բեգ, էջ 71:

2 Դավիթ բեգ, էջ 71—72:

պայքարը պարտութիւն կրեց, բայց նա մեծագոյն
պատմական նշանակութիւն ունեցաւ: Այդ պայ-
քարը ցույց տվեց, որ ազատասեր հայ ժողովուրդը
չթուլացող եռանդով միշտ պատրաստ է եղել պայ-
քարելու օտար լծի դեմ:

*Եւ իր վերջին կայքարը
նեւ լաւ իր ազատասիրտ իր շնորհակալութեամբ:*

5. ՍՅՈՒՆԵՅԻՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Թուրքական ու պարսկական բռնապետութիւն-
ների ահաւոր լծի տակ տրոբվող, կեղեքվող ու
ճնշվող հայ ժողովրդի մի հոծ զանգվածի՝ սյունե-
ցիների ժողորդական-ազատագրական պայքարը,
չնայած ժամանակավոր հաջողութիւններին, վեր-
ջացաւ իր ժամանակի համար անխուսափելի պար-
տութեամբ:

Անդրկովկասում հաստատվեց թուրքական բար-
բարոս ուժիմը, որն իր գազանային դեմքը դեռ
պետք է ցույց տար՝ իր միջավայրից ծնելով մի
արշունարբու սուլթան Համիդը, կամ թե մի դահիճ
Թալլաթ փաշա: Օսմանյան մահաբեր շունչը փչեց
Անդրկովկասի վրա և Սյունյաց լեռնաշխարհի հե-
րոսական ապստամբութիւնը պարտվեց: Պարտու-
թյան հիմնական պատճառները հետևյալներն էին.

1. Այն ժամանակվա պայմաններում հայ ժողո՞ր

վորդը շէր կարող միայն իր ուժերով, ինքնուրույն կերպով փշրել ստրկութեան դարավոր լուծը և հասնել տնտեսական ու քաղաքական ինքնուրույնութեան ու անկախութեան. շափաղանց շատ էին նրա թշնամիները, անհրաժեշտ էր դրսի օգնութիւնը: Այդ հարցում հայ գործիչները բաժանվում էին երկու խմբի. մի մասը այդ օգնութիւնն սպասում էր Արևմտյան Եվրոպայից, դս: խարուսիկ մի պատրանք էր, որը շատ երկար ժամանակ կաշկանդել էր ինքնուրույն շարժումների ծավալումը: Իսկ մյուս մասը սկսել էր իր հուշքը դնել Հյուսիսի այն նոր հզոր ուժի վրա, որն հետագայում իրոք կարողացավ փրկել Անդրկովկասի ժողովուրդներին պարսկա-օսմանյան բռնակալութիւնից: Այդ հզոր ուժը Ռուսաստանն էր, սակայն այն ժամանակ Ռուսաստանը չկարողացավ գործուն աջակցութիւն ցույց տալ, որովհետև միջազգային արեւայում ուժերի հարաբերակցութիւնը բացահայտորեն փոխվել էր ի վնաս նրան: Ռուսական կառավարութեան մտադրութիւններին խանդարեցին այնպիսի հզոր ուժեր, ինչպես Անգլիան ու Ֆրանսիան: Հիշենք թեկուզ այս փաստը. երբ Պետրոս կայսրը 1722 թվականին ձեռնարկում էր իր Պարսկական արշավանքը, Թուրքիայում Ֆրանսիայի դեսպան դը Բոնակը նախազգուշացնում է ռուսական դեսպան Ի. Ի. Նիպլյուսին, որպիսով ռուսները չեն խնդրեն Անդրկովկաս, այլապես Թուրքիան ստիպ-

ված կլինի զենքով միջամտել: Անգլիական կառավարութիւնը բացահայտորեն դրամական սուբսիդիա էր խոստանում Թուրքիային, եթե նա պատերազմ սկսեր Ռուսաստանի դեմ և թույլ չտար Ռուսաստանին Անդրկովկաս մտնելու:

Քսանամյա Հյուսիսային պատերազմից հետո Ռուսաստանը ի վիճակի չէր մի նոր ահեղ գոտեմարտ սկսել Թուրքիայի հետ և ստիպված է լինում 1724 թվականի հունիսի 12-ին նրա հետ կնքել Կոստանդնուպոլսի պայմանագիրը, որով գրեթե ամբողջ Անդրկովկասը մնաց Թուրքիային: Ահա թե ինչպես լուծվեց Արևելյան հարցը:

Բազմաշարժար հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդները նորից մնացին ասիական բռնակալական լծի տակ:

2. Սյունիքի և Ղարաբաղի աղատագրական պայքարը ընայած լայն արձագանք գտավ Հայաստանի մի շարք մասերում՝ Լոռիում, Կարբիում, Երևանում, նույնիսկ հեռավոր Վասպուրականում, Երևանում, համաժողովրդական ապստամբութիւն. նույնիսկ Սյունիքն ու Ղարաբաղը գործում էին իրարից գրեթե առանձնացած: Եվ դա հասկանալի է: Երկրում տիրապետող էին ֆեոդալական հարաբերութիւնները, որոնք արտահայտվում էին տնտեսա-

գործողութիւնների, որոնք քայքայել էին երկրի առանց այն էլ աղքատ տնտեսութիւնը: «...Ձի որ-պէս միաբանութիւնն հողի է և կեանք ամենայն հասարակութեան, նույնպէս և հակառակն սորին, այսինքն անմիաբանութիւնն եղծիչ է, և սատակիչ ամենայն հասարակութեան»¹, — գրում է Շահում-յանը: Սակայն նա ևս միակողմանիութեան մեջ է ընկնում, երբ կարծում է, թէ ազատագրական պայքարի անհաջող վախճանի միակ պատճառը անմիաբանութիւնն է:

Իրականում, ազատագրական պայքարի պարտութեան հիմնական պատճառը երկրի ներքին ու արտաքին ընդհանուր տնտեսական ու քաղաքական անկայատ իրադրութիւնն էր:

¹ Դաւիթ բէգ, էջ 74:

ՐՈՎԱՆՊԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
1. Արևելյան Հայաստանը XVIII դարի 20-ական թվա- կաններին	9
2. Դաւիթ Բեկը Սյունիքում	58
3. Ղափանցիների սկզբնական պայքարը տեղական խա- ների դեմ	91
4. Թուրքական արշավանքները դեպի Սյունիք	115
5. Սյունեցիների ազատագրական պայքարի պարտու- թյան պատճառները	157